1898
ԹԻՒ Բ· ՓԵՏՐՈՒԱՐ
ԵՐԵՍՆԵԱՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ԱՐԱՐԱՏ



ՏՊԱՐԱՆ Մ· ԱԹՈՌՈՅ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ·

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. Քրիստոսի փորձութիւնն անապատում . . . կ. վ. . 51
2. Յիսուսի Նազարէթում անցրած խաղաղ տարիները . . 55
3. Շէքերների աղանդը . . . . . Գ. Դ. . 58
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . . . . 63
5. Մկրտիչ Նաղաշ . . . . . կ. կ. . 66

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

6. Պրոֆ. Մարրի կարծիքը վրացւոց, ընդդէմ Հայոց ուղղած, վէճի մասին . . . . . Ս. Մ. . 75
7. Խարձր կրթութեան կազմակերպութիւնը Հեռաւոր արևմուտքում, Ամերիկայում . . (Թարգմ.) .. . . 78

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ.

8. Ի՞նչ կարիք ունի Հայոց Եկեղեցին . . . . . 81
9. ՄԱՅՐ ԱԹՈՌ . . . . . 83

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ Ս. Թադէոս առաքելոյ վանքի արձանագրութիւնները. (Կը շարունակուի) . Խ. վ. . 89

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. . . . . 91

Յաւելուած. . . . . 93

Յայտարարութիւններ.

Խովանդակութիւնք ազգ. Հանդիսից

# ԱՐԱՐԱՏ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԳԱՀՏՕՆԱԿԱՆ — ԿԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԱՄՍԱԹԵՐԹ


ԺԳ-ՐԴ Ա. ՏԱՐԻ | ՀԱՄԱՐ ԵՐԿՐՈՐԴ | ՓԵՏՐՈՒԱՐ 1898 Թ.



ՀՐԱՄԱՆԱԾԱԼ

**Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱՊՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**



**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ**

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԱՅ ՍՐՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

1898

Дозволено цензурою 20 Февраля 1898 г. Тифлисъ

# ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ՔՐԻՍՏՈՍԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ։

«Ե՛րբ չհաս իմ, անտանայ»

Անդադար գնաց Քրիստոսից առաջ Նոր կարապետը՝ այդտեղ առանձնութեան մէջ սկիզբն առաւ, զօրացաւ և ինչպէս երկնքի որոտումն հնչեց ապաշխարութեան այն հուժկու ձայնը, որ Աւետեաց երկրի մի ծայրից մինչև միւս ծայրը գլորուելով ճանապարհ պէտք է հարթէր Տիրոջ համար։ Անդադար գնաց Քրիստոսից յետոյ նաև Նորա «ընտրութեան անօթ» առաքեալը. այդտեղ հաշիւ տեսաւ իւր անցեալի հետ և թոյլ տուաւ, որ Դամասկոսի ճանապարհին իրեն յայտնուած լոյսը մինչև հոգու ամենադաղտնի խորքերը թափանցէ, լուսաւորէ և վերանորոգէ իւր ամբողջ էութիւնը, աստուածային սիրոյ սրբազան հուրը բորբոքէ սրտի սեղանի սրբութեան վրայ՝ մի հուր, որ համաձայնակ բոց պէտք է դառնար, ամբողջ հեթանոս աշխարհի մէջ ծաւալէր։ Դէպի անդադար է դիմում Ինքը Քրիստոս, մկրտութիւնից անմիջապէս յետոյ։ Այն հոգին, որ բերել էր Նորան վերևից ևւ Երկնաւոր Հօր ձայնը. «Դու ես Իմ սիրելի Որդին, Քո մէջ հաճոյք գտայ»—թոյլ չէր տալիս Նորան այլևս Նազարէթի խաղաղ հովիտը վերադառնալ և անյայտ ու աննշան հիւանի կեանքը շարունակել։ Նա Աստուծոյ Որդին էր, Իսրայէլի ժողովրդին խոստացուած Մեսիան, աշխարհի Փրկիչը, և ժամանակը հասել էր, երբ պէտք է յայտնուէր Ուր ժողովրդի մէջ և հեթանոս աշխարհի առաջ՝ Աստուծոյ արքայութիւնը երկրի վերայ հաստատելու, փրկութեան և երանաւէտ կեանքի ճանապարհները բանալու։ Իսկ դորա համար հարկաւոր էր, որ աշխարհի մէջ թագաւորող և մարդոց սրտերը իւր ճանկերի մէջ դերի բռնող չարութեան ոգին միանգամից իւր բոլոր զօրութեամբ Նորա դիմաց ելնէր, և երևար, թէ արդեօք պէտք է կարողանայ Նա յաղթահարել և կապել այդ հզօրին, որ ապա մանէ և աւար հարկանէ նորա տունը։* – Այս խորհրդաւոր մրցման նկարագիրը մեր առաջն է դնում ահա անապատի փորձութեան պատմութիւնը։

Երեք աւետարանները բոլորովին նոյնութեամբ չեն վերարտադրում այդ պատմութիւնը։ Մարկոս յիշում է միայն համառօտ կերպով, որ Յիսուս մկրտութիւնից անմիջապէս յետոյ, ս. Հոգուց մղուած, անապատ է դնում, ուր մնում է քառասուն օր և փորձուում սատանայից. գազանների հետ էր Նա այդտեղ և հրեշտակները սպասաւորում էին Նորան։ Այդ նշանակում է հաւանականաբար, թէ Նա մարդկանցից առանձնացած էր ապրում և գազանները չէին կարող վնասել Նորան, որովհետև հրեշտակները պաշտպանում էին. և ո՛չ, ինչպես հներից շատերը ենթադրել են, թէ չարը գազանների կերպարանքով երևում էր Նորան։—Ղուկաս աւետարանիչը Մարկոսի հետ համաձայն յիշում է, որ Յիսուս քառասուն օր փորձուում էր սատանայից, բայց և, համաձայն Մատթէոսի հետ, երեք իսկական և պլսաւոր փորձութիւնները ցոյց է տալիս վերջին օրը տեղի ունեցած՝ միայն այն տարբերութեամբ, որ այստեղ երկրորդ և երրորդ փորձութիւնը յետ ու առաջ են։ Բնական, և ըստ ամենայն հաւանութեան նախնական, կարգն այն է, որ Մատթէոս է, յառաջ բերում. դուցի, ինչպես շատերը կարծում են, Ղուկաս

* Տես. Մատթ. ժբ. 29.

այդ կարգը նորա համար է վոխել, որ մատածել է, թէ անտպատիպ աւելի յարմար էր նախ սարը բարձրանալ, ապա Երուսաղէմի տաճարը գալ և այնտեղից ժողովրդի մէջ մանել՝ քան ընդհակառակն: Յամենայն դէպս այս երեք փորձութիւնների մէջ մի մեծ խորհուրդ է պատկերանում, մի ծանր հոգեկան պայքար, որին եթէ մի անգամ ամենալեղապաշտ չափով նոյն ինքն Աստուծոյ և Մարդոյ Որդին է ենթարկուել, աւելի փոքր չափով և յաճախ ենթարկուում են դրեթէ բոլոր Նորա հետևողները:

Զուր աշխատանք կլինէր ի հարկէ՝ կամենալ հասկանալի և շօշափելի կացուցանել մեզ, թէ ինչպէս կատարուեցան այն գործողութիւնները, որոնց մասին պատմուում է այստեղ. թէ ինչ էր և ինչ կերպարանքով երևեցաւ այն սատանան, որ եկել էր փորձելու Յիսուսին: Սատանայի և նորա արբանեակների մասին, ինչպէս յայտնի է, շատ յաճախ խօսք է լինում աւետարանների մէջ. Քրիստոսի հրաշքների մեծ մասը դիւահարների բժշկութիւններ են, և մենք դիւահարների բերանից լսում ենք, որ Նա եկել էր դևերին կորցնելու (Մարկ. Ա. 24), որ վերջին դատաստանի օրը նաև դևերը պէտք է վերջնականապէս դատապարտուելն և կրօտեան մատնուելն (Մատթ. Ը. 29. համ. ԻԲ. 41): Թէ ինչպէս դիւական իշխանութիւնը իբրև մի գործօն, աշխարհը կաշկանդող ոյժ էր ներկայացնում Փրկիչը, որի դէմ նաև մաքառելու և յաղթանակ կանգնելու էր եկել, երևում է օրինակ Նորա ղբացած հրաժանքից, երբ իւր աշակերտները քարոզութիւնից վերադառնում են և պատմում՝ «Դևերն ևս հնազանդում են մեզ Քո անունով». «Տեսայ, ասում է Նա, սատանային շանթի նման երկնքից վայր ընկնելիս» (Ղուկ. Ժ. 17. 18.). սատանայի իշխանութիւնը խորտակուած ընկած էր այն օրուանից, երբ աշխարհի վերայ գանուում էր մեկը, որ այդ իշխանութեան ոչ մի կերպ այլ ևս չէր ենթարկուում, որ ընդհակառակն ինքը Նորա վերայ իշխանութիւն բանեցնել և իւր իշխանութիւնը ուրիշներին հաղորդել կարող էր: Սատանայի իշխանութիւն էր գանում Փրկիչն ամեն տեղ, ուր զօրեղ ընդդիմադրութիւն կար բարոյ և ճշմարտութեան պահանջների դէմ. այդ իշխանութիւնն ամենից աւելի ակնյայտնի կերպով արտայայտուած էր տեսնում այն տեսակ հիւանդութիւնների մէջ, որոնք կաշկանդում են մարդու հոգին և անընդունակ դարձնում բարոյական կեանքի համար. այդ պատճառով և Նա իւր հրաշագործ զօրութիւնը, որ երբէք առանց բարոյական նպատակի՝ ցոյցի համար միայն, հանդէս չէր բերում, առաւելապէս այդպիսի «դիւահարներ» բժշկելու վերայ էր գործ դնում: Բայց թէ որչափ հեռու էր Նա «սատանայ» անուան հետ որ և է նախապաշարմունք կապելու յանկութիւնից՝ պարզ ցոյց է տալիս այն հանդամանքը, որ Նա նոյն այն անտպատում արտասանած «Ե՛րթ յետս իմ, սատանայ» խօսքերը մի ուրիշ տեղ իւր ամենամօտ աշակերտ Պետրոսին է ուղղում. ինչ կերպարանքով կուզէ երևալ չարը՝ եթէ նա ուղիղ ճանապարհից գայթակղեցնում է և սովորեցնում Աստուծոյ կամայ հակառակ վարուել, սատանայական ոգուց է ներշնչուած: Բաւական է ի միջի այլոց ինկատի ունենալ, որ երբորդ փորձութեան համար սատանան հանում է Փրկչին «մի շատ բարձր լերան վերայ և ցոյց տալիս Նորան աշխարհի բոլոր թագաւորութիւնները և նոցա փառքը», «ի վարկեան ժամանակի», ինչպէս աւելացնում է Ղուկաս՝ որպէս մի համոզունք, թէ անատպատի փորձութեան խորհրդաւոր պարագաները ղբայական չափերի տակ դնելու հնարաւորութիւն չկայ. ո՞ւր է գտնուում այն լեառը, որի վերայից աշխարհի բոլոր թագաւորութիւնները մի ակնթարթում կարելի լինէր տեսնել: Յօրհուրդը պէտք է իբրև խորհուրդ ըմբռնել, և այդ կողմից, ինչպէս ակնարկեցինք, շատ բան է սովորեցնում Փրկչի փորձութեան պատմութիւնը:

Սատանան մօտենում է առաջին անգամ այն կողմից, որ ամենաթոյլն է մարդու մէջ, որով նա ամենից աւելի կապուած է աշխարհի հետ և կարօտ արտաքին օգնութեան: Ներկայանում անսուաղութիւնից յետոյ՝ Փրկիչը, իբր ճշմարիտ կատարեալ մարդ, քաղց էր զգում՝ հասի անհրաժեշտ պահանջ, և ահա փորձիչը թելադրում է Նորան. «Եթէ, Դու Աս-

*տուծոյ Որդին ևս (որ հարկը պահանջած ժամանակ անապատը շահեմարան դարձնել՝ մի քանի հացով հազարներն կերակրել կարող ևս)՝ ասա՝ թող այս քարերը հաց լինին»։ —Նման փորձութեան ենթարկուել էր մի ժամանակ մարդկային ազգի նախամայր Եւան և առաջին անգամից թակարդի մէջ ընկել։ այնուհետև Նւայի բոլոր զաւակների համար այդ մէկ փորձութիւնը բաւական էր եղել՝ Աստծուց կարելու և աշխարհի գերին դարձնելու։ Չէ՞ որ աշխարհը վայելել մեր բնական իրաւունքն է, մտածում են մարդիկ մեծ մասամբ նաև այսօր։ հացը, սնունդը անհրաժեշտ կարիք է կեանքի պահպանութեան համար, իսկ կարիքը ոչ մի օրէնք չէ ճանաչում։ մենք ամեն միջոց պէտք է գործ դնենք, եթէ կարելի է, նաև քարերը հաց դարձնենք, մեր այդ բնական կարիքը լրացնելու։ Նւ ահա բոլոր մարդիկ հացի գերի լինելով, հացն իրեւ ապրուստի միակ միջոց նկատելով, գերի են լինում նաև այն աշխարհի, որից ստանում են իրենց ապրուստ տուող հացը։ Սակայն այդպէս չմտածեց և դրա համաձայն չվարուեցաւ մեր Փրկիչը. «Գրուած է, Մի՛այն հացով չէ ապրում մարդ, այլ ամեն մի խօսքով, որ ելնում է Աստուծոյ բերանից», ասաց Նա։ Գրուած է. աշխարհի մէջ ստանալու օրէնքը՝ բնական պահանջների լրացման օրէնքը, միակ օրէնքը չէ և ճշմարիտ օրէնքը, այլ ազատագրուած է միայն բուն այն աստուածային օրինաց, որ միանգամ ստեղծագործութեան մէջ ուղիղ մաքով արտայայտուելուց և մարդոց կողմից սխալ ըմբռնուելուց յետոյ՝ կրկին պարզութեամբ արտայայտուել է աստուածախօս մարդոց բերանով և գրչով սուրբ Գրքի մէջ։ Նւ այդ աստուածային օրէնքը յիշեցնում է մեզ, որ տիեզերքի Արարիչը մարդոց կեանքի պահպանութեան համար բոլոր կարևոր պայմանները աշխարհի մէջ դնելով՝ նրան հաց տալով հանդերձ՝ չի գադարում այնուամենայնիւ կենդանութեան միակ ճշմարիտ աղբիւր լինելուց և կարող է ամեն րոպէ իւր կենդանարար խօսքով նոր միջոցներ ստեղծել կենդանութեան, նոր ուղղութիւն տալ կեանքին։ Այս պատճառաւ մարդիկ ոչ թէ, իրրև հասարակ նիւթեղէն արարածներ, իրենց մարմնի բնապահպանութեան պէտք է հետևեն, այլ իրրև Աստուծոյ անմահ կենաց հաղորդակից լինելու կոչուած, և Նորա խօսքը լսելու և ըմբռնելու ընդունակ՝ հոգիներ պէտք է իւրաքանչիւր քայլափոխում միտ դնեն, թէ ինչ է Աստուծոյ կամքը, Նորա թելադրութիւնն իրենց հոգւոյ մէջ, և ըստ այնմ վարուին. որպէսզի ժամանակաւոր և առերեսյմ կեանք ձեռք բերելու հետամուտ եղած միջոց՝ յաւիտենականն ու իսկականը չկորցնեն։

Մարդոց մի երկրորդ ամենամեծ, դիւրաւ գայթակղութիւնների ենթարկուող և դէպի կործանումն տանող կողմը անապատութիւնն է՝ մէկ անգամից, անաշխատ կերպով և դիւթական միջոցներով մեծ փառքի հասնելու ձգտումը։ Փորձիչն այդ թուլութիւնից ևս ամենայն յաջողութեամբ օգտուել էր նահատնօղներն խաթելիս. Երբ արգելուած պատուղն ուտէք, ձեր աչքերը կբացուին և դուք աստուածների նման կլինէք, ասել էր նա,—և նոցա աչքերը, գայթակղութեան ենթարկելուց յետոյ, չէրան բացուել էին, բայց միայն իրենց մերկութիւնն ու ոչնչութիւնը տեսնելու համար։ Նոյն փորձը կրկնում է նա այժմ ևս, և կրկին խիստ ճարպիկ կերպով։ Նա տանում կանգնեցնում է Փրկչին տաճարի մի *թևի վերայ (հայերէնը՝ ի վերայ աշտարակի տաճարին)*, որով հասկացուում է կամ կրտուրի մի ծայրը, կամ տաճարի հարաւային կողմում գտնուող պալատի այն, խոր անդունդի վերայ կախուած՝ բուլորը, որի վերայից նայողի աչքերը սևանում էին, ըստ Յովսեպոսի։* Սատանան տեսնում է, որ ս. Գրքի խօսքերը մեծ հեղինակութիւն են Փրկչի համար, և յարմարուում է Նորա ճաշակին. «Եթէ Աստուծոյ Որդի ես, ցած ձգիր քեզ, որովհետև գրուած է, թէ հրեշտակներին պատուէր է տուած (Աստուծոյ կողմից) քո մասին, որով ձեռների վերայ կը վերցնեն քեզ, որպէս զի քարին չդիպչէ ոտքդ»։—Քանի՛ քանի անապարիզի վերայ նոր տաք դնող երիտասարդների առաջ դրուում է նոյն այդ փորձութիւնը, և քանի՛ան այդպիսի աչքեր մթնացնող բարձրու-

* Նոյն այս բերից 62 թ.-ին վայր գլուխքի Յակոբոս Տեառն եպիսկ.

թիւնից անդունդն են նետուում և խորտակուում. ինչ որ այստեղ Աստուծոյ կողմից՝ նոքա առհասարակ բաղդի կողմից պատրաստած են երևակայում: փորձիր բաղդ՝ մի քանի կոպէկ ունիս ղրպանումդ թուղթ խաղա, խաղատեռներ դնիր,—մի անգամից կհարստանաս և փառաւոր կեանք կվայելես. կարիճ ես, յառաջ նետուիր, ծուռը ընկիր՝ ոսկի մատանին հանելու, հեռու աշխարհներ գնա՝ ոսկէ հանքեր գտնելու, կամ յանդուգն ձեռնարկութիւններ սկսիր՝ շքանշաններ, աստիճան, մեծ փառք ձեռք բերելու համար:—Յիսուս ասպարէզ էր եկնում իբրև Աստուծոյ Որդի, իբրև Ներաչէլի խոստացեալ Մեսիան. Նա կանգնած էր այն տեղում, որտեղ կենդրոնանում էր Իւր ժողովրդի հոգևոր կեանքը և որտեղից օրէնք էր բղխում նորա համար. ի՛նչ ուրեմն աւելի հրապուրիչ և դիւրաւ իրագործելի բան, քան մի ակնյայտնի հրաշքով ցոյց տալ, թէ յիրաւի Ինքն է, որին ակնկալում են. թէ կարող է Ինքը կատարուիլն տալ այն բոլոր դէպսպատառ ակնկալութիւններին, որ այս տաճարի մէջ բուն դրած ինքնագոչ օրէնսուսուցները կապում էին Մեսիայի անուան հետ: Այդպէս առաջին անգամից և եթ Իրեն Մեսիա հռչակելով և իշխանաբար իւր ժողովուրդի զլուխն անցնելով՝ Նա զլորուած կլինէր ի հարկէ անորոշութիւնների և փորձութիւնների մի ահագին անդունդի մէջ, հռովմէական լեգիոնների հետ գործ կունենար. բայց սատանայի ի՛նչ հոգն էր այդ. թող հրեշտակները դային օգնելու և հանելու Նորան այնտեղից: Յիսուս գիտէր, որ Ինքն Աստուծոյ Որդին է, գիտէր որ կարող է երկնքից հրեշտակների զընդեր իջեցնել, բայց գիտէր և այն, որ Աստուծոյ օրէնքը չէ՝ բռնի ուժով և դիւթական միջոցներով աշխարհին տիրելը, այլ բարոյական, ճշմարտութեամբ արդար հոգիներ վաստակելը, և Նա չկամեցաւ փորձել Աստծուն՝ Իւր օրէնքի հակառակ բան անել տալ:

Տիրել աշխարհին՝ այդ այնուամենայնիւ Մեսիայի ցանկութիւնը պէտք է լինէր, ինչպէս և աւելի կամ պակաս չափով ամեն մի հասարակ մահկանացուի ցանկութիւնն է. և ահա սատանան հանդէս է գալիս իւր բոլոր մերկութեամբ: Նա, որ ոչ մի բաժին չունէր կեանքից, որ իբրև չարութեան ամփոփումն, ոչ մի տեղ չպէտք է գտնէր աշխարհի մէջ, ուր բարութիւն և կեանք կայ՝ իբրև աշխարհի կատարեալ տէր է ներկայանում և խոստանում է տալ իւր չունեցածը նոցա, որոնք իւր երևակայական իշխանութիւնը կճանաչեն և իրենք ևս այդպիսի երևակայական իշխանութեամբ կբաւականանան: Նա որչափ մարդիկ ապրել են այդ երևակայութեամբ, անընդունակ հրեշտակի կերպարանքի ներքոյ թագնուած չարի սև դէմքը տեսնելու. բայց Աստուծոյ Որդու թափանցող աչքից այդ դէմքը թագնուել չէր կարող. «Կորի՛ր սատանայ, բացականչում է Նա մի ցասմամբ. գրուած է. Քո Տէր Աստծուն երկրպագութիւն տուր և Նորա՛ն միայն պաշտիր»:—Նա փորձիչը չքացաւ՝ «առ ժամանակ մի», աւելացնում է Ղուկաս աւետարանիչը, և մենք տեսնում ենք, որ Նա յիրաւի, Իւր գործունէութեան ասպարիզում շատ փորձութիւնների յաղթելուց յետոյ, տաղնապի մէջ է դեռ Գեթսեմանի պարտիզում, խաչելութիւնից մի քանի ժամ առաջ. ամենածանր փորձութիւնը՝ խոյս տալ խաչի սարսափելի մահից և դիւրին ճանապարհով Իւր գործը գլուխ հանել, խռովում է այստեղ Նորա պայծառ հոգին, արեան կայլակների նման քրտինք իջեցնում Նորա ճակատից. բայց նոյն Աստուծոյ հրեշտակը, որ սպասաւորում էր Նորան անապատում սատանայի հեռանալուց յետոյ՝ զօրացնում է Նորան նաև այստեղ, և Նա վերջնականապէս յաղթում է աշխարհին իւր բոլոր փորձութիւններով:—Բայց այդ բոպէին քնած էր Պետրոս, ինչպէս սրամտութեամբ նկատում է մի մեկնաբան, հակառակ Տիրոջ կրկնակի պատուէրներին՝ արթուն լինել, փորձութեան մէջ չընկնելու համար. քնած էր այն Պետրոսը, որ մի օր կամենում էր Նորա փորձիչը լինել և նա կասեցնել չարչարանաց դէպի փրկութիւն տանող ճանապարհից, և այդ բոպէին գուցէ իշխանութեան ու փառքի երազներ էր տեսնում: Նա ինքը յետոյ բժշկուեցաւ այդ երևոյթներից, բայց ժառանգութիւն թողեց նոյնը իւր աթոռի վերայ նստող «Քրիստոսի փոխանորդներին» որոնք ցայսօր ևս, փոխանակ խաչի

ճանապարհի վերայ դէմ դնելու չարին՝ աշխարհային իշխանութեան երազներ են տեսնում: Եւ մեքն ամէնքս տեսնում ենք այդպիսի երազներ, որոնցից ազատուելու և արթուն լինելու գօրեղ խթան պէտք է լինի անապատի փորձութեան պատմութիւնը:

Կ. Վ.

## ՅԻՍՈՒՍԻ ՆԱԶԱՐԷԹՈՒՄ ԱՆՑՐԱԾ ԽԱՂԱՂ ՏԱՐԻՆԵՐԸ:*

Յիսուսի երկրաւոր կենաց առաջին օրերի մասին մեր ունեցած տեղեկութիւնները բաւական լրիւ են, բայց Եգիպտոսից վերադառնալուց և Նազարէթում բնակութիւն հաստատելուց անմիջապէս յետոյ նոցա թելը կորչում է, և Յիսուսի կեանքի ծնացորդը, մինչև նորա հրապարակական գործունէութեան սկսուիլը, ծածկուած է թանձր վարագուրով, որ միայն մի անգամ թեթեւակի բացուում է: Մենք կցանկանայինք հարկաւ նոյն լրութեամբ շարունակել մեր պատմութիւնը նաև Նորա տղայութեան և երիտասարդութեան տարիների համար: Նոր ժամանակի կենսագրութիւնների մէջ քիչ տեղեր կան աւելի հետաքրքիր, քան հեթոսի մանկութեան օրերին վերաբերեալ զրոյցները, որովհետև նոցա մէջ յաճախ նախագծուած կարող ենք տեսնել, փոքր չափով և հաճելի պարզութեամբ, ապագայ կեանքի բնաւորութիւնը և պատկերը: Ի՞նչ չէինք տայ՝ իմանալու համար նաև Յիսուսի սովորութիւնները, ընկերական կեանքը, խօսքերն ու գործերը այսքան տարիների ընթացքում: Միայն մի ծաղիկ կայ այդ թագուն պարտիզի պատից դուրս կախուած, և այդ այնպիսի պատուական ծաղիկ է, որ մեր սիրտը լեցնում է բուռն ցանկութեամբ, տեսնել նոյն իսկ պարտէզը: Սակայն Աստուած, որի լռութիւնը նոյնչափ հրաշալի է, որչափ և խօսքերը, հաճել է փակած պահել այն:

12. Բնական բան է, որ մինչ Աստուած լռութիւն է պահպանում իսկ մարդիկ հետաքրքրուում են սաստիկ՝ նոցա երևակայութիւնը պէտք է աշխատէր պակասը լեցնել: Յիրաւի նախնական եկեղեցւոյ մէջ հանդէս եկան տարականոն աւետարաններ, իբրև թէ մանրամասն տեղեկութիւններ բովանդակող այն բանների մասին, որոնք պակաս են իսկական աւետարանների մէջ: Մեծ տեղ են բռնում նոցանում առանձնապէս Յիսուսի մանկութեան վերաբերեալ խօսքեր և գործեր: Բայց նոքա ցոյց են տալիս միայն, թէ այսպիսի մի խնդիրը որչափ բարձր է մարդոց երևակայութիւնից, և թէ որչափ հիմնաւոր են և արժանահաւատ սրբգրքի խօսքերը՝ նոցա կեղծ և արհեստական պատմութիւնների հետ համեմատած: Նոքա զարմանում են Յիսուսին քահանայ և անշահ հրաշքներ գործող մէկը, որ կաւից թռչուններ է շինում և թռցնում, իւր խաղընկերներին այծերի է փոխարկում և այլն: Մի խօսքով, անպէտք առասպելների ժողովածուներ են դոքա:

13. Այս օտարոտի մոլորութիւնները դուշացնում են մեզ՝ երևակայութեան գնորքներով սրբազան ցանկապատի մէջ թափանցելու չարչիութեան: Բաւական է որ մենք գիտենք, թէ Յիսուսի հասակի հետ զարգանում էին իմաստութիւն և շնորհք Աստուծոյ ու մարդոց առաջ*: Նա իսկական մանուկ էր և իսկական պատանի, և անցաւ բնական զարգացման բոլոր աստիճանները: Մարմինն ու հոգին միասին էին զօրանում. որչափ մէկի մէջ աւելանում էր այրական կորովը՝ նոյնչափ միւսի մէջ գիտութիւնն ու եռանդը: Նորա բոլոր բնաւորութիւնն այնպէս շնորհալի

---

* Յառաջ ենք բերում մի հատուած անգղիացի Ջէյմս Շտալկերի «Յիսուս Քրիստոսի կեանքը» (Rev. James Stalker.—The Life of Jesus Christ) գրքից, որ իւր տեսակի մէջ նորագոյնն է եւ կարճ միջոցում մեծ ընդունելութիւն գտաւ թէ Անգլիայում եւ թէ առհասարակ բրիստոնէական Եւրոպայում: Այն օրինակը, որ մենք՝ զուտ աւետարանական բարգմանութիւնն ենք այժմ տալիս, ամբողջապէս հայերէն փոխադրել ենք մեր «52-րդ հազար» մանրագրութիւնից:

Կ. Վ.

* Դուկ. Բ. 51.

էր դարձնում Նորան, որ իւրաքանչիւր անհնազանդ պէտք է հիանար և սիրէր Նորա բարութիւնն ու սրբութիւնը:

14. Թէպէտ ուրիշն մենք իրաւունք չունինք այստեղ մեր երևակայութեան սանձարձակ ազատութիւն տալ, բայց ոչ միայն պէտք է արգելուած չհամարենք, այլ ընդհակառակն իրրև պարտք ընդունենք՝ ժողովել այն բոլոր վաւերական տեղեկութիւնները, որ ստանալ կարող ենք այդ ժամանակի բարուց և սովորութիւնների մասին, կամ ի նկատի առնել Նորա յետագայ կեանքի այն հանգամանքները, որոնք որ և է կերպ լոյս են սփռում Նորա պատանեկութեան տարիների վերայ. այդ ձևով կարելի կլինի կապել Նորա մանկութիւնը կեանքի այն շրջանի հետ, ուր աւետարանները ձեռք են առնում կրկին իրենց պատմութեան թելը: Այս միջոցաւ կարող կլինինք գոնէ մի որոշ ասպիճան գաղափար կազմել այն մասին, թէ ինչ էր Նա իրրև մանուկ և իրրև երիտասարդ, և թէ ինչ ազդեցութիւնների ներքոյ տեղի ունեցաւ Նորա զարգացումն այնքան խաղաղ տարիների ընթացքում:

15. Մեզ յայտնի է, թէ ինչ տեսակ ընտանեկան ազդեցութիւնների ներքոյ Նա մեծացաւ: Նորա հայրական տունն այնպիսիներից էր, որոնք երկրի պարծանքն էին կազմում որպիսիք պարծանք են նաև մեր հայրենիքի համար՝ ասուպածասէր ու խելացի մի աշխատաւորի տուն: Յովսէփ, այդ տան տէրը, մի սրբակեաց և խոհական անձն էր. սակայն այն հանգամանքը, որ նա Յիսուսի յետագայ կենաց մէջ չի յիշուում, պատճառ է, եղել ընդհանրապէս ենթադրելու, թէ նա վախճանել է Յիսուսի պատանեկութեան ժամանակ, Նորա վերայ թողնելով տան հոգսերը: Մ՚այրը հաւանականաբար ամենից աւելի զօրեղ ազդեցութիւն է ունեցել Նորա զարգացման վերայ, որչափ կարելի է խօսել այստեղ արտաքին ազդեցութիւնների մասին: Թէ ինչպիսի մայր ունէր Նա, կարելի է նորանից եզրակացնել, որ աշխարհի բոլոր կանանց միջից ընտրուեցաւ՝ ամենաբարձր վիճակ պատկն ընդունելու համար, որ մի կնոջ բաժին լինել կարող էր: Այն օրհնեալութիւնը, որով Նա արտայայտել է իրեն վիճակուած մեծ բաղդաւորութիւնը, ներկայացնում է նորան իրրև մի ջերմեռանդ, բանաստեղծական ոգևորութեամբ լի և հայրենասէր կին՝ լաւ ծանօթ ս. Գրքին և մանաւանդ պատմութիւններին, որովհետև Հին Կտակարանի գաղափարներով լի է նորա երգը և կազմուած Աննայի երգի նմանողութեամբ: Զախարիայ խոնարհ հոգու տէր էր նա, բայց և ընդունակ գնահատելու ըստ արժանւոյն իրեն եղած պատիւը: . . . . Կատարեալապէս անարատ սուրբ, սիրով լի և վեհ հոգու տէր մի կին էր նա. Յիսուս Նորա սիրոյ գրկում մեծացաւ և փոխադարձ քնքշութեամբ սիրում էր Նորան*:..

17. Յիսուս իւր կրթութիւնը ստացաւ տանը, կամ գուցէ տեղական ժողովարանում պաշտօն ունեցող մի գրքի մօտ. Յամենայն դէպս աղքատ գաւառական համապատասխան կրթութիւն էր Նորա ստացածը: Ինչպէս գիրները յաճախ ասում էին արհամարհանքով՝ Նա ուսումնական մէկը չէր: Սակայն դիտութեան սէրը պէտք է շատ վաղ զարթած լինի Նորա մէջ: Նա անշուշտ ամեն օր բաւականութիւն էր գտնում վեմ և պայծառ մտքերի մէջ խորասուզուելով. դիտութեան ամենապատ բանալին ունէր Նա ձեռին՝ ազատ հայեացք և սիրող սիրտ, և երեք մեծ գրքեր միշտ բաց գրած էին Նորա առաջ՝ Աստուածաշունչ, մարդ և բնութիւն:

18. Հասկանալի է, թէ ինչպիսի բուռն ոգևորութեամբ Նա հին կտակարան էր կարդում: Նորա քարոզութիւնները լի են ս. Գրքից առնուած վկայութիւններով և առատ ապացոյցներ են ընծայում թէ ինչպէս Նորա հոգին հանապազօրեայ անունդ և բաւականութիւն էր գտնում այդպէս: Վաղ մանկութիւնից սկսուած այդպիսի եռանդուն ուսումնասիրութեան արդիւնքն է անշուշտ, որ Նա յետոյ այնպէս հիանալի կերպով գործ էր դնում ս. Գրքը, Ուր քարոզութիւնները ճոխացնելու և Ուր վարդապետութեան ոյժ տալու՝ հակառակորդների առարկութիւնները հերքելու և չարի փոր-

* Մենք բառիս առ առաւել յարգանք այն տեղերը, որոնք գոյն բողոքական ոգով են գրուած:

ձուխիւնները յաղթելու համար: Նորա բերած վկայութիւնները ցոյց են տալիս նոյնպէս, որ Նա երրայեցերէն բնագիրն էր կարդում և ոչ յունարէն Թարգմանութիւնը, որ այդ ժամանակ շատ էր գործ ածուում: Երրայեցերէնը բուն Պաղեստինում մեռած լեզու էր, ինչպէս այսօր լատիներէնն Իտալիայում: բայց Յիսուս կխափաղէր բնականաբար ս. Գիրքը նոյն խօսքերով կարդալ, ինչ խօսքերով սկզբում գրած էր . . . : Այն լեզուն, որով Նա խորհում էր և խօսում, արամերէնն էր՝ նոյն ընտանիքին պատկանող լեզուներից մէկը, ինչ որ և երրայեցերէնը: Նորա խօսքերի մէջ մնացել են մի քանի հետքեր այդ լեզուից, ինչպէս՝ «Ծակիթա կումի» և «Էլի, էլի, լամա սաբաքթանի»: Սակայն Նա միջոց ունէր նաև յունարէն սովորելու, որովհետև «Հեթանոսաց Գալիլեան» լի էր յունախօս բնակիչներով: Այսպէս, կարելի է կարծել, որ Նա երեք լեզու գիտէր. մին ամենագօրեղ կրօնական լեզուն՝ այն գրականութեան լեզուն, որի մէջ Նա կատարելապէս հմուտ էր. երկրորդն ամենանուրբ լեզուն՝ աշխարհային իմաստութեան մտքեր արտայայտելու համար, թէպէտ ամենևին հատանական չէ, որ Նա յունական գրականութեան առաջնակարգ գործերին մասամբ իսկ ծանօթ լինէր. և երրորդ՝ հասարակ ժողովրդի լեզուն, դէպի որ ուղղուած էր գլխաւորապէս Նորա քարոզութիւնը:

19. Ոչ մի տեղ չի կարելի այնպէս լաւ ուսումնասիրել մարդկային բնութիւնը, ինչպէս շինական կեանքում, որովհետև այստեղ իւրաքանչիւր անձնաւորութիւն իւր ամբողջ հոգեմտքը մեր առաջն է, և մենք բոլոր հարևաններին ոտից գլուխ ճանաչում ենք: Քաղաքում մենք շատ աւելի մարդիկ ենք տեսնում, բայց և աւելի քիչ ճանաչում: այստեղ մենք միայն կեանքի արտաքին կողմն ենք տեսնում: Գիւղում մեր տեսողութիւնը դէպի դուրս առհմանափակ է, բայց դէպի ներս խորն է, և դէպի վեր՝ անարգել: Նազարէթը մի վատ գիւղաքաղաքի անուն ունէր, ինչպէս հաստատում է այն առակաւոր խօսքը՝ «Կարող է Նազարէթից լաւ բան ելնել»*: Յիսուս Իւր սեփական հոգու մէջ անհաղորդ էր բոլորովին մեղքի, բայց իւր հայրենիքում ամենայն լրութեամբ Նորա առաջ ներկայանում էր այն խաւարային զօրութիւնը, որի դէմ մաքառել Նորա երկրաւոր կեանքի խնդիրը պէտք է լինէր: Այլ և Իւր արհեստը յաճախ յարաբերութեան մէջ էր դնում Նորան մարդոց հետ: Որ Նա Յովսէփի արհեստանոցում իրրև հիւսն աշխատում էր՝ անկասկած է: Նորա քաղաքացիները ամենից լաւ պէտք է իմանային այդ, երբ Նորա քարոզութեան վերայ զարմանալով հարցնում էին. «Միթէ սա հիւսնը չէ»:* Դժուար կլինէր լիովին պարզաբանել մեծ նշանակութիւնն այդ իրողութեան, որ Աստուած Իւր Որդու համար, Նորա երկրաւոր կեանքում եղած ամեն տեսակ կոչումների մէջ հասարակ արհեստաւորի կոչումն է ընտրել: Ամենանշան աշխատանքն անդամ ընդ միշտ պատուաւոր է դառնում այդպիսով: Ոսկ Յիսուսի համար Իւր արհեստը միջոց էր ամբոխի ղպացումներին ծանօթանալու և իմանալու՝ «ինչ կայ մարդու մէջ» (Յովհ. Բ. 25): Աւետարանում ասած է. Նա այնպէս լաւ գիտէր այդ, որ կարիք չունէր ուրիշներից այդ մասին բան սովորելու:

20. Ճանապարհորդները պատմում են, որ Յիսուսի բնակած տեղը աշխարհիս երեսին ամենագեղեցիկ տեղերից մէկն է: Նազարէթը շինուած է մի հեռու ընկած, բաժակաձև ձորի վերայ՝ Զարուդոնի լեռների այն տեղում, ուր նոքա իջնում Իեզրեէլի հարթավայրն են կազմում. մի նեղ շաւիղ թեք առ ապարի վերայով տանում է դէպի այդ դաշտը: Նազարէթի սպիտակ, խաղողի որթերի մէջ թաղուած, տները շրջապատուած են այգիներով և ձիթենու, թուզի, նարնջի և նռնենու պարտէզներով: Արտերն իրարից բաժանուում են կակտուսի ցանկապատերով և ծածկուած են անթիւ բազմազան ծաղիկներով: Գիւղաքաղաքի եռևի կողմում մօտ 150 մետր բարձրութեամբ մի բլուր կայ, որի գա-

Յովհ. Ա. 46.

* Այսպէս է Մարկոսի յունարէն բնագրի մէջ, մինչդեռ հայերէն թարգմանութեան մէջ. «Ո՞չ սա է վանուկ հիւսանն» (Մարկ. 6. 3.), որ անշուշտ Մատթէոսի առետարանից է փոխ առնուած (ԺԳ. 55):

դաթից բացուում է աշխարհի ամենագեղեցիկ տեսարաններից մէկը. հիւսիսային կողմը՝ Գալիլիայի լեռները են, որոնց մէջ բարձրանում է ձիւնապատ Հերմոնը. արեւմտեան կողմը՝ Կարմելոսի կողերը, Տիբրոսի ծովափը և Միջերկրականի ալեծուփ ջրերը. մի քանի մղոն հեռու դէպի արեւելք անտառապատ կոնաձեւ Թափոր լեռն է. իսկ հարաւային կողմում Իեզրեելի դաշտը, Նիւեմի լեռները եւևից։ Յիսուսի քարոզութիւնները ցոյց են տալիս, թէ բնութեան դեղեցկութիւնների համար որչափ խոր զգայուն ունէր Նա և որչափ բաւականութիւն էր զգում տարուայ եղանակների փոփոխակի հրապոյրներով։ Նազարէթի դաշտերում իրրև տղայ մանչ դալիս էր ժողովել Նա այն գեղեցիկ պատկերները, որոնցով զարդարում էր Իւր առակներն ու խրատները։ Այստեղի բլուրի վերայ էր ձեռք բերել Նա Իւր այն սովորութիւնը, որ յետագայ կեանքում շատ անգամ սարերի գլուխն էր բարձրանում՝ առանձնական աղօթքով գիշեր անցնելու...։

21. Մնում է դեռ մի կէտ ևս յիշելու, որ Յիսուսի վերայ կրթական մեծ ազդեցութիւն պէտք է գործած լինի։ Տասներկու տարեկանից ի վեր Նա իւրաքանչիւր տարի պասէքին Երուսաղէմ էր գնում։ Բաւերաշտպար մեզ հասել է մի տեղեկութիւն այդ այցելութիւններից առաջինի մասին։ Ով յիշում է իւր առաջին ճանապարհորդութիւնը հայրենի գիւղից դէպի իւր երկրի մայրաքաղաքը՝ կարող է ըմբռնել Յիսուսի այդ ժամանակ զգացած ուրախութիւնն ու յուզմունքը։ Նա պէտք է անցնէր չորս օրուայ ճանապարհ այնպիսի տեղերով, ուր իւրաքանչիւր քայլափոխ կապուած էր պատմական, աստուածաշնչական յիշատակների հետ։ Նա մտնում էր այդտեղ ուխտաւորների հետզհետէ աճող խմբի մէջ, որոնց սրտերը տարուայ մեծ աւնի պատճառաւ լի էին կրօնական բուռն ոգևորութեամբ։ Նա գնում էր մի քաղաք, որ իւրաքանչիւր հրեայ սիրում էր ջերմ և ուժգին սիրով՝ ինչպէս ոչ մի ժողովուրդ իւր մայրաքաղաքը չի սիրել. մի քաղաք, որ իւր սուրբ վայրերով և անթիւ որբազան յիշատակներով աւելի նամեծ հետաքրքրութիւն և յուզումն պէտք է ղարթեցնէր Նորա մէջ։ Այստեղ պատէքի տօնին գրեթէ յիսուն տարբեր երկրներից եկած օտարականներ էին խառնուում, որոնք նոյնչափ տարբեր լեզուներ էին խօսում և տարբեր հանդերձներ կրում։ Ի՞նչ զարմանք ուրեմն, որ վերադարձի օրը Նա այնքան զբաղուած էր նոր հետաքրքիր առարկաներով, մինչ ժամանակին իւրայիններուի մօտ, նշանակած տեղը չեկաւ։ Մի տեղ ամենից աւելի կապում էր Նորա ուշադրութիւնը՝ տաճարն էր այդ, առանձնապէս սորա այն մասը, ուր ուսուցանում էին հրէից գիտուններըը։ Նորա մտքի մէջ անթիւ հարցեր կային, որոնց համար պատասխան կկամենար ստանալ այդ գիտուններից, և ահա առաջին անգամ առիթը ներկայացել էր։ Այստեղ և գտան Նորան Յովսէփ և Մարիամ՝ չգտնելով Նորան մի օրուայ ճանապարհորդութիւնից յետոյ և վերադառնալով անձկութեամբ որոնելու Նորան. Նա ականջ էր դնում կենդանի հետաքրքրութեամբ իմաստուն խօսքերին։ Նորա պատասխանը մօր յանդիմանական հարցման մի անյողդողական պայծառ գաղափար է տալիս այն մտածմունքների մասին, որոնք Նորա մանկական հոգին զբաղեցնում էին Նազարէթի դաշտերում։ Աստըծուց որոշած մի մեծ գործ ունէր Նա կատարելու, որ Նորա կեանքի նպատակը պէտք է լինէր. այդ միտքն իշխում է Նորա յետագայ ամբողջ կեանքի վերայ։ Իսկապէս այդ միտքը պէտք է կազմէր իւրաքանչիւր կեանքի սկիզբն ու վերջը։ Յիսուսի խօսքերի մէջ շատ անգամ կրկնուում է այդ միտքը և բոլոր լրութեամբ արտայայտուում այն վերջին խօսքի մէջ, որով կնքեց Նա Իւր երկրաւոր կեանքը. «Ամենայն ինչ կատարեալ է»։

## ՇԻՔԱԳՈՆԵՐԻ ԱՂԱՆԴԸ.

Շէքերների աղանդը, որ տարածուած է Ամերիկայի զանազան կողմերում, շատ մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում. Այդ աղանդը սկիզբն է առել 1689 թուին Ֆրանսիայի Դօֆինէ և Վի-

ւարէ քաղաքներում։ Նորա հետևողները աշխատում էին ամենայն կերպ ապացուցանել, որ աշխարհի վերջը և Երկնքի արքայութեան ժամանակը հասել է, ուստի պէտք է ապաշխարել։ Նոքա իրեանց քարոզութիւնը հիմնում էին Յովհաննու յայտնութեան, Դանիէլ մարգարէի և այլոց մարգարէութեանց վերայ։ Էէքերների քարոզած վարդապետութիւնը իրրև հերետիկոսութիւն ճանաչուեց և նոցա սկսեցին խիստ հետևել, որից յետոյ նոքա տարածուեցան ամբողջ Եւրոպայում։

1706 թուին մի քանի էէքերներ ուղևորուեցին Անգլիա, որտեղ նոքա բաւականին յաջողութիւն ունեցան։ 1747 թ. էէքերները հիմնեցին իրեանց առաջին կուսակրօն համայնքը Մանչեստրից ոչ հեռու գտնուող մի տեղում։ Նոցա համայնքը անպատճառ մի որ և է անսովոր բանով աչքի էր ընկնում։ Աղօթքի ծայրայեղ ոգևորութեան ժամանակ մի քանի էէքերների առաջ պատկերանում էին տեսիլներ, մի քանիսի վերայ իջնում էր մարգարէութեան շնորհ, որոնք և սկսում էին յարձակուել արհամարհանքով իրեանց միջի մեղաւորների վերայ։ Բնակիչները յարձակւում էին նոցա բնակարանների վերայ, ամեն կերպ անպատւում, անարգում էին նոցա, բայց նոքա հետևելով իրեանց հիմնական սկզբունքին՝ չընդդիմանալ չարին, համբերութեամբ տանում էին ամենայն տեսակ վիրաւորանք։ Աղանդաւորների թիւը հետզհետէ աճում էր մինչև 1770 թ.-ը, երբ նոքա ընդունեցին մի նոր վարդապետութիւն, այն է Մեսսիայի երկրորդ գալուստը կնոջ կերպարանքով։ Այդ կին Մեսսիան Մանչեստրացի մի դարբնի աղջիկ էր, Աննա-Լի անունով։ Նա հեշտութեամբ կարողանում էր գրաւել գէպ ինքը բոլոր իւր ունկնդիրների սրտերը, յայտնում էր շատերին նոյն իսկ նոցա թաքցրած մտքերը և, չնայած իւր ամուսնացած լինելուն, այնուամենայնիւ քարոզում էր, որ մարդ կարող է փրկուել միմիայն իւր կուսութիւնը պահպանելով։ Նորան ծաղրում, նախատում էին. նորան հետևում, մեղադրում էին Աստուծուն անարգելու, հայհոյելու մէջ. բանտարկութեան էին ենթարկում, և հաւանական է մի օր էլ քարերի հարուածների տակ մեռցնէին։ Երբ մի անգամ տիրապետող եկեղեցու չորս պաշտօնեաներ նորան դատում էին, այդ անգրագէտ կինը իւր մի քանի խօսքերով այնպէս ազդեց իւր դատաւորների վերայ, որ նոքա ստիպուած եղան ազատել նորան բանտարկութիւնից։

1774 թուին Աննա-Լին մի երազ է տեսնում, որով հրամայում են նորան ուղևորուել Ամերիկա։ Այդ համարձակ ճանապարհորդութեան մէջ միմիայն ութ մարդ հետևեցին նորան։ Նրանք վարձեցին մի հին, անպէտք նաւ և երկու ամբողջ ամիս լողացին, ենթարկուելով ամեն տեսակ վտանգների, և ազատուեցին միմիայն հրաշքով։

Ովկիանոսի այն կողմում՝ Ամերիկայում, նոքա շատ դժուարութեանց հանդիպեցին և ստիպուած էին ապրել միմիայն իւրեանց ձեռքի աշխատանքի արդիւնքով։ Բայց նոքա չյուսահատուեցին. խղճի ազատութիւնը նոցա համար կեանքից աւելի թանկ էր։ Նոքա բնակութիւն հաստատեցին Ալբանի մօտ, վայրենի անապատում, որի շրջակայքը ամայացած էր պատերազմներից։ Որովհետև էէքերները ոչ մի դէպքում թոյլ չեն տալիս սպանութիւն, այդ պատճառաւ նոցա վերայ սկսեցին նայել իրրև հայրենասիրութեան թշնամիների վերայ։ Աննա-Լիին նորից բանտարկեցին, չնայած նորա նախագուշակութեան, որով յայտնում էր, որ գաղութը պէտք է բաժանուի անգլիական մայր երկրից, որ նորանում կրօնական ազատութիւն պէտք է լինի, և այդպիսով պատրաստւում է ճանապարհ Մեսսիայի երկրորդ գալստեան։ Շրջակայքում լուր էր տարածուել, որ մի կնոջ իւր կրօնական համոզմունքների պատճառաւ հալածում են։ Այդ կինը կարողացաւ ընդհանուր կարեկցութիւն գարթեցնել այլոց մէջ դէպ ինքը. նորան այցելութեան էին գալիս բանտում և նորա քարոզած վարդապետութիւնը՝ շատ հետևողներ ունեցաւ։ Կարճ ժամանակից յետոյ այդ մարգարէուհուն արձակեցին բանտից։ Իրան բոլորովին ազատ զգալով՝ նա սկսեց բացօդեայ միտինգներ կազմել, որտեղ մարգարէութիւններ էր անում, և երբեմն էլ ծայրայեղ կերպով ոգևորւում էր, աշխատելով համոզել ամբոխին, որ արդէն հասել է աշխարհաւորութեան ժամը. իսկ ամբոխը, որ միշտ ընդունակ է յափշտակուելու խորհրդաւոր բաններով և սքանչելիքներով, ուշադրութեամբ լսում էր մարգարէուհու ոգևորուած ճառերին։ Էէքերների քարոզութիւնները ամեն ժամանակ դժուարութեանց էին հանդիպում։ Հակառակորդներ լինելով ամուսնական միութեան նոյն իսկ այն դէպքում, երբ այդ միութիւնը օրինական է ըստ ամենայնի՝ նոքա խիստ հալածանքների էին ենթարկւում։ Նոցա վերայ ծիծաղում, երբեմն էլ ծեծում էին նոցա և անգութ կերպով տանջում. այնուամենայնիւ նոքա հեզութեամբ տանում էին այդ բոլոր անպատւութիւնները և դարձեալ շարունակում էին քարոզել նոյն վարդապետութիւնը՝ կուսութիւնը։ Աննա-Լին մեռաւ 1775 թուին 36 տարեկան հասակում։ Նորա մահից յետոյ մի շինութիւն կառուցուեց, որտեղ հաւաքւում էին աղանդաւորներն աղօթելիս։ Այդտեղ կազմակերպուեց մի համայնք «Նոր Լիւան» անունով, որտեղից և շէքերների աղանդը սկսեց տարածուել ամբողջ Ամերիկայում։ Իւրաքանչիւր համայնքի գործադիր իշխանութեան գլխը յանձնուած էր երկու եղբայրների և երկու քոյրերի։ Երկու ծերունիներ և երկու միանձնուհիներ կառավարում են նոցա հոգևոր գործերը, իսկ երկու սարկաւագներ և երկու սար-

կաւագուխները հոգս են տանում համայնքի տնտեսական պէտքերի մասին։

Մօտ ժամանակներս մի ֆրանսիացի կին այցելով շէքերների «Ալֆրեդ» անուանուած գաղութը, մանրամասն կերպով նկարագրել էր գաղութի ամբողջ կազմակերպութիւնը և աղանգաւորների կեանքը։ Փրանսուհի ճանապարհորդը, համայնքի ներից հրաւէր ստանալով, գնացել էր Ամերիկայում ապրող իւր մի հայրենակից կնոջ հետ շէքերների մօտ։ Մինչև Ուեչեստերա նոքա երկաթուղով ճանապարհորդեցին, իսկ այնտեղից սկսած մի առանձին տեսակ երկար կառքով, որի երկու նստարաններից իւրաքանչիւրի վերայ երկ-երկու մարդ էին նստած։ այդպես գնացին մինչև գաղութը։ Նոյն կառքի մէջ նստած էին և ագարակատերեր, որոնք հազուստով երբէք չէին տարբերւում քաղաքացիներից, և նոյնպէս շէքերների աղանդին հետևող մի կին՝ նրանց առանձնայատուկ զգեստով, որ աւելի տարօրինակ էր թւում, որովհետև Ամերիկայում բոլորը միանման զգեստներ են կրում։ Նա կրում էր հասարակ և մութ գոյն ունեցող հանդերձ, պարանոցի վերայ կրում էր մի վզկապ, որ մեր կողմերի գեղջկուհիների նման էր կապած, և մի բարձր մութ գոյն ունեցող նաւակաձև գլխարկ, որ համարեա ծածկում էր նորա դէմքը։

Այն ճանապարհը, որ տանում էր դէպ Ալֆրեդ անուանուած գաղութը, խիստ մաքուր էր։ Նորա աջ և ձախ կողմերում տնկուած կան ծառեր, որոնցից հեռու ձգւում են շէքերներին պատկանող արօտատեղիները։ Գաղութի սեպհականութիւնն են համարում մօտ 3000 ակր երկրագործութեան համար ամենայարմար հողեր, որոնցից մեծ մասը աշխատող ձեռքերի պակասութեան պատճառաւ մնում է անմշակ։ Գաղութի բնակիչները շատ զգալի կերպով քչանում են, այնպէս որ այժմ այնտեղ ապրում են միմիայն երկու ընտանիք։ Ընդհանրապէս շէքերների ընտանիքները բաղկացած են լինում 30-80 հոգուց։ 1860 թուականին գաղութում կար մինչև 6,000 բնակիչ. 1775 թուի աշխարհագրի ժամանակ բնակիչների թիւը հասաւ մինչև 2,415-ի, և ահա այդ ժամանակուանից սկսած պակասում է նոցա թիւը։ Աղգաբնակութեան այդ աստիճան պակասելու պատճառաւ նուազեցին և երկրագործական աշխատութիւնները, բայց շէքերները այնուամենայնիւ չյուսահատուեցին։ Նոքա հաստատ համոզուած են, որ մօտ է աշխարհի վերջը, որ իւրեանց աղանդը ներկայացնում է միակ ճշմարիտ եկեղեցին, որ վայելչքներից հրաժարելը, հասարակական խոստովանութիւնը, չարին չընդդիմանալը, խաղաղութիւնն ու միաբանակցութիւնը առաջնորդում են մարդկութեանը դէպ երկնային արքայութիւն։

Շէքերների գաղութում ամենայն տեղ նկատելի է որոշ կարգ ու կանոն, մաքրութիւն և զարմանալի լռութիւն։ Ամենափոքրիկ շշուկ անգամ չի լսւում։ Մշակները աշխատում են լուռ և շարժւում են որպէս ստուերներ, երբէք չեն լսւում սպառնական ձայներ։ Շինութիւնները միակերպ են և շատ հասարակ, բայց շատ յարմար, և բոլորը համարեա ներկուած են։—Ճանապարհորդներին ընդունեցին առանձին մտերմութեամբ։ Նոքա ամենից առաջ տեսան գաղութի ամենաազքատ խրճիթը, որը շէքերների սկզբնական բնակարանի մի պատկերն էր ներկայացնում։ Այդ հին տնակը պահւում է իբրև հնութիւն, որպէս զի աւելի պարզ նկատելի լինի յաճախորդների համար գաղութի արած յառաջադիմութիւնը։ Ամենայն տեղ երևում են ամուր շինութիւններ, որոնք կառուցուած են առանց մի որ և է յատակագծի, շրջապատուած արհեստանոցներով, որտեղ տեղի են ունենում զանազան աշխատութիւններ։ Մխարանութեան արհեստանոցներն այդ ժամանակ դատարկ էին, որովհետև աշխատաւորները զբաղուած էին դաշտային գործերով։ Ձմեռը նոքա պարապում են հիւսնութեամբ, պատրաստում են գեղեցիկ աւելներ։ նոցա ձեռագործը որոշւում է ուրիշներից ոչ միայն ամրութեամբ, այլև նրբութեամբ։ Համայնքը պարապում է նոյնպէս և անասնապահութեամբ։ Ոչ ոք իրաւունք չունի մերժելու իր համար որոշած աշխատանքը։ Մինչև անգամ պաշտօնատեր անձինք պարտաւոր են աշխատել, այդ պատճառաւ էլ իւրաքանչիւր շէքեր մի քանի արհեստներ գիտէ։

Կանայք կոպիտ և ծանր գործեր չեն կատարում։ Նոցա արհեստանոցները լինքն են և ամառ և ձմեռ ժամանակ, այնտեղ քայրերը լըզում են, ինչպէս մեղուները փեթակում։ Արհեստանոցները ընդարձակ են, նոցա մէջ շինուած են յարմար օգանգ.քներ։ Լուսամուտները ուղղուած են դէպ այն կողմ, որ կողմը արեգակ է լինում. ամենայն ինչ լուացած, մաքրած է։ Երիտասարդ աղանդաւորուհիներից մի քանիսը կարում են սպիտակեղէն, մեանները զգեստներ։ Ընդհանրապէս կրօնաւորական խիստ կեանքին, հանդերձների մէջ նկատում է մի ինչ որ պչրանք, որից յետ չի մնում և ոչ մի կին։

Դէմքի զարմանալի թարմութիւնը շատ առանձնայատուկ է շէքերներին։ Փոքրիկ գլխանոցը, որի տակից և ոչ մի մազ չի ընկնում ճակատի վերայ, միայն տղեղներին չի յարմարւում, իսկ մեծ մասի դէմքին տալիս է առանձնապէս կինդանի արտայայտութիւն։

Իւրաքանչիւր քոյր ունի իւր առանձին փոքրիկ սեղանը։ Շատերը նոցանից զբաղուած են մի առանձին տեսակ սօսու թելիկներից քաման գործելով։ Արհեստանոցներից մէկում սենեակի մէջտեղը դրած է մի սեղան, որի վերայ կայ երաժըշտական մի մեքենայ, որ մօտ ժամանակներում

համայնքը ընծայ էր ստացել։ Մեքենան ածում է հայրենասիրական և կրոնական մի քանի օրհներգութիւններ։ Առաջ շէքերների մէջ երաժշտութիւնը մեղք էր համարւում, բայց ժամանակի ընթացքում հաշտուեցին այդ գաղափարի հետ։ Ամբողջ օրն այդ մեքենան ածում է իւր օրհներգները, իսկ պայծառ արեը ուրախ կերպով ներս է նայում բարձր լուսամուտներից, կարծես հրճուելիս լինի կանացի գեղեցիկ դէմքերով, որոնք ենթարկել են իւրեանց անձը կուսութեան, բայց Հռովմի վեհատեան քրմուհիների դէմքի խիստ արտայայտութիւնը չեն ցոյց տալիս։

Աղանդաւորների ձեռնակերտները տեղաւորուած են մի առանձին շինութեան դահլիճում։ Ամբողջ այդ սենեակի սլատերի մօտ դրուած են պահարաններ, որոնց մէջ տեղաւորուած են սուսու մանրաթելիկներից պատրաստած տուփիկներ և կողովներ։ Այդ ձեռագործները մեծ յաջողութեամբ ծախւում են ամբողջ Ամերիկայի ծովափնեայ քաղաքներում։ Քոյրերը պատրաստում են նոյնպէս հիանալի պահունիք (консервы), որ ուղարկում են Փարիզ, և նոյնպէս շէքերական թուրջ (настойка), որ շատ օգտակար է ոսկրացաւ ունեցող հիւանդների համար։

Համայնքի լուացարանը կառուցած է բոլոր նորագոյն յարմարութիւններով։ Այն մեծ տան մէջ, որտեղ ապրում են ընտանիքի արական և իգական անդամները միասին, կայ մի լայն միջանցք, որ բաժանում է երկու սեռի ննջարանները միմեանցից։ Դռները փակւում են փայտեայ փակոցներով։ Հասկանալի է, որ ընտանիքի անդամները իւրեանց աղանդի կանոնները սրբութեամբ են պահում, որի իրրև զլխաւոր վարդապետութիւն ճանաչւում է կուսութիւնը։ Բայի դրանից այդ կանոնները խիստ կերպով արգելում են ամեն տեսակ մանաւոր խօսակցութիւններ և զբօսանքներ կատարել երկուսով։ Նոյն կանոնները վերաբերում են մինչև անգամ նրանց, որոնք մինչև այդ համայնքի մէջ մտնելը կապուած էին միմեանց հետ ամուսնական կապերով։ Կանանց ննջարաններում դրուած են նեղ բազմոցներ, որոնք մահճակալների տեղ են ծառայում։ Ամենայն տեղ տիրում է զարմանալի մաքրութիւն։ Յատակի վերայ կապերտներ չեն փռում, որպէս զի աւելի հեշտ լինի նրանց մաքրելը։ Ոչ մի տեղ պատերի վերայ նկարներ չեն երևում, որովհետև նոցանից յառաջանում է փոշի։

Ճանապարհորդուհիների այցելութեան ժամանակ տղամարդիկ գաղութից դուրս ունեցած աշխատութեամբ էին զբաղուած։ Մի քանիսը կրում էին անտառից սայլերով փայտ, մի քանիսն էլ կըտրում։ Աշխատում են առանց բացառութեան և պատանիները և ծերունիները։ Բոլորը առոյգ և ուրախ էին։ Ութսուն և հինգ տարեկան ծերունին, թէև արդէն կորացած, բայց գարձեալ մի ինչ որ բանով զբաղուած էր։ Հաղուագիւտ չեն շէքերների մէջ մինչև անգամ իննսուն տարեկան ծերունիներ։

Թոչունների վերայ հսկում են կանայք։ Թըռչուններից իւրաքանչիւր տեսակի համար շինուած են առանձին տեղեր։ Անասունների բակում ինչպէս և համայնքի բոլոր հիմնարկութեանց մէջ, պահպանւում է զարմանալի մաքրութիւն։ Կովերի փուռածքը միշտ թարմ և մաքուր է։ Նոցա եղջիւրները արմատից սղոցած են, որը մի տեսակ միամիտ կերպարանք է տալիս նոցա։ Պաշտային աշխատութիւնների համար ընտրած եղները և ձիաները լաւ տեսակին են պատկանում։ Առհասարակ բոլոր կենդանիների վերայ օրինակելի հսկողութիւն է տիրում։ Այստեղ շներ բնաւ չեն պահում, բայց կատուներ շատ կան։

Շէքերները թէև բաւական չեն բարիս բուն նշանակութեամբ, բայց այնուամենայնիւ զսպում են իրանց միս գործածելուց։ Խոզինի և խմիչքներ (օգելից) գործածելը խստիւ արգելուած է։ Ուտում են նոքա միասին խմբուած, առաւօտեան ժամի 6-ին, կէս օրին և երեկոյեան։ Տղամարդիկ հաւաքւում են մի առանձին սեղանի շուրջը, կանայք միւս, իսկ մանուկները մի երրորդ։ Ուտելուց առաջ և յետոյ, և նոյնպէս քնելիս և քնից վերկենալիս, շէքերները ծնրադրութիւն են անում, առանց խօսելու մի որ և է բան։ Երեկոյեան 9 ½ ժամին շէքերների տներում և ոչ մի տեղ չի երևում կրակ։ Առաւօտեան 5 ժամին հնչում է զանգակի ձայնը, որից անմիջապէս յետոյ ամբողջ ընտանիքը պարտաւոր է վեր կենալ։

Աղօթելու համար որոշուած շինութեան մէջ գտնում է մի մեծ դահլիճ, առանց որև է զարդարանքի. նորա մէջ սեղանները դասաւորուած են ամֆիթեատրոնի ձևով։ Այդ դահլիճում աստուածպաշտութիւն չի կատարւում, որովհետև այնտեղ աւելի նկատելի է այդ աղանդի հետևողների փոքրիկ քանակութիւնը, այդ պատճառաւ աղօթում են մի այլ փոքրիկ դահլիճում։ Երբոր աղանդաւորները հաւաքւում են աղօթելու, տղամարդիկ առանձին են կանգնում կանանցից։ Յետոյ երգւում են նոցա սրբազան օրհներգները, որոնց մէջ երբեմն հնչում է միևնոյն ձայնը անփոփոխ կերպով, արևելեան երաժշտութեան նման։ Օրհներգների չափը արագանում է, շէքերները սկսում են պտոյտ գալ մի տեղում։ Այդ ժամանակ երիտասարդ կանայք սահում են դահլիճի երկարութեամբ և ապա կրկին պտոյտ գալիս։ Աւելի ջղային բնաւորութիւն ունեցողները ծայրայեղ ոգևորութիւն են ցոյց տալիս։ Ապա սկսւում է գուշակութիւնների կարգը, մեղքերի բարձրաձայն հրապարակական ղղջումն և ապա նորից կրկին նոյն անմիտ պարը, որ նման է դերուիշների պարին։

Շէքերների խոստովանութիւնը նման է կա-

թոլիկական եկեղեցու խոստովանութեան, այն տարբերութեամբ միայն, որ նոքա մեղքերը խոստովանում են միևնոյն սեռի անձնաւորութեանց մօտ։ Մեղքերի արձակումն չի լինի, միայն խոստումն է տրւում, որ եթէ զղջացողը նորից մեղանչէ, պարտաւոր է նորից խոստովանուելիւր մեղքը և զղջալ։

Առհասարակ շէքերների աղանդի իրրև հիմք ծառայում է ոչ թէ հանրիշխանական (демократическое), այլ աստուածապետական (теократическое) սկզբունքը։ Մարդկութեան հոգեկան զարգացման մէջ նոքա ճանաչում են երկու շրջան՝ հին և նոր։ Ագամ և Եւան հին շրջանի մարմնացումն են, որոնց նպատակն էր ամուսնութիւն և մարդկային սեռի աճումն։ Յիսուս Քրիստոս մի նոր շրջանի անձնաւորացումն է, որի վարդապետութիւնն է կուսութիւն և վերածնութիւն։ Բոլորը պարտաւոր են հետևել Քրիստոսի վարդապետութեանց՝ լինել հեզ, բարեհոգի և ենթարկուել բարձրագոյնի իշխանութեանը։ Շէքերները ընդունում են մկրտութիւն ոչ ջրով, այլ հոգւով։ Մարդկանց հոգին անմահ է։ քայքայուում է միմիայն մարմինը, երկրային թաղանթը, բայց հոգին ապրում է յաւիտենական կենաք, եթէ կատարում է Քրիստոսի պատուիրանները։ Շէքերների օրէնքը խիստ կերպով արգելում է մեկին նիւթապէս վնաս հասցնելը, ոն պահելը և նոյնպէս պատերազմ մղելը։ Մարդու մահից յետոյ նորա հոգին ոչ դրախտ և ոչ դժոխք է գնում։ Ինչպէս դրախտը, նոյնպէս և դժոխքը ներկայացնում են հոգեկան մի առանձին դրութիւն, եթէ մարդ ձգտում է կեանքի մէջ բարիք գործել, յիշելով առաքեալի իմաստալից խօսքերը, թէ Հաւատը առանց գործի մեռեալ է. եթէ նա ապաշխարում է իւր մեղքերը, որոնք յատուկ են մարդկային տկար բնութեան՝ նորա հոգին էլ կդուարճանայ բաղդաւորութեամբ, երանութեամբ. ահա հենց սրանումն է դրախտ ասածը։—Շէքերների դաւանութեան բոլոր այս մանրամասնութիւնը ճանապարհորդներին հաղորդել էր «Ալֆրեդ» անուանուած համայնքի տանուտերը։ Այդ դաւանութեան շատ մանրամասնութիւնները փոխ են առնուած սպիրիտուալիստների վարդապետութիւնից։ Այն հարցին, թէ ինչ կլիներ աշխարհի դրութիւնը, եթէ մարդկութիւնը հետևէր շէքերների վարդապետութեանը՝ համայնքի աւագը պատասխանեց, որ մարմնական զուարճութեանց ժուժկալութիւն և կուսութիւն պահպանելը Քրիստոսի պատուէրներից մեկն է։ Ապա համայնքի աւագը սկսեց ապացուցել, որ մարդկային սեռի աճումը բնութեան պահանջ չէ, որ եթէ այլևայլ տարափոխիկ, հասարակական հիւանդութիւններ կամ պատերազմներ տեղի չունենան, բնակիչների թիւը վաթսուն տարուայ ընթացքում կկրկնապատկուի և մի քանի հարիւր տարուց յետոյ երկրիս վերայ մարդկանց բնակութեան համար տեղ չի լինի։ Ըստ Մալթոսի, մարդկութեան սեռի աճման դէմ պէտք է որոշ սահմաններ դնել։ Համայնքի աւագի խօսակցութեանց մէջ հընչում էր քրիստոնէութեան առաջին դարերի հոգևորականների խիստ քարոզը։ Ակներև է, որ վանականների և շէքերների կեանքի մէջ մեծ նմանութիւններ կան։ Նոյն պահանջը միասին աղօթելու առ Աստուած, նոյն խորին հաւատը, նոյն տեսակ վերաբերմունք դէպ ընդհանրութեան շահերը, սեփական անձից ձեռք վերցնելը, ընդհանրութեան բարիքին ծառայելը։ Տարբերութիւնը միայն նրանումն է, որ շէքերները աւելի շատ են հոգս տանում աշխարհային բարիքների մասին. շատ յաճախ են կրկնւում նոցա խօսակցութեանց մէջ հետևեալ բառերը՝ հաշուեկշիռ, արժէքների անկումն, առհասարակ տնտեսութեան վերաբերեալ այլ և այլ խօսակցութիւններ։ Ինչ. վերաբերում է կամաւոր աղքատութեան, ունեցուածքը աղքատների մէջ բաժանելուն, որ յաճախ է պատահում կաթոլիկական երկրներում, շէքերների մէջ երբէք գոյութիւն չունի։ Հենց նոյն իսկ նոցա ցոյց տուած հեզութիւնը ամեն ժամանակ անկեղծ չէ։ Նոցանից մեծ մասը համարում է իրան մեղքից ազատ, իսկ այդպիսին հազիւ թէ կարողանայ հեզաբարոյ լինել։

Զարմանալին այն է, որ շէքերների մէջ երբէք վէճեր տեղի չեն ունենում, և ամենադարտակ գործերում անգամ պարզ երևում է նոցա ունեցած երկիւղը, երբ որոշուածի պէս չի կատարւում մի բան։ Աշխատասիրութիւնը նոցա համար բարեգործութիւն է համարւում. փոխադարձ յարաբերութիւնները խիստ ազնուաբարոյ են, այնպէս որ, եթէ եղբայրը մի որ և է խիստ բան արտայայտէ միւս եղբօր դէմ, աղօթքից կզրկուի, մինչև որ ներողութիւն խնդրէ՝ ոչ միայն անպատուածից, այլ և այդ անպատուութեանը ներկայ եղողներից։ Չնայած որ շէքերները պարապում են առևտուրով և առանձնապէս հոգում են իւրեանց բարելաւութեան մասին, այնուամենայնիւ յայտնի են իւրեանց մարդասիրութեամբ։ Այդ աղանդի հակառակորդները պնդում են, որ շահասիրութիւնը մի օր վերջ կդնէ այդ աղանդին, որ մօտ ապագայում նոցա համայնքները երկրագործական և արհեստագիտական գաղութների կվերափոխուին, որտեղ այլ ևս այն խստութեամբ չի պահպանուի մարմնական զուարճութեանց նկատմամբ ժուժկալութիւնը։ Շէքերների թուի աստիճանաբար նուազումը մասամբ արգարացնում է նոցա հակառակորդների ենթադրութիւնները։ Տեսնում հաստատած շէքերների նոր գաղութները ոչ մի բանով չեն ցոյց տալիս իւրեանց մաքրակրօն և ճգնաւորական լինելը։

Երբ ճանապարհորդուհիները գուրս էին գալիս «Ալֆրեդ» անուանուած գաղութից, նոցա պա-

*տահմամբ հանդիպեց ցիգանների մի սայլ, որ գնում էր այնտեղ:*

*—Դուք կընդունէ՞ք այդ մարդկանց, հարցրին ճանապարհորդուհիները իրանց ճանապարհ գցող աւագին:*

*—Այո, ինչ որ անհրաժեշտ է մարդուն, մենք չենք մերժի. Մեր տներում նոցա չենք տեղաւորի, բայց փող ենք տալիս նոցա՝ վճարելու իրանց պատըսպարող տների տէրերին:*

*Աշխատասէր չէքերների և թափառող ցիգանների խմբի մէջ, որոնք ո՛չ ցանում, ո՛չ հնձում և ո՛չ շտեմարան են հաւաքում, բայց աճում, բազմանում են արագ, որին իրրև ապացոյց կարող է ծառայել փոքրիկ երեխաների խումբը, որ վազում էր սայլի ետևից—չկան ընդհանուր նման կէտեր: Ցիգանները անպատճառ սարսափ կազդեն չէքերների աղանդի մոլեռանդ հետևողներին:*

*Գաղութների ծաղկելու գաղտնիքը կայանում է երիտասարդ ոյժերի առատութեան մէջ: Մորմոնները հասկացան այդ գաղտնիքը և ընդունեցին բազմակնութեան վարդապետութիւնը: Նոցա մէջ պատահում են այնպիսի մարդիկ, որոնք ունենում են մինչև 50 զաւակներ. հասկանալի է արդէն, որ այդպիսի պայմանների մէջ անապատներն անգամ կարող են արագ կերպով բնակութեան տեղ դառնալ: Չէքերները հակառակ ծայրայեղութեան մէջ ընկան, ընդունելով կուսութեան վարդապետութիւնը: Չնայած նոցա պուրիտանական և ճգնական սկզբունքներին, այնուամենայնիւ նոցա հաւատոյ ուսմունքի և գաղութի կազմութեան մէջ շատ և շատ համակրելի կողմեր կան: Ամէնքի համար պարզ նկատելի չեն չէքերների աղանդի համակրելի կողմերը: Չէքերների լռիկ և աշխատասէր գաղութը հրապուրիչ է այն մարդկանց համար, որոնք հակումն ունին դէպ միստիքականութիւնը: Ուրախալի է տեսնել, թէ ինչպէս առաւօտեան լուսածագին զարթնում է գաղութը և մեծ եռանդով առանց ձանձրանալու ձեռնարկում է աշխատելու ամբողջ օրը: Շրջակայքում ամենայն ինչ լուռ է, հանդարտ և անձայն. անխոնջ մշակները շարժւում են այս և այն կողմ, որպէս ստուերներ, որոնց վերայ ընկնում են արևի պայծառ ճառագայթները:* *

Գ. Ղ.

---

* Թարգմ. *„Вѣстникъ и иностранной литературы“* 1897 թուի դեկտեմբեր համարից.

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ.

## ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

*Գերմանիա.*

Անցեալ Թուականի վերջերին ամենակարևոր և հրատապ խնդիրներից մէկն այստեղ այն էր, թէ ինչպէս պէտք է կազմակերպել Վիւրտեմբերգի բողոքական եկեղեցւոյ կառավարութիւնը, երբ մօտիկ ապագայում Թագաւորական իշխանութիւնը կաթոլիկական դաւանութիւն ունեցողի ձեռքն անցնի.—Խնդիրն այն է, որ բողոքական եկեղեցիների մէջ եպիսկոպոսական իշխանութեան ներկայացուցիչ կամ եկեղեցական վարչութեան գլուխ համարուում է երկրի իշխանը: Կրօնական վերանորոգութեան դարում, երբ իւրաքանչիւր գերմ. առանձին երկրի ժողովուրդ նոյն դաւանութիւնը պարտաւոր էր ունենալ, ինչ որ իւր իշխանն ունէր՝ այսպիսի հայեցողութիւնը շատ դժուարութիւններ չէր պատճառում: Սակայն երբ մի քանի տէզ հանգամանքները փոխուեցան և տեղի ունեցան դէպքեր, երբ մի գրեթէ ամբողջապէս լութերական գարձած երկրի իշխան կաթոլիկ, կամ նոյն իսկ կալվինական, դաւանութիւն էր ընդունում՝ բնականաբար հարց էր յառաջ գալիս, թէ արդեօք պէտք է պահանջէ՞ նա իւր նախկին իրաւունքները եկեղեցւոյ նկատմամբ և ո՞ր եկեղեցին այնուհետև պետական պէտք է համարուի՝ այն, որին ժողովուրդն է պատկանում, թէ՞ որին իշխանական տունը: Տարբեր ժամանակ և տարբեր տեղերում այդ հարցը տարբեր լուծումն է ստացել. երկար վէճերից և խորհրդածութիւններից յետոյ մի, ըստ ամենայնի բողոքական եկեղեցւոյ համար նպաստաւոր, լուծումն ստացաւ այն Վիւրտեմբերգում: Այդտեղ ժողովրդի խոշոր մեծամասնութիւնը բողոքական դաւանութիւն ունի. բողոքական էին մինչև այժմ նաև երկրի թագաւորները. բայց ներկայումս իշխող ընտանիքի մի ճիւղը ժամանակ առաջ կաթոլիկութիւնն է ընդունել և սպասում է այժմ, որ ներկայ անժառանգ թագաւորի մահից յետոյ՝ նորան կանցնի թագը, և այդպիսով «Վիւրտեմբերգ երկրի եկեղեցին» կունենայ կաթոլիկ գլուխ. Սակայն վերջին ժամանակ հաստատուած սահմանադրութեան համաձայն այդ եկեղեցին անկախ ազգային եկեղեցի կմնայ և նորա կապը պետութեան հետ պահպանելու համար մի վարչական ատեան կկազմուի, որին կմասնակցեն «գաղտնի խորհրդի» (բարձրագոյն պետական վարչութեան) երկու անդամներ՝ մէկը սովորաբար լուսաւորութեան նախարարը, եթէ բողոքական է նա՝

Ենթադրուում է որ այդ բարձրագոյն պաշտօնեաները, միջոց ունենալով մօտից ծանօթանալու եկեղեցւոյ գործերին՝ կկարողանան պաշտպանել նորա շահերը պետութեան առաջ և համերաշխութեան միջնորդ լինել։

—Աւելի ընդարձակ շրջաններում հետաքրքրութիւն զարթեցրին Պրուսական եկեղեցւոյ ընդհանուր ժողովի որոշումները։ Կարևոր էր մանաւանդ պաստորների ռոճիկ որոշելու խնդիրը, և այդ առթիւ տուած վճիռը գոհութեամբ ընդունուեցաւ ամեն կողմ։ Որոշուած է, որ նոր պաշտօնի մէջ մտնողները ստանան առնուազն 1800 մարկ (մօտ 900 ր.) և այդ ռոճիկը բարձրանայ մինչև 4000 մարկ։ Նշանակութիւն ունեցողն աւելի այն հանգամանքն է, որ նոքա այժմ զուտ դրամ պէտք է ստանան և համեմատաբար աննկատ դիրք ունենան, մինչդեռ առաջ գիւղերում դանազան հողային տուրքեր էին ստանում, և այդ պատճառաւ կախումն էին ունենում համայնքի ներկայացուցիչներից։—Պակաս գոհացուցիչ էր ժողովի որոշումը աստուածաբանական ուսման տևողութեան նկատմամբ. պարտաւորեցուցիչ չափ ընդունուեցաւ կրկին վեց կիսամեակ, չը նայելով որ բոլոր համալսարաններում ցանկանում էին երկարացնել այդ ժամանակամիջոցը, գիտութեան օրըստօրէ աճող պահանջների համար բոլորովին անբաւական համարելով այն։ Ժողովի այդպիսի որոշումը յառաջ է գալիս նորանից, որ այժմեան աստուածաբանական գիտութիւնը իւր ազատամիտ ուղղութեամբ՝ կառավարչական շրջանների տեսակէտով, վնասակար աղդեցութիւն է ունենում երիտասարդ սերունդի վերայ։ Աւելի մեծ անբաւականութիւն յառաջ բերեց ժողովի բռնած անվճռական դիրքը դէպի մենամարտութեան խնդիրը և խիստ անբարեհաճ կերպով վերաբերուելը դէպի հոգևորականների մանակցութիւնը հասարակական խնդիրներում։

—Բերլինի համալսարանն, ինչպէս գիտութեան միւս ճիւղերի, այնպէս և աստուածաբանութեան նկատմամբ կենտրոն է դառնում հետզհետէ և դէպի իրեն գրաւում լաւագոյն ոյժերը։ Պահպանողականների համար շատ անախորժ պէտք է լինի ուրեմն, որ ազատամիտ ուղղութիւնն է իշխում այստեղ, ուստի նոքա ամեն կերպ աշխատում են այնպիսի պահպանողական ուսուցչապետներ կարգել տալ, որոնք Հառնակի, Կաֆտանի նման հեղինակութիւնների հետ մրցել կարողանան։ Այդ նպատակի համար նոքա կառավարութեան օժանդակութեամբ այստեղ փոխադրել տուին, իբրև դաւանաբանութեան ուսուցչապետ, պրոֆ. Հլատտերին, բայց նա դիմանալ չկարողացաւ և անցեալ տարի ստիպուած եր հրաժարական տալ։ Ասյա սկսան նոր մարդիկ որոնել, և հրաւիրուեցաւ վերջերս Վրայֆսվալդից յայտնի պրոֆ. Կրեմէր, բայց նա ևս խոհեմութիւն է համարել բացասել այդ հրաւէրը։

—Հալածական հայերի ջատագով և պաշտպան պաստոր Լեպսիւս, որ անցեալ տարի «Քրիստոնէական արևելք» ամսաթերթն էր հրատարակում և քիչ չնպաստեց դորանով հետաքրքրութիւն և կարեկցութիւն զարթեցնելու հայերի համար, այս տարուայ սկզբից նորա փոխարէն մի ուրիշ ամսաթերթ է հրատարակում «Քրիստոսի թագաւորութիւնը» անունով։ Նա խոստանում է, թէ կշարունակէ այստեղ քրիստոնեայ արևելքին վերաբերեալ հարցեր արծարծել, հրատարակելովնաև հետը պարբերաբար մի տեղեկագիր հայերին օժանդակող ընկերութեան աշխատանքի և հաշիւների մասին։

—Christliche Welt թերթի ներկայ թ. 2, 4 և 5 համարներում շատ հետաքրքիր յօդուածներ կան Հայոց եկեղեցւոյ մասին, որոնց՝ Հայաստան ճանապարհորդած և անձնական ծանօթութիւններին, առատ պաշար ունեցող, հեղինակը աշխատում է ցոյց տալ, թէ ինչ կարիքներ ունի մեր եկեղեցին և ինչ դժուարութիւնների պէտք է յաղթել նոցա լցուցանելու համար։ Առանձին ուշադրութեան արժանի է համարում նա մեր եկեղեցւոյ ազգային բնաւորութիւնը, որի պատճառով և անօգուտ միսիոնարների գործունէութիւնը հայերի մէջ. յարենադրդութեան իսկական միջոցներն են այստեղ, նորա կարծիքով, ընդարձակ չափով կրթութիւն տարածել և բուն իսկ հայ հոգևորականութիւնը բարձրացնել։

### ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ։

Հռոմից ստացուած տեղեկութիւնների համաձայն պապը իւր քահանայութեան վաթսունամեայ յոբելեանին աւելի քան վեց միլիոն ֆրանկ արժողութեամբ ընծաներ է ստացել։ Ի միջի այլոց նուիրել են՝ Աւստրիայ կայսրը 100,000 ֆրանկ. Գերմ. կայսրը 50,000 մարկ. Նորֆոլկի դուքսը 200,000 ֆրանկ. Սպանիայ խնամակալուհի—թագուհին 100,000 ֆ. Իզաբելլա թագուհին մի շափիւղայ խաչ. մեր Կայսրը մի պատուական մատանի. Կայսրուհին յակինթներով և ադամանդներով զարդարուած մի մասունքների տուփ. տիկնանց մի հոգևոր ընկերութիւն զանազան մեծութեամբ ոսկէ դրամներից կազմուած համրիչ. Ցաճկաց սուլթանը ադամանդ մատանի, Պարսից շահը ձոյլ ոսկէ սեղան։

—Փլորենցիայի ազգային մատենադարանի մի բաժինը կազմում է կրօն. վերանորոգութեան վերաբերեալ գրքերի մի շատ կարևոր ժողովածու։ Նոքերս հարց է զարթել լրացնել այդ ժողովածուն և կազմել մի մատենադարան այն բոլոր գրքերի համար, որոնք մնել են Հռոմէական եկեղեցւոյ արգելած գրքերի ցանկի մէջ։ Այդպիսով մեծ յարմարութիւն ընծայած կլինին հետաքրքրողներին ուսումնասիրել այդտեղ պապականութեան կռիւը

ժամանակակից քաղաքակրթութեան և խղճի ազատութեան արգասիքների հետ։

—Անցեր եպիսկոպոսը, որ կաթոլիկական միսիոնի գլուխն է Չինաստանում, վերջին ժամանակ Կերմանիոյ և Չինաստանի մէջ տեղի ունեցած ընդհարման առթիւ, արժանացել է Գերմ. կայսեր առանձին շնորհներին։ Կայսրը ոչ միայն մի բարձր շքանշան է շնորհել նորան, այլ և անձամբ իւր մօտ ընդունելով՝ ընծայել է իւր ձեռքով ստորագրած պատկերներից մէկը։

—Civilita catholica Վատիկանի պաշտօնական թերթը «կաթոլիկական շահերի վերջին նպատակէտը» վերնագիր կրող մի յօդուածով կրկին մի անգամ այն գաղափարն է արծարծում, թէ Հռոմէական եկեղեցւոյ գործակալները ազատութիւն պէտք է ունենան ամեն տեղ աշխատելու, որ Քրիստոս՝ ուրիշ խօսքով Քրիստոսի փոխանորդ պապը, աշխարհի վերայ իշխէ։ Այդ նպատակին հասնելու համար կարևոր է համարում ընկերութիւնների, ժողովների, պետրոցի վերայ գործ դրած աղետութեան միջոցաւ միջնադարեան դրութիւնը վերականգնել, երբ Հենրիկոս Դ. կայսրն Բոբիկ իրեւ ապաշխարող ներկայանում էր Գրիգոր Է. պապին։

— Հետաքրքիր է անշուշտ իմանալ, թէ ինչպէս են նամակ հասցնում պապին։ Վատիկանում ստացուող գրութիւնների թիւը խիստ մեծ է՝ քսան հազար իւրաքանչիւր օր, որոնք ընդունուում են առոյրէ դրան և բաժանուում զանազան հատատուութիւններին, Վատիկանի պալատականներին ծանօթ մարդը, եթէ կամենում է պապի անունով ուղղած գրութիւնը տեղ հասնէ, գործ է դնում առանձին տեսակ թուղթ, որոշ գործարանում պատրաստուած, գրում է լատիներէն և սկսում է անպատճառ՝ «Ամեներջանիկ Հայր» բառերով. ստորագրութեան մէջ պէտք է անպատճառ անուն և ազգանուն լինեն. միայն ազգանունով գրուածները պատասխան չեն ունենայ։ Այսպէս գրուած և սպիտակ զմուռսով կնքուած նամակների հասցէն պէտք է լինի. «Սորին Սրբութեան Լեւն ԺԳ. Պապին, բարեբաղդութեամբ Իշխողին». այն ժամանակ նորա անպատճառ պապական գրասենեակ կհասնեն և խնամքով կպահուեն ի յաւիտեան։ Բայց երբ մէկը կամենում է, որ ինքը պապը կարդայ նորա նամակը, աւելի մեծ դժուարութիւններ պէտք է յաղթէ նախ։ ամենից յարմարն այն է, որ մի միջնորդ ունենայ Վատիկանի շրջապատողների մէջ, և այն ժամանակ ի հարկ է աժան գնով իւր ցանկութեան չի հասնի, Հատերը երբեմն դիմում են կողմնակի նպատակով, և այն ժամանակ աւելի ձեռնտու է ի հարկ է, որ չկարդան նոցա գրուածքը, բայց նորա նպատակին հասնեն. այսպէս օրինակ մի ատամնաբոյժ, իւր գրքի համար պապի հաճութիւնն ստանալու նպատակով, թերթերը հանել և տեղը թղթէ գրամ էր շարել, և ստացաւ ցանկացածը։ Կայ սակայն և մի աժան եղանակ, որ մինչև այժմ ծածուկ էր պահուում։ եթէ վերոյիշեալ հասցէն կրող ծրարի մէջ մի երկրորդ ծրարով դրուի նամակը, որի հասցէն լինի. «Նորին Սրբութեան Պապին, սուրբ Հռոմէական և տիեզերական ինկվիզիցիայի Գլխավորին»— ոչ ոք համարձակութիւն չի ունենայ այդ ծրարը բանալու, բացի պապից, այդ կանոնը դրել է Պողոս Դ. գաժան պապը, որ ինկվիզիցիային այնչափ այժ տուաւ և նորա գլխավորութիւնը պապերին վերապահեց։ Այդպիսի նամակները Լեւն ԺԳ. բաց է անում և առանց կարդալու տալիս է ամենազօր կարդինալ Ռամպոլլային. այնուհետև հասարակներին պատասխանում է պապ. դիւանի քարտուղարը, աւելի կարևորներին ինքը Ռամպոլլան. իսկ եթէ գրուածքը խիստ կարևոր է, մի իշխանի կամ զօրեղ մարդու կողմից՝ այն ժամանակ պատասխան է գրում պապը կոնդակով. վերջինս միայն եկեղեցական նշանակութիւն ունի. իսկ Ռամպոլլայի գրածների համար պատասխանատու է վատիկանը, բայց ոչ պապը։

—Հռոմը բաւական է համարում այժմ էլ հրէաների դէմ զայրոյթ և ատելութիւն գրգռել։ Պաշտօնական „Osservatore Romano„ թերթը «Հրէական ցեղը» վերնագիր կրող մի յօդուածով աշխատում է ցոյց տալ, որ վերջին ժամանակ հրէաների դէմ յառաջ եկած կրքերի յուզումը Ֆրանսիայում, Բոհեմիայում, Ռումինիայում և ուրիշ տեղեր, նախախնամութեան հաճելի է, ինչպէս և եղել է առաջ Հրէաների, Հուգենոտների, Ալբիգեանների դէմ հանած հալածանքը։ «Մի ազգ, ասուում է այստեղ, որի վերայ Աստուծոյ անէծքը կայ, մարդոց կողմից օրհնուել չի կարող։ Նա դատապարտուած է անդադար և անհանգիստ երկրի վերայ թափառելու»։ Օրինակելի քարոզ, աւետարանի ոգուց բղխած . . .

—Ֆրանսիայում հակահռոմէական հոսանքը գնալով աճում է հոգևորականութեան մէջ։ Նոքերս կաթոլիկ եկեղեցւոյ ծոցից մի քահանայ գըրում է իւր եպիսկոպոսին. «Տասը տարի հռոմէական եկեղեցւոյ սպասաւորութեան գործում բաւական էին իմ մանկութեան բոլոր ցնորքներին և յոյսերին վերջ տալու համար։ Եկեղեցւոյ մէջ աշխարհային ձգտումներն աւելի մեծ տեղ են բռնում քան Աստուծոյ պատուէրը՝ դաւանաբանութիւնը զրկել է մտածողութեան իւր պաշտօնից. արտաքին պաշտօնակատարութեան դիմաց հոգւով և ճշմարտութեամբ երկրպագութիւնը կորցրել է իւր նշանակութիւնը։ Ես խղդուում եմ այս եկեղեցւոյ մէջ, որ միայն մեքենայական պաշտօնավարութեան ձևակատարութիւններով է պահպանուում և որ օրի և ազատութեան կարօտութիւն ունի։ Ես հրաժարուում եմ՝ իմ հաւատը փրկելով, և համոզուած եմ, որ այդ հաւատը Հռոմէական եկեղեցուց դուրս

պէտք է հաշտուի բանականութեան և խղճի արդար պահանջների հետ։—Լիոն քաղաքի ամենաբարեպաշտ համարուած թաղերից մէկում անցեալ տարի 600 երեխաներից 215-ը առանց մկրտութեան մնացին։ «Ուխտադնացութիւնները գնալով զարգանում են, շատանում են արարողութիւնների ու կրօն. հանդէսները—բայց Ֆրանսիայում օր աւուր պակասում է քրիստոնէութիւնը»։

## ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

Ռուսաստանում, քարոզն ընդհանրացնելու և նորա նշանակութիւնը կրօնական կրթութեան գործում բարձրացնելու նպատակով՝ աշխատում են այժմ հոգևոր ճեմարանների ուսանողներին յառաջ քաշել այդ ասպարիզի վերայ։ Այդպէս 10 տարի առաջ Պետերբուրգում սկսուել է ուսանողների քարոզչական գործունէութիւնը և արդէն ընդարձակ ծաւալ է ստացել։ Նոցա տասնամեայ գործունէութեան առթիւ գեկտ. 24-ին մի եկեղեցական հանդէս է տեղի ունեցել, ուր Աւագերէց Հ. Եանիշև ջերմ խօսքերով բացատրել է քարոզի և նորա տարածման մէջ ուսանողների ունեցած գործակցութեան նշանակութիւնը։

— Փետր. 3-ին Սրբ. Սինոդի օրեր—պրոկուրոր Պոբեդոնոսցեվի մօտ ժողով են ունեցել «Ամենասուրբ Աստուածամօր» եղբայրութեան անդամները՝ հաշիւ ներկայացնելու անցեալ թուականի ընթացքում ցոյց տուած գործունէութեան համար։ Հաշուից երևում է, որ եղբայրութիւնը 136,000 րուբլի է ծախսել ժողովրդական կրթութեան համար՝ գլխաւորապէս եկեղեցական—ծխական դպրոցների միջոցաւ. իսկ ս. Գիրքը յաջողութեամբ տարածելու համար նոր գործ է ձեռնարկել. վարձել է 3 շրջիկ գրավաճառներ, որոնց միջոցաւ և 5000 կտոր ցրուել է։—Նոյն ժողովում պրոֆ. Լոպուխին հաշիւ է ներկայացրել, թէ ինչպիսի արագ յառաջադիմութիւն է անում Ռուսաց առաքելութեան գործը Քուրդիստանում՝ ապրող Նեստորականների մէջ։

— Սրբ. Սինոդը կարգադրել է բոլոր թեմական դպրանոցներում առանձին ուշադրութիւն դարձնել եկեղ. երգեցողութեան վերայ։

— Մակեդոնիոյ եկեղեցական հարցը նորերս կրկին արծարծուել է։ Սուլթանը բերաթներ է տուել 3 նոր բուլղար եպիսկոպոսների, որով բուլղարական թեմերի թիւը Տաճկաստանում հասել է եօթի։ Կ. Պոլսոյ Յունաց պատրիարքը այդ եպիսկոպոսների ձեռնադրութիւնն անվաւերական է համարում և սպառնում է հրաժարական տալ։ Միւս կողմից սերբական կառավարութիւնը որոշել է ամենաուռանդուն միջոցներ ձեռք առնել Մակեդոնիայում 3 որն սերբական թեմեր հաստատելու։

— Վերջին ժամանակ լուր է տարածուած, թէ 38 ալբանական գիւղեր օրթոդոքս դաւանութիւնը թողել և կաթոլիկութիւն են ընդունել։ Իրողութիւնն այն է, որ այդ ալբանացիները, մասամբ կաթոլիկ և մասամբ օրթոդոքս լինելով՝ թուրքաց իշխանութեան ներքոյ առերես մահմեդականութիւն էին ընդունել, բայց սրտանց քրիստոնեայ էին մնացել, և մինչև այժմ, հակառակ իրենց կրած թըքական զգեստին և անուններին, պահում են քրիստոնէական սովորութիւնները, շատ անգամ համարձակ քրիստոնէական ազօթքներ իսկ ասում։ Կ. Պոլսից մի քանի անգամ փորձեր էին եղել նոցա բոլորովին քրիստոնեայ դարձնելու, բայց դժուարութիւնների էին հանդիպել։ Վերջերս երբ կաթոլիկները Դուրացցոյի եպիսկոպոսի օգնութեանը գիմեցին, օրթոդոքսներն ևս պատրաստակամութիւն յայտնեցին միանալ նոցա. բայց Ռուսաստանի և Ձերնադորիայի Կ. Պոլսոյ դեսպանները, ինչպէս և պատրիարքը, եռանդուն կերպով աշխատում են հակառակ ընթացք տալ գործին։

---

## ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇ

(Շարունակութիւն) *

«Դարձիր, սիրտ մի ևեղեր.
Այս դիժար օրերս անցանի։»

Այժմ մի երկու խօսք Մկրտիչ Նաղաշի գրական յիշատակների մասին, Ժ։ գարու աղքատիկ գրականութեան** մէջ Նաղաշի նման երգիչները չեն

---

* Տես Արարատ 1898 թ. համար Ա. եր. 20։

** Ժե. դարում Նաղաշին ժամանակակից ևեղինակները բաւով սահմանափակ են եւ մեծ մասը սակաւ ծանօթ, նոցանից ոմանք ժառանգութիւն մնացին նախընթաց ԺԴ. դարից, ինչպէս Գրիգոր Տաթևացին (†1411 թ.) և Գրիգոր Ծերենց Նլապեցին (†1425 թ.)։ Միւսներն մէջ փորձ շատ չայտնի են։ ա) Թողմաց Մեծոփեցի (†1447 թ.)։ նորա գրած «Ամկրեհմուրի Պատմութիւնն» եւ Յիշատակարանն հայրապետական ապրոի փոխադրութեան մասին արդեն ծանօթ են (տպ. Փարիզ 1860, Թիֆլ. 1892)։ բ) Ստաֆէ Սիւնեցի, Գրիգոր Տաթևացու ազգականն եւ աշակերտը. նորա 1403-ին յօրինած «Ադամ Գիրք»-ը յոյս ետած է Կ. Պոլիս 1721-ին, ունի եւ գիրք Սահմանաց Դաւթի, եւ մի բանիլ վկայաբանութիւններ. գ) Ստաֆէ Բաղիշեցի, Գրիգոր Ծերենցի աշակերտը. ոտանաւորով պատմել է Յովասափի վարքն, կ Պոլսի առումն 1453 ին, ունի եւ տաղեր ու գանձեր. դ) Աբրահամ

կարող առանց նշանակութեան լինել։ Մեր անծանօթութիւնը նորա գրական երկերին, ժամանակակիցների և յետագաների լռութիւնը նորա մասին, կամ թէ ընդհանրապէս յետին դարերի գրականութեան պատմութեան միանգամայն անմշակ գրութիւնը բնաւ իրաւունք չեն տալիս մեզ մտածելու, որ Մկրտիչ Նաղաշ աննշան երգիչ էր, թէև, ինչպէս երևումէ նորա հոչակի գլխաւոր պատճառը նկարչութեան արուեստը պէտք է լինի։ Այն հատուկտոր երգերը, որոնք ցայսօր մեզ յայտնի են եղել, ցոյց են տալիս, որ նա ունեցել է ընտիր ճաշակ, հասուն միտք և կենդանի բարբառ։ Սակայն մեզ այդ երգչի յատկութիւնների աւելի պարզ գ'երևէին, եթէ միջոց ունենայինք իմանալու, թէ ո՞ւր և ի՞նչպէս է զարգացել նորա սկզբնական գործունէութիւնը գրականութեան համար, ո՞րք են եղել նորա մտաւոր զարգացման նպաստող գրագէտներն և առհասարակ ո՞րպիսի շրջանի ծնունդ է։ Այն վանքը, ուր, ինչպէս յիշեցինք, նա գաստիարակուած է և ուր գրել է իր մի յիշատակարանը, շատ ծանօթ չէ մեզ այդ կողմից, այն յիշատակարանի բարբառից և ոճից։ Նմանապէս և նորա մի տաղի («Ձինչ որ գեղեցիկ ծաղկունք») ձևից մենք տեսնում ենք, որ Նաղաշի նախնական կրթութեան վերայ մեծ ազդեցութիւն են ունեցել Ս. Գրիգոր Նարեկացու աղօթքներն ու տաղերը։ Սակայն Նաղաշի նկատմամբ առհասարակ վերոյիշեալ հարցերը պարզելու միջոցները պակասում են։ Կարող ենք ընդհանուր վիճակից մակաբերութիւններ անել, որոնք ներկայ խնդրի նկատմամբ միայն լուսաբանութիւններ են, այլ ոչ ճիշդ եղրակացութիւններ։ Այսպէս մենք գիտենք, որ Ծ։ դարի կրթութիւնն իսկապէս փոխանցուած է Ծ։ դարից, երբ Հայոց մտաւոր կեանքին ուղղութիւն տուողը միմիայն ուխտաւորական (մխարարական) շարժումներին դիմադրելու ոգին էր։ այդ ոգին ստեղծեց վարդապետական աթոռներ և աշակերտական խմբեր, որոնց պարագլուխներն էին Յովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Նոսայի Նչեցին, Սարգիս Սորբեցին, Վարդան Բաղիշեցին և այլք։ Նե-

---

Անկիրացի, մականուանեալ Դափլան։ նորա ոտանաւորը Կ. Պոլսի առման մասին յոյս տասած է՝ Բ. Պատկանեանի «Նշխ. Մատեն. Հայոց» Ս. Պետերբ. 1884 թուին։ ե) Կիրակոս Երզնկացի կամ Արևելցի։ կազմել է Յայտաւորմն եւ յօրինել է «Արեւելք գիտութիւն» շարականը։ զ) Ամիրտովլաթ Ամասիացի, բժիշկ։ յօրինել է «Օգուտ բժշկութեան» եւ «Անգիտաց անպետ» բժշկական գործերը 1466—1482 թուին։ Նոցանից հատուածներ յոյս տասած են Հ. Դ. Յովնանեանի «Հետազոտութիւն նախ. ռամկ. վիպաց» (տես եր. 339)։ է) Յակոբ Դրիմցի, Գետոց Երզնկացու աշակերտը։ ունի գրուածքներ եկեղեցու կարգերի եւ տօնական արուեստի մասին։ Կան եւ ոմանք անծանօթներ, որոնց մասին այժմ տեղը չէ խօսելու։

մենք տեսնում ենք, որ Ծ։ դարի վերջերում արդէն կազմուած կազմակերպուած էին այն վարդապետարանները կամ վարժարանները, որոնք իրենց հաստատուն կետեր կրթութեան կեդրոն էին նոր սերունդի համար։ Այն ինչ բուն ուսումնական շարժումները Ծ։ դարի վերջերում կանգ առան, դիմադրութեան ոգին մնաց Հայոց աւանդապահ պատի մէջ, որն իր ջանքերն ուղղեց Սուր Հայրապետական աթոռի դէմ, որպէս զի նորան պահպանէ արևմտասիրական ձգտումներից։ Այսպիսով պարզուած էր ամէնի առաջ Հայ եկեղեցականի և գիտնականի (այս երկուսն իրարուց անբաժան գաղափարներ էին այն ժամանակ) նշանաբանը՝ պահպանել հին աւանդութիւնն և արգելել ամէն տեսակ նորամուծութիւն, որ քրիստոնէութեան դիմակով գալիս էր հռոմէական արևմուտքից։ Այսպէս աւանդեցին պարագլուխ վարդապետները, և այսպէս շարունակեցին նոցա աշակերտները։ Իր ժամանակին մենք այդ միտքը պարզել ենք այնպիսի բացատրութիւններով, որոնք շատ մօտիկ են Ծ։ դարու մտածող դասի հայեացքներին։ ընթերցողը կարող է այդ տեսնել Թովմայ Մեծոփեցու յիշատակարանի առթիւ դրած յառաջաբանի մէջ։ աւելորդ չենք համարում սակայն այստեղ վերստին շեշտել այդ մտքի վերայ և յիշեցնել այն թէ ի՞նչպէս Ծ։ դարում համոզուած էին, որ ուսումնառները կորած մարդիկ են, արժանի երասելի կատաղի ալիքներին, կամ այլ պատահարների մէջ իրենց արդար պատիժը գտնելու։ խիստ էր արդարև նոցա այդպիսի հայեացքը, բայց անբնական չէր, զի նոքա աւանդութեան սրբութեան մէջ էին տեսնում եկեղեցու և հայրենիքի լրութեան գաղափարը, Թովմայ Մեծոփեցին իր պատմութեան և յիշատակարանի մէջ շատ աւելի առատ նիւթ է տալիս մեզ Ծ։ դարու վաստակաւորների այդ գաղափարն հասկանալու։ սակայն որովհետև Մկրտիչ Նաղաշի նկատմամբ նորա պատմութեան մէջ բնաւ յիշատակութիւն չկայ, ուստի մեր խօսքը մասնաւորելու համար թողնենք ընթերցողին օգտուելու այդ պատմութիւնից և անցնի՛նք այն մըտքերին, որոնք Մկրտիչ Նաղաշ արծարծում է իր երգերի մէջ, որպէս զի կարողանանք հասկանալ թէ նա համերաշխ է եղել Ծ։ դարու այդ ուղղութեանը։

Որ Մկրտիչ Նաղաշ իր կաթուղիկոսին դրով ղգուշացնում է Փլորենտիոյ ժողովի հետևանքներից, այդ արդէն բաւական նշանաւոր երևոյթ է նորա ուղղութիւնը որոշելու համար (եթէ միայն ճիշդ է այդ տեղեկութիւնը), բայց թողնե՛նք այդ հանգամանքը, և ուշադրութիւն դարձնե՛նք մի այլ երևոյթի վերայ։ մենք տեսնում ենք, որ Հայոց եկեղեցական դասի և նոյն իսկ ներքին կեանքի վերայ Նաղաշի յանդիմանական խօսքերն և Թովմայ Մեծոփեցու տուած տեղեկութիւնները իրարու համաձայն են։

այս ցոյց է տալիս, որ նոքա երկուսն էլ միևնոյն ուղղութեան պատկանող անձինք են։ Այսպէս Մկրտիչ Նաղաշ իւր մի խրատական ոտանաւորի մէջ, որ յանդիմանութիւն է ազահներին, յիշում է կաթուղիկոսների շատանալը, աւելորդ եպիսկոպոսներ օրհնելը, եպիսկոպոսների կանոնազանցութիւնն և կաշառակերութիւնը, վարդապետների խոտորումն իրենց պարտականութիւնից, արեղաների դատարկաշրջիկութիւնը վանքերից դուրս, քահանաների անկարգութիւնները և այլն. ազահութիւնն համարելով այս ամէնի պատճառ, նա ասում է.

«Կաթուղիկոսքն շատացան,
Անօրինացն բռնութեան
Եպիսկոպոս օրհնեն անբան,
Ամէնն վասն ագահութեան։
Եպիսկոպոսք զկանոնն անցան,
Որ պոռնկաց կուտան հրաման,
Կաշառ առնեն կարմիր դեկան,
Ամէնն վասն ագահութեան։
Վարդապետերս՝ որ նոր ելան,
Բանին եղեն վաճառական,
Եւ քարոզեն զհաճոյս մարդկան,
Ամէնն վասն ագահութեան։
Հաբեղանին զվանքն ուրացան,
և՛ ի գիւղօրայք ի շուրջ կուգան,
Սաղմոս ասելն մոռացան,
Ամէնն վասն ագահութեան։
Երիցաներն յիրար կռուան,
Իր վերուցին և գաւաղան,
Փետեն մօրուս, կոտրեն բերան,
Ամէնն վասն ագահութեան։»

Թէ Մկրտիչ Նաղաշի այս խօսքերը չափազանցութիւն չեն, այդ երևում է Թովմայ Մեծոփեցու տեղեկութիւններից. գրէթէ նոյն չարիքների պատկերն է դնում մեր առաջ Մկրտիչ Նաղաշին ժամանակակից Մեծոփայ վանականը, երբ պատմում է, թէ մի քանի տարուայ մէջ Կիլիկիայում վեց կաթուղիկոս նստան, և վեցն էլ դեղամահ եղան, և թէ Հայոց եպիսկոպոսները, նուիրակներն և վարդապետներն արծաթասիրութեամբ չարաչար գայթակղեցնում էին ժողովրդին, Թովման օրինակի համար յիշում է Վաղար նուիրակի վարմունքը Յակոբ անունով մեկի հետ, որին նուիրակը ղրկպարտել էր գողութեան մէջ և չնայելով նորա երդմանը, չէր հաւատացել, ուստի և Կոստանդին կաթուղիկոսի հրամանով նորա վերայ նզովք էր դրել. Յակոբը բարկացած «գնաց առ անօրէնքն, ասում է Թովմայ, եւ եղ ի հաւատացն, և ի ժամ մահուան աղաղակէր. Տէր Յիսուս, զհաւատս իմ ի տէր Կոստանդինէ լինգրեա, և ի բոլ անկեալ սիրդ Վաղար նուիրակէն.» մանաւանդ լսելով խօսքը կաթուղիկոսների վերայ, ագահութեան չարիքների մասին Թովման էլ գրեթէ նոյնն է ասում, ինչ որ Նաղաշ.

«Սիմոնական արարին զամենայն ազգս, ասում է, և նախատինք ամենայն ազգաց, զի արծաթով տային զշնորհս Հոգւոյն Սրբոյ, ի վերայ միոյ վիճակի երեք և չորս եպիսկոպոս ձեռնադրէին, և նոքա ի վերայ միմեանց յարուցեալ, զանօրէնս և զանհաւատս և զսուտ քրիստոնեայս բարեկամս արարեալ, գայթակղութեամբ զաշխարհս մեր կործանեցին. զանուղղայս և զանկարգս ձեռնադրէին, տեսաբ գոլով ընչից, և զաղքատս խոտին. դարձեալ իբրև օրինակ յիշում է Թովման թէ ինչպէս մեկից 1500 ֆլօրին առան և ապա ձեռնադրեցին եպիսկոպոս, և թէ ինչպէս նոքա, որոնք չէին կարող տալ, իրենց կարգը գրաւ էին դնում, նոյն այդ ագահութեան պատճառով անէծքն ու բանադրանքը սովորական էր գառել. կաթուղիկոսն եպիսկոպոսին էր բանադրում, եպիսկոպոսը քահանային, քահանան ժողովրդին. Այդ երևոյթից սարսափած Թովման ասում է. «Նոքա վասն արծաթասիրութեանն նոր դժոխք շինեցին հայկազեան սեռի.» Արդեօք այդ իսկ նոր շինած դժոխքի պատկերը չէ, որ դնում է մեր առջև Մկրտիչ Նաղաշ իւր հետևեալ խօսքերով.

«Եւ որք կուռին և վշտանան,
Որք նախանձին և գողանան,
Եւ որք խորհեն չարիս մարդկան,
Ամէնն վասն ագահութեան,
Որք հարկանեն և գողանան,
Սուտ երդընուն և ուրանան,
*Բազում ի հաւատոց նզաւ,*
Ամէնն վասն ագահութեան,
Հարք ի յորդւոց բաժանեցան,
Բուն սիրելիքն քակտեցան,
*Բազում եղեւ եղբայրասպան,*
Ամէնն վասն ագահութեան,
Տեսայ զոմանս ի նեղ ընկան,
Եւ այլ բազում ի կախաղան,
Զոմանս որ գլխովին կորեան,
Ամէնն վասն ագահութեան։»

Կարծես հին դժոխքի արհաւիրքն և մահմանականութեան դրած անլուծելի լուծը բաւական չէին, որ անարժան եկեղեցականների շնորհիւ այսպիսի մի նոր դժոխք ևս շինւում է հայ քրիստոնէի համար. Այսպիսի չար ժամանակի մէջ ապրելով Մկրտիչ Նաղաշ, արդեօք իւր ղղջումն յայտնելու մտքով, թէ իւր անարժան կարգակիցներին բացառձակ յանդիմանելու համար, լուրջ կերպով ինքն իրեն է մեղադրում.

«Գերի Նաղաշ, ողորմելի,
Ի քեզ հայեաց դու յարաժամ,
Զինչ որ այլոց քարոզեցիր,
Ամէնն ի քեզ կայ ի լրման։»
«Զինչ որ յաշխարհս կայ մեծութիւն,
Զամէնն քեզ կամիս միայն։»

Սակայն վսեմ կոչումն և բարձր աստիճանն իրեն գանձ և պատիւ համարելով, այսպիսի յորդոր է ուղղում իւր անձին.

Վարդապետ կերպարանիս,
Եպիսկոպոս գերաստիճան,
Ունիս շնորհս զանազան,
Նա գեռ դու չես այդոր հաւան,
Աղուոր զմիտգդ ժողովէ,
Որ այդկից այլ չէնկես ունայն,
Զնաւդ ի բևռանց թեթևացո՛,
Որ հասանիս ի յօթևան,

Ընդհանուր հոսանքի մէջ բազմութիւնից անջատուած և կեանքի առօրեայ չարիքների դէմ բողոքող ազնիւ անձնաւորութիւններից մէկն է երևում իւր ժամանակի մէջ Մկրտիչ Նաղաշ, որ իւր խրատական մտքերով ազդել է կամենում ապականութեան վտանգներին մատնուած սերունդի վերայ, և այն միշտ ինքն իրեն յանդիմանելով. մի այլ խրատի մէջ երգիչն այսպէս է խօսում ինքն իրեն հետ.

Նաղաշ, հաղար վա՛յ քո հոգւոյդ,
Որ անամօթ ես ե՛ աներես.
Զքո Արարիչն ապտակեցին,
Դու մէկ խօսից ոչ համբերես,
Քան զքեզ այլ մարդ չկայ անամօթ,
Որ զայդ գիտես, ոչ համբերես,
Ցայնժամ լինիս դու քրիստոնեայ,
Ցորժամ խոցեն, նա համբերես,
Եւ Քրիստոսի սիրոյն համար
Չչար կամաց ոտքն համբուրես։»

Մի ուրիշ տեղ երգիչն աշխարհիս ունայնութիւնը պատկերացնելով, ինքն իրեն ասում է.

Նաղաշ, մի խաբիր մեղօք,
Մի գատիր անասնոյ նման.
Մի գիրկ աշխարհիս ածեր,
Մի կարծեր թէ քեզ տի մնան.
Մալի հասրատ մի լինիր,
Մեծութիւնն քեզ չի՛ պիտի.
Ունիս կերակուր հանդերձ,
Աւելին քեզ ցաւ կու լինի։

և ճանաչելով, որ վարդապետի պարտքն է խօսքով ուսուցածը գործով երևցնել, ասում է.

Է՞ ողորմելի Նաղաշ,
Դու ջանա՛ ու գործէ՛ բարի,
Զքո խրատն դու լսէ՛,
Որ այլոց ի գործ անցանել.

իսկ մի այլ տեղ այդ յանդիմանութիւնն աւելի խիստ է հնչում նորա բերանից.

Վարդապետ ձևանաս, ղգործն կատարէ,
Վա՛յ անձինդ, երբ Դատողն յատեան տի կոչէ.
Ցէր կոչիս, տո՛ւր համար գործոյն տիրական,
Ցէս թէ հրչափ արեան ես դու պարտական.
Ի թաղել մեռելոյ ճարակ քեզ արա՛.
Երբ նորա օրն եկաւ, քեզ այլ պիտի գայ.
Ա՛յ Նաղաշ, դու լսէ՛, զինչ որ քարոզես,
Ի՞նչ շահ է քեզ ասելդ, որ ոչ կատարես։»

Իրենով ուրիշներին խրատելու ճանապարհի վերայ Նաղաշ պատկերացնում է ոչ միայն ժամանակի չարիքներն, այլև իւր ակնկալութիւններն ու գաղափարները. ամէն առիթ նորան նպաստաւոր է ևրևում իւր նպատակի համար. այսպէս երբ նա ծաղիկների օրինակով գովում է մարգարէներին, Քրիստոսին և Լուսաւորչին, իւր խօսքն այսպէս է կնքում

«Նաղաշ թէ խելք ունիս,
Հանցել ծաղիկ մի լինիր,
Որ տանէ զքեզ հողմն ու քամին.
Ծաղիկ լեր բարի գործով,
Որ պտուղ տաս դու հոգւով։»

իսկ մի ուրիշ այլաբանութեան մէջ, ուր վարդին է գովում, ասում է.

«Դու զայն վարդն սիրէ՛, որ դեղ կենաց է։»

Այս ամէնից շատ պարզ երևում է, որ Ամդայ առաջնորդը ճանաչում էր իւր ժամանակի գըրութիւնն, ինքն իրեն ազատ չէր համարում նորա ազդեցութիւնից, բայց միևնոյն ժամանակ այնքան արթուն խղճի տէր անձն էր, որ իրեն պակասութիւններն յանդիմանելով, խրատական օրինակ էր լինում ժամանակակիցներին և ապագաներին.

Իւր գործունէութեան եղանակով և իւր գրական վաստակներով Մկրտիչ Նաղաշ խիստ տարբերւում է իւր ժամանակակիցներից. Որքան յայտնի է, աստուածարանական, իմաստասիրական կամ պատմական երկերի ստուար հատորներ թողած չէ նա իւր յետնորդներին. վանքերում փակուած և միայն տեսութիւններով զբաղուած չէ նա իւր առաջնորդութեան ժամանակ. Նորան գրաւել է ժողովրդի վիճակը, և ինչպէս երևում է, նա միշտ ապրել է իւր ժողովրդի ցաւերի ու հոգսերի մէջ. Ուշադրութիւն դարձնենք առանձնապէս նորա երկու տաղերի վերայ, որոնք նուիրել է նա «զարիպին». չկայ նորա երգերի և ոտանաւորների մէջ ուրիշ այնպիսի մի արտայայտութիւն, որ աւելի լաւ պատկերացնէր մեր առջև Նաղաշի զգացմունքները, որոնք միևնոյն ժամանակ ժողովրդական ոգու յայտարարներ են, որոնք այն օրից մինչև օրս շարունակ իշխում են հայ մարդու սրտի վերայ՝ առանց խտրութեան տեղի, ժամանակի և այլ հանգամանքների. կարելի է ասել, որ այդ զգացմունքները Նաղաշինը չեն, այլ ամէնքինը, և առաջինն, եթէ չենք սխալւում, այդ երգիչն է, որ գրչի ծայրով պատկերացուցել է պանդխտութեան այդ թշուառ կողմերը.

Հայոց մէջ պանդխտութեան վիճակը նորու-

թիւն չէ. ԺԱ. դարու վերջերից սկսած նոցա համար սովորական դառաւ՝ դիմել օտար երկրներ և ապրուստ ճարել։ Վաճառական մարդիկ պանդխտութեան էին ելնում ոչ օրերով, ամիսներով, այլ երեմն և տարիներով. նոքա ժամանակաւորապես իրենց ընտանիքից անջատուած ուղևորներ էին, որոնց դարձի յոյսը միշտ կար. այդպիսիների վիճակը շատ անդամ խիստ անստոյգ էր. ճանապարհների աւազակութեան վտանգը, ծովագնացութեան անսպասելի փորձանքները, սահմանակից տէրութիւնների և մանր մունր իշխանութիւնների անակնկալ ընդհարումներն և կռիւները, վերջապէս՝ նոյն իսկ վաճառականութեան գործից անբաժան ձախող պատահարներն օտար երկրում այն է՝ օդի, ջրի, ապրուստի խիստ փոփոխութիւնը, անձնական հիւանդութիւնը, կորուստներն, և այլն, այն ծանր և մութ ժամանակների համար այնպիսի հանգամանքներ են, որ շատ ու շատ դառնացնել կարող էին պանդխտութիւն գնացողների վիճակը և սարսափ ազդել նոցա սպասող ազգականներին ու բարեկամներին. և եթէ այս ամէնի վերայ աւելացնենք հացի թանգութեան, սովի, երկրաշարժի, ժանտախտի և այլ այսպիսի դիպուածները, այն ժամանակ շատ հասկանալի կը լինի մեզ համար թէ ինչո՞ւ զարիպութիւնն այնպիսի ծանր և թշուառ վիճակ էր համարւում մեր կեանքի մէջ։ Սակայն վաճառականների պանդխտութիւնը դեռ այնքան սարսափելի չէ, քանի որ այդ վիճակից շահի և միխիթարութեան ակնկալութիւն կար, որքան այնպիսիների պանդխտութիւնը, որոնք թողնում են իրենց բնակավայրն և գնում են բաղդ որոնելու, աշխատանք գտնելու, վաստակ անելու և իրենց տունը պահելու, որոնք երբեմն օտարութիւն են ընտրում ամբողջ ընտանիքով կամ որոնք թողնում գնում են՝ իրենց հայրենիքում հանդիստ ու դադար չունենալու պատճառով։ Այդպիսիներն ակամայ կամօք կրում են ոչ միայն վաճառականներին սպառնացող բոլոր հանգամանքների երկիւղը, այլև դառն աղքատութեան և մշտական կարօտութեան, չքաւորութեան անտանելի լուծն օտար երկրում. ահա՛ դոքա են իսկական զարիպները, դոքա են, որոնց համար մեր Փրկիչն ասել է. «Օտար էի և ժողովեցիք զիս» (Մատթ. Իե. 35)։ Այլ է, եթէ այդպիսիներն յաջողութիւն գտնին. այդ դէպքում նոցա վիճակն այնքան արգահատելի է, որքան և միւսներինը։ Իսկ եթէ յաջողութիւնը պակասում է, և կեանքի դառնութիւնները օրըստօրէ զգալի են լինում, այն ժամանակ նոցա դրութիւնն անելանելի է։ Այս իսկ թշուառ և անելանելի վիճակի պատկերն է, որ հանդիպ է բերուած Հայոց մի քանի միջնադարեան ժողովրդական երգերի մէջ։ Մեզ յայտնի չէ, թէ այդ նիւթի վերայ հնագոյն երգը ո՞ր ժամանակից է. առայժմ մեր առաջ կան Նաղաշի երկու տաղերը, որոնք իրենց մէջ բովանդակում են նոյնպիսի մտքեր և դարձուածներ, ինչպէս միւս երգերը, նոցա մէջ մի առընչութիւն կայ. սակայն պարզ է, որ միւս երգերն յառաջ են եկել Նաղաշից յետոյ։ Այսպէս չենք կարող ասել միայն Լևոն իշխանի գերութեան առթիւ պահուած ժողովրդական երգի մասին. այդ, անշուշտ, աւելի հին ծագումն ունի, թէև մենք առայժմ չունինք միջոց նորա հնութիւնը որոշելու։ Լևոն իշխանի գերութեան շրջանը պանդխտութեան շրջան համարելով, մենք կըտեսնենք, որ ժողովուրդն այդ իշխանին ներկայացնում է ճիշդ այնպէս, ինչպէս ինքն է հասկանում պանդխտի վիճակը։ Եգիպտոսի սուլթանը Լևոնին տալիս է իւր «ոսկի գուռը» և հրապարակում է նորան իւր հաւատն ուրանալու.

«Սուլտանն ի մոյտանն ելել,
Իւր ոսկի գուռդն կուխաղայ.
Խաղաց ի Լևոնն երետ.
Ա՛ռ խաղա՛ ու տո՛ւր տատայիդ.
Լևո՛ն դու տաճիկ լինիս,
Ես ու իմ տատաս քեզ գերի՞.

սակայն Լևոնի աչքին ոչ ոսկի գուռդն էր երևում, ոչ սուլթանի տէրութիւնը, ոչ նորա ամբողջ ընտանիքով իրեն գերի դրուելը. նա տխուր և լուռ սպասում է իւր վերադարձին.

«Լևոնն ի բերդին նստել,
Դաստառակն աչքին, ու կուլար»։

և իրաւ գերի, որ ոչ օրի մատչելի չէր. նա իւր միտքը ծնողացն յայտնելու նպատակով կանչում է դէպի այն կարաւանը, որ Սիս էր գնում.

«Քերվանդ, որ ի Սիս ի՛ երթաս,
«Դուն խոպար տանիս պապայիս»։

Այս էր, որ հայրն էլ եկաւ և ազատեց իւր որդուն։ Այսպէս է նկատել ժողովուրդը պանդխտին. նա գերի է, և նորա միտքը հասկանում են միայն նոքա, որոնք վերադառնում են հայրենիք։ Այլաբանութեան մէջ պանդուխտը վանդակի մէջ բռնուած մի թռչուն է, որին ինչ ուզում ես տո՛ւր, նա չի կարող իրեն ազատ զգալ, ինչ ուզում ես խոստացի՛ր, նա չի կարող գոհանալ։ Պանդխտութեան այլաբանական նշանն է կռունկը, (մերթ արագիլ, ծիծեռնակ), թռչուննե՛ր, որ արգարև պարբերաբար գնում և վերադառնում են ինչպէս պանդուխտներ, Այսպէս՝ մի ժողովրդական երգի մէջ զարիպն իրեն նմանեցնում է այն վայրի հաւուկին, որ բռնուած է վանդակի մէջ և անկարող է խառնուել թռչունների երամի մէջ. նա «սրտաբեկեալ, միջակոտոր» անձար մի գերի է և ոչ մի բանի վերայ ուրախութիւն չի զգում.

Եթէ ղըլըուըն ու ղումրին
Բերեն ինձ երգասաց գուսան, չուրախանամ։

*Եթէ հազար գոյնզգոյն փետուրներ*
*Ինձ բերեն խալաթ տան, չուրախանամ.*
*Եթէ զշաքարն ի մաղածու*
*Բերեն ինձ կերակուր տան, չուրախանամ,*
*Եթէ դարպաս ինձ շինեն ոսկւով,*
*Զարդարած անգին մարգարտով, չուրախանամ.*

*իսկ եթէ այդ հաւուրն հնար ունենար խառնուելու իւր երամի մէջ, այն ժամանակ միայն կ'ուրախանար.*

*Եթէ լիներ որ թռչի, բարձրանայի,*
*Տեսնի զիմ երամս, խաղալով, ճախրելով,*
*Ու կարկաչելով խառնիլ հիմ երամն,*
*Յայնժամ ուրախանայր սիրտ բաժանելոյս.*

Այդ բնական մաքուր զգացմունքը, որ յայտնած է ժողովրդական երգի մէջ, ամէն մի անհատի սրտին յատուկ է և հաճելի՝ ինչ դասակարգի և ինչ աստիճանի ու կարողութեան մարդ կ'ուզէ լինի. հայրենիքին, իւր բնական հողին ու ջրին, իւր ընդհասուն ընկերներին ու հարևաններին կարօտել և անձկալ գիտէ ամէն ոք այն ժամանակ, երբ հեռու է և զուրկ նոցա տեսութիւնից. այսպիսի ժամանակ ուսումնականը, վաճառականը, արհեստաւորը, աղքատը, հարուստը, ծառան, իշխանը՝ ամէնքը կարծես նմանում են այն երեխային, որ վաղուց արդէն աչք է ածում իւր մօրը տեսնելու և ի վերջոյ յուսահատութիւնից լաց է լինում. բնական է այդ թախիծը, որ այնքան աւելի զօրեղ է լինում, որքան աւելի դժուար է կարօտն յագեցնել. Գեղեցիկ է արտայայտել այդ վիճակը Խառակոնիսցի աշուղ Քուչակ Նահապետը ԺԶ. դարում. *

*«Ժամ ժամ զիմ խարիսպութիւնս յետ յիշեմ,*
*Ու նստեմ ու լամ.*
*Ճապղեր եմ ջրի նման,*
*Ի յօտար երկիր կուգնամ.*
*Ցորեկն եմ նետի նման,*
*Զով տեսնում ի դէմ կուգնամ.*
*Գիշերն աղեղան նման,*
*Ես լարթափ ի վար կուժնամ.*

Կանգ առնելով Նաղաշի երկու երգի վերայ, որոնք համեմատաբար միւսներից հին են, մենք տեսնում ենք նոյն ժողովրդական ոգին և ձևերը. պանդխտին օրինակ է բերուած այն թռչունը, որ իւր երամից բաժանուած «մոլորած» ոչ մի տեղ հանգիստ չունի. «այնչափ երերուն կենայ, մինչ որ իւր երամն հասնի». պանդխտի «սիրտը սև է քան զգործելի», «ի զարիպութեան գարդէն երեսի գոյնն կու քաղի». մարդիկների ընկերութեան մէջ օտար երկրում զարիպն իրեն միշտ մենակ է զգում.

*«Ցորժամ ի մէջլիս նստի*
*Ցանկսկած սրտիկն արունի,*
*Զաչերն ի բոլորն ածէ,*
*Կարևոր և զոք նա չունի».*

Օտար երկրում նորան ոչ ոք չի ճանաչում, մինչև անգամ եթէ նա երևելի մարդու որդի լիներ.

*«Որ թէ լինի պարոնորդի և աննման,*
*Հանած վարած ասեն նմա մոլորական».*

Նորա աչքին ամէն բան վատ է երևում այստեղ, ամէն ինչ դառն և անախորժ.

*«Զարիպի հացն է լեղի որ ճաշակէ,*
*Դառն ու լեղի խառն արտասուօք*
*Ջուրն որ ըմպէ.*

*Թէ զօրն տան նուշ ու շէքէր որ ճաշակէ,*
*Երբ հառաչէ, նա ի սրտէն արուն կաթէ».*

իսկ երբ նա կարօտ լինի մարդիկների կարեկցութեան և բաղխէ օտարների դուռը, գրէթէ ամէն տեղ նորան յետ են մղում իրենցից.

*«Զարիպին վայն է եկեր, երբ քաղցենայր.*
*Երես ի քաշ ի փողոցերն կու մուրար.*
*Շատ ոք փակէր զդուռն ի դիմաց,*
*Նստէր ու լայր.*
*Թէ կաթ մի ջուր ուզէր գերին, մէկ մի չտայր».*

Շատ տեղ գթութեան հետ միասին մարդիկ զարիպին անարգանք են հասցնում, որ աւելի ևս դառնացնում է նորա վիճակը.

*«Շատոց սեղան լինէր դրած հազար բարով,*
*Եւ գայր զարիպն մտանէր ամաչելով.*
*Նա հազար գէշ ասեն նմա անարգելով,*
*Ապա թէ տան կտոր մի հաց տրտնջալով».*

Բայց թշուառութեան այս տեսարանները դեռ ոչինչ են այն սրտաճմլիկ վիճակի առջև, որ պատկերացնում է Նաղաշ, պանդխտների հիւանդութեան և մահուան դէպքերն յիշելով. Հիւանդ զարիպն

*«Յօտար փողոց մոխրաթաւալ անկեալ կենայր,*
*Թէպէտ ուներ շատ սիրելիք, մէկ մի չկայր».*
*«Ոչ բարձ գլխոյն կայր զարիպին, ոչ անկողին.*
*Սալն սնարք է, և աւազ իւրն անկողին».*

Այդ անտիրութեան և միայնութեան մէջ՝ Աստուած հոգեվարքի տագնապի ժամանակ մի քահանայ է հասցնում զարիպին յետին թռչակը տալու. բայց հիւանդը նոյն միայնութեան է վիճակուած. և երբ մահու հրեշտակը վերջ է դնում նորա երկրաւոր տանջանքներին,

*Նա կայր անկեալ մէջ փողոցին անտիրական,*
*Մէկ մի չեկաւ տես զարիպին, ոչ լալական,*
*Մէկ մի չկայր, զձեռն խաչէր վրայ սրտին».*

և կարծես այս սրտաճմլիկ տեսարանն ևս առաւել անտանելի կացուցանելու համար մարդիկ

---

* Նոր ժողովածու, Ա. Պրակ, եր. 76:

«Ծիծաղելով առին տարան յեղը հողին,
Մէկ մի չեկաւ անդ ի թաղումն զարիպին»։

Աղքատ և անտէր պանդուխտների վիճակի այս թշուառութիւնն, անշուշտ, անձամբ տեսել և հասկացել է Մկրտիչ Նաղաշ այն երկար ճանապարհորդութեան ժամանակ, որ կատարեց Ամիդից Կ. Պօլիս, այնտեղից Կաֆայ, և այստեղից դարձեալ Ամիդ։ Նորա ուղեգիծը, որն էլ լիներ, գնում էր պնդիսի երկրների մէջ, որտեղ ցրուած տարածուած էին ամէն կարգի Հայեր իրենց ընտանեաւորից դուրս օտարութեան մէջ բաղդ որոնելու համար։ Անձամբ տեսած և փորձած լինելով զարիպութեան վիճակը, Նաղաշ իւր ողբի մէջ զրել է իրականութեան պատկերն, և ասում է.

Նաղաշն ասաց թէ զարիպին կեանքն է հարամ.
Զզարիպի հալն պիտեմ, որ վայ կուտամ.
Թէպէտ տեսայ զամէն մարդոց լութֆ ու քարամ,
Զզարիպութիւնն յորժամ չիշեմ քան զուռ դողամ»։

Միևնոյն ժամանակ իբրև մխիթարիչ իւր ժողովրդի, Նաղաշ միշտ յորդորում է զարիպին համբերող լինել, չյուսահատուել, սիրտը լայն պահել և յուսալ, որ Աստուած կըյաջողէ նորան վերադառնալ տուն.

«Զարիպ սիրտդ մի նեղներ,
Այս դիժար օրերս անցնի.
Շատ զարիպ ի տուն գարձաւ,
Մի վախեր թէ քեզ չի լինի»,

Յորդորում է ամէնքին քաղցը վարուել զարիպի հետ, ողորմած և մարդասէր լինել. աղօթում է, որ ամէն զարիպ բարով հասնի իւր մուրատին, և ի վերջոյ նոցա մխիթարութեան համար, որոնց դարձը կարելի եղած չէ, Նաղաշ իբրև վարդապետ եկեղեցւոյ և իբրև ճշմարիտ հաւատացեալ ասում է.

Ամէնքս եմք զարիպ, եղբայրք,
Հայրենիք մարդ իսկի չունի.
Հաւասար գնալու եմք,
Զի այն կեանքն է մեզ հայրենի,
Աստէնս քեզ ճարակ արա՛,
Որ յանտէնն հոգիդ չի տանջի.
Զսուրբքն ի քեզ եղբայր շինէ,
Ու գհրեշտակք արա՛ սիրելի»։

Նաղաշի միւս երգերի մէջ՝ ուշադրութեան արժանի են երկու այլաբանութիւնները, որոնցից մէկը մի պարզ տաղաչափական տրամախոսութիւն է վարդի և սոխակի, իսկ երկրորդը մի այլաբանական ներբող է մարգարէներին, Քրիստոսին և Լուսաւորչին նուիրուած։ Մեր կարծիքով առաջին այլաբանութեան վերնագիրը «Գարրիէլ և Մարիամ» ոչ մի կապ չունի հրեշտակապետի և ս. Աստուածածնի հետ.* երգի բովանդակութիւնը սովորական է միջնադարեան սիրոյ տաղերին, և եթէ համեմատելու լինինք ժէ. դարից յետոյ յօրինած նման տաղերի հետ, կը տեսնենք, որ նոյն իսկ բարբառն էլ յատուկ է այդպիսի տաղերին. երգը լի է պարսիկ և արաբացի բառերով ու դարձուածներով։ Յովհաննէս Թլկուրանցին և Գրիգորիս Աղթամարցին աւելի շատ են գրել այդպիսի տաղեր, որոնց անշուշտ ծանօթ է եղել և Նաղաշի սոյն երգը։ Աւելի նշանաւոր է երկրորդ երգը. այստեղ Մկրտիչ Նաղաշ կարծես թէ ուզեցել է նմանել ս. Գրիգոր Նարեկացուն, և օգտուել նորա «Գոհար վարդն վառ առնալ» և «Սայլն այն իջաներ» տաղերի ձևից ու բովանդակութիւնից, նա գովում է ծաղիկներին. ինչ որ գեղեցիկ ծաղիկներ կային, ասում է, բոլորն էլ գնացին. մի ծաղիկ էլ այնպէս գնաց, որ բոլոր ծաղիկները ողբացին. և բացատրում է այլաբանութիւնն այսպէս.

«Ծաղկունք մարգարէքն էին,
Նահապետք և սուրբք առաջին.
Ծաղիկն, որ յետ նոցին,
Այն Յիսուս էր Հօր Միածին»։

այլաբանօրէն գովելով Յիսուս ծաղկին, Նաղաշ յայտնում է, որ ամէն ծաղիկ խոնարհում էր նորա առաջ.

«Ծաղկունքն յայն ծաղկի սիրուն
Շաղ աւին ու շողշողացին.
Ամէն ծաղիկն իւր գունովն
Այն ծաղկին գլուխ դնէին»։

Ապա յիշում է վերջին ծաղկին, որ Քրիստոսի տնզ բացուեցաւ. այդ «ծաղիկն էր մեր Լուսաւորչն շառաւիղ սուրբն Թադէոսին»։ Մկրտիչ Նաղաշ, որ իւր գարու աւանդապահ շրջանի ոգևորեալ ներկայացուցիչներից մէկն էր, իւր Լուսաւորչի համար այսպիսի մի պարզ իղձ է յայտնում, որ մտիկ է և մեր սրտին.

Ծաղիկն Քրիստոս պահէ
Զայն ծաղիկն ի յոտս Խաչին։

արդեօք այս մի ջերմ մաղթանք չէ Նաղաշի կողմից՝ տեսնել իւր մայրենի եկեղեցին անխախտ իւր նախնական աւանդութիւնների վերայ՝ հակառակ այն ձգտումների, որոնց նպատակն էր հանել այդ եկե-

* Այսպիսի մի տաւնախօսութիւն ունի Առաքել (Բաղիշեցին թէ Սիւնեցին), որ դուք տեսած է Հայերգի մէջ եր. 105. Նոյնը հրատարակուած է 1865 թ. Բազմավէպի մէջ, վերնագիրն է «Երգ ի ս. Աստուածածինն եւ ի Գաբրիէլ հրեշտակապետն օրինակեալ ի վարդն եւ ի պլպուլն». այդ երգը մեր ձեռագրի մէջ (1695 թ.) այսպիսի վերնագիր ունի. «Տաղ առաքեալ վարդապետի ասացեալ»։

*ղեցին իւր գիրքից՝ այն ժամանակի հռոմէական իշխանութեանն ստրկացնելու համար։ **

*Նաղաշի երդի բարբառն իւր յատնած ղազմունքների նման կենդանի է. թէպէտև նա վարժ էր գրոց բարբառին, բայց իւր երգերն յօրինել է, կարելի է ասել, միջնադարեան ոամկօրէնով։ Նորա երգերի ուսումնասիրութիւնը բարբառի կողմից էլ շատ հետաքրքիր է. նոցա մէջ կը գտնենք շատ նոր բառեր, գաւառական ոճեր ու դարձուածներ, հռոմէական օտար ցեղերի բառեր, քերականական ձևեր, ոամկօրէնի նկատմամբ և այլ շատ պիտանի նիւթեր, որոնց մասին մենք կը խօսինք ուրիշ ժամանակ։ Այստեղ կարևոր ենք համարում յիշել միայն մեր ընդհանուր տպաւորութիւնը, որ Նաղաշի երգերի բարբառի մէջ միանմանութիւն չկայ. ոմանք, կարծես, այլ մարդու յօրինած են, այնքան տարբերուում են միւսներից։ Այս երևոյթի պատճառը մեր կարծիքով այն է, որ ոամկօրէնը գրութեան մէջ շատ անսովոր գործ էր. ոամկօրէնով կամ հասարակաց հասկանալի բարբառով գրելը նոցա համար այնպէս դժուար պէտք է լինէր, ինչպէս մեր ժամանակի շատ մարդիկների համար, որ քաջ գրագէտ են, գրաբառ գրելը։ Մկրտիչ Նաղաշի նկատմամբ այս հանգամանքից զատ մի այլ բան էլ պէտք է աչքի առաջ ունենալ։ Նա ծննդեամբ Բաղիշու մի գիւղից էր, որ ունի իւր գաւառական բարբառը. մինչև սարկաւագութիւնն, եթէ ոչ աւելի, նա մնացել է նոյն տեղումն. ուրեմն նորա համար գործածական ոամկօրէնը Բաղիշու բարբառն էր. ապա մենք տեսնում ենք նորան գրելիս քառասուն տարի շարունակ՝ 1430—1470 թուականներին՝ Ամդայ առաջնորդական վիճակում, ուր բացի բազմամարդ և բազմացեղ Ամիդ քաղաքից կային Արզնի, Մէրտին և այլ քաղաքներ և շատ գիւղեր Միջագետքի զանազան ազ-*

---

* *Բացի այն տաղերից, որ մենք նշանակել ենք գանկի մէջ, Մկրտիչ Նաղաշի անունով ծանօթ ուրիշ տաղեր էլ կան, որոնք սակայն մենք տեսած չենք։ Այսպէս Հ. Տաշեանի ընդարձակ Յուցակի մէջ յիշուած կան երկու տաղ. առաջինն 1790-ին գրուած Մաշտոցի եւ Տաղարանի մէջ № 200 «Տաղ ղարիպի ի Նաղաշ Եպիսկոպոսն։ Աստուծոյ մարդասիրին փառք յարիտեան, որ ընտղծեր է զարուրածս զանազան». երկրորդն 1704—14 թուերին գրուած Հաւաքածոյի մէջ (№ 263) «Ի Նաղաշ Եպիսկոպոսն ասացեալ։ Ինչ շահ է մեզ զուր դասելն, երբ յօսար երկիր տի տանին, թէ շատ եւ թէ քիչ ջանաս, մեզ միայն պատուիր է բաժին»։ այս վերջինը 18 երկտողեան է։ (տես Յուցակ հայ. ձեռ. մատենադ. Մխիթ. ի Վիեննա, եր. 521, 813, 854, 869, 677 եւ 1001)։ Նոյն Յուցակի մէջ Հ. Տաշեան յայտնում է, որ Մկրտիչ Նախաշ ունի բազմաթիւ գանձեր, որոնց բոլորի վերնագիրն եւ սկզբնական տողերը նշանակուած են իւրաքանչիւր տեղում. (տես եր. 424, 435, 312, 313 եւլն)։ այդ գանձերի համար մեծարգոյ ցուցակագրողը, որքան կարողացանք հետեւել, ոչ մի տեղ ցուցումն չի տալիս, թէ ինչից է երեւում, որ նոքա Մկրտիչ Նաղաշի յօրինածն են. այն տեղեկութիւնը, թէ բոլորի սկզբնատառերն յօդում են «Մկրտիչ» անունն, թուական չորիս հատարուի այդպիսի բան մտածելու։ Մեր ձեռքական գրչեայ տաղարանի մէջ այդպիսի գանձեր կան Մկրտչի յօրինած, սակայն ոչ մեկի մէջ չի երեւում այն ձեր, որ Նաղաշի անունով հատատատակս յայտնի տողերի մէջ նկատում ենք. նոյն իսկ զարմանը, որ այդ գանձերի մէջ տեսնում ենք, Նաղաշի ոճին հատատատատիան չի։ Միեւնոյն ժամանակ դիտելու է այն, որ Հ. Տաշեանի ցուցակի մէջ 1662 թուին գրուած մի տաղարանում կայ «Գանձ ս. Յարութեան Քրիստոսի Մկրտիչ վարդապետի ասացեալ. Մարդասիրութեամբ որդիդ միածին եւլն.» սկզբնատառերը «Մկրտիչ». եւ նոյն տաղարանի մէջ կայ «Տաղ ի վերայ մեռելոյ», «Աղաչիչն արարածոց մեզ յարկացաւ», որի երգիչն, ինչպես մեզ յայտնի է նոյն իսկ այդ տաղից, իմիկ իրեն անուանում է Նաղաշ եպիսկոպոս. (տես Յուցակ եր. 312 եւ 313)։ Աղեկոք նշանակած գանձերն ինչպես են համարում Նաղաշինը՝ կարծիքով թէ գրչի ցուցմամբ։ Օրինակի համար մեր կողմից աւելորդ չենք համարում դնել այստեղ մի գանձ՝ Մկրտչի յօրինած՝ տեսնելու թէ որքան հետու են իրարուց Նաղաշի տաղերն եւ այդպիսի գանձերը.*

## ԳԱՆՁ Ս. ՍՈՒՔԻԱՍԵԱՆՑ

Ա՛ւծապայծառ տօնիւս ըղձալի ուրախացան մանկունք Սիովնի.
Տօնախմբեն զօր յիշատակի քաջ նահատակացն Վկայիցդ.
Ոչ վկային սուրբ Սուքիասի և ընկերացն իւր համադասին,
Որք յԱլանաց յաղգէն գովելի ընդ Թագուհւոյն եկեալ Սահենկի.
Անդ պատուաւորք էին ազն եղի (՛), և աստ գտին պարգեւք ըղձալի.
Անդ սպասաւորք էին արքային, և աստ եղեն վկայք Քրիստոսին.
Անդ մեծատունք էին ըստ աւերի (՛), աստ ընկալան պտուկ պանծալի,
Բարեխօսութեամբ սրբոյն Սուքիասի խնայեա՛ ի մեզ Փրկիչ աշխարհի աղաչմամբ,
կենաց խորհուրդն բացայայտեալ, ի Քրիստոսէ աւետարանեալ,
Զօր Թագէոս առաքեալն ընտրեալ ի Հայաստան աշխարհն քարոզեալ,
Զսուրբ Նահատակն իւր աշակերտեալ, կենաց բանիւ հաղորդս արարեալ
Նոքա ի սուրբ Հոգւոյն զօրացեալ առ Թագաւորն Արտաշիր եկեալ.

գուԹիւններից բաղկացած, որոնց մէջ Հայերն էլ միանման բարբառ չունէին, այլ իւրաքանչիւր գաւառներից եկած գաղԹականներ, անշուշտ, բազմաբարբառ էին։ ԵԹէ Մկրտիչ Նաղաշ իւր երգերն յօրինել է զանազան ժամանակ, ինչպէս կարող ենք կարծել միքանիսի համար, և եԹէ այդ միջոցին միշտ աչքի առաջ է ունեցել այն բազմաԹիւնը, որ իւր վիճակումն էր և որի հետ նա, անշուշտ, իւր կենդանի խօսքովն էլ շատ էր խօսում իրեն առաջնորդ և քարոզիչ, ապա ուրեմն մեզ հասկանալի կը լինի այն բազմակերպուԹիւնը, որ նկատելի է նորա բարբառի մէջ։ Իսկապէս Նաղաշի երգերի բարբառը մեզ համար մի լաւ աղբիւր է հին

---

ՁարքայուԹիւն աւետարեալ (·ˉ) և զՔրիստոս Աստուած քարոզեալ·

Իսկ ազգականք Թագուհւոյն եկեալ, որ Սուքիաս անուն կոչեցեալ·

ՁմեռուԹիւն իւր արհամարհեալ և արքայուԹեան երկինից ցանկացեալ·

Ձարքունական պատիւն անգոսկեալ (·ˉ) և զՔրգնուԹիւն ի յանձն իւր առեալ·

ԲարեխօսուԹեամբ սրբոյն Սուքիասի ինայնա՛ ի մեզ Փրկիչ աշխարհի, աղաչեմք·

և այսպէս շարունակւում է միևչև վնացեալ տառերի աւարտելը·

Ընական սիրոյ անմահին փափագեցին գունդք Սուքիասին

Տեսեալ բանսարկուին չարն և ախտացեալ զնոսա ի սէր անմահին վառեալ·

Ի ցնծուԹեան աւուրն լրման եկեղեցւոյ մանկունք զուարճանան·

Ձորեքկերպեան աթոռ լուսատու պայծառացան ի Հոգւոյն սրբոյ·

Այսպէս են կազմուած գրեթէ Մկրտչի բոլոր գանձերը, միայն չեն անգամ բառերն էլ չեն փոխում տների սկզբում։ Այդ գանձը հանեցինք մեր ուսումնական գրչեայ տաղարանից, որ թեև բոլական չունի, բայց հատանական է, որ ԺԵ. դարումն է գրուած. այդպես կարծում ենք նոյն գանձի այս խօսքերից, որ վերջին տան մէջ կան·

«Ձհայրապետս մեր Կերակոս առաքինութեամբ զնա զարգացո՛»·

այս խօսքերից երեւում է, որ գանձի յօրինման ժամանակ Հայոց կաթուղիկոսը, որին յիշում էին եկեղեցիներում, Կիրակոս Վիրապեցին էր, որ ընտրուեցաւ 1441 թուին։ Մեզ այնպէս է թւում, որ այդ իսկ գանձի յօրինողը Թոմայ Մեծոփեցու ընկեր Մկրտիչ վարդապետն է, որ նոյնպէս Մեծոփայ վանքից էր եւ մանանկից եղաւ կաթուղիկոսի ընտրութեան ժողովին, թեև Թոմայ յիշում է եւ մի այլ համանուն վարդապետի, այն է Մկրտիչ վ. Բագրեւանցի (տես Թոմ. Մեծ, յիշատ. էր 52)։

գաւառականների ուսումնասիրութեան մասով։* Յանկալի է, որ նախ՝ նորա այլ՝ տակաւին անծանօթ մնացած՝ երգերը լոյս տեսնէին և երկրորդ՝ տարբեր ընթերցուածներն ու գրչուԹիւնները հրապարակ գային հաստատելու այն միտքը, Թէ Նաղաշի երգերի մեծ մասի բարբառը Միջագետքի, առաւելապէս Ամիդ քաղաքի, ԺԵ. դարու Հայոց գաւառականի գրաշարն է կրում իւր վերայ։

Առ այժմ այսքան։ Ցոյս ունինք, որ ժամանակը կ՚օգնէ մեզ մի օր վերադառնալու Նաղաշի կեանքի և գործունէութեան նոր ուսումնասիրութեանը, աւելի ճոխ և պարզուած նիւթեր ունենալով ձեռքի տակ քան այն աղքատիկ ատաղձը, որ այս շատ համեստ և սահմանափակ ուսումնասիրութեան նիւթ եղաւ, ԺԵ. դարը դեռ այնքան անծանօթ է Հայոց գրականութեան մէջ, նիւթերը դեռ այնքան անմշակ են, կարելի է ասել, անյայտ են, վերջապէս նոյն իսկ Նաղաշի նման աչքի ընկնող պատմական անձինքների պատկերը դեռ այնքան աղօտ է տեսնուում պատմագրութեան հորիզոնի վերայ, որ ամենայն մի էջ, ամենայն մի տող այն պարի մասին հրապարակ հանելը մեծ նպաստ է գործի յաջողութեան համար։ Ցուսանք և սպասենք, որ գրչեայ մատեաններուն մէջ պահուած գանձերից հետզհետէ հանդէս բերուին կարևոր նիւթերն և հնարաւոր լինի բանասիրութեանն աւելի ճոխ տեղեկութիւններ տալ ապագաներին Նաղաշի գործունէութեան և կեանքի մասին։

Ղ. Ղ.

---

* Նաղաշի գործածութեան մէջ կայ հես և խես, խոս (Հոտ), խալալ (Հալալ), հանց, հանց (Հէնց), հանցեղ և վանց, այդոր (այդմ) այդկից (Յայդմանէ), յանկից (անտի), յիանկ (Յինէն), ասկեն, անկեն Հոլովում է ասկենիս, յասկենես, անկենին և.ն.։ ի հոս, ի հոն, պիտի և տի (վերջինս յաճախ), դարպաս՚տի, հաթեղանին, ՚ի հինշտակինոց տուեն, երես, և.ն., ունի զարձուածներ «Ե պտրի լուսին» մանուկ մտուտագալի և մատաղատունկ, աղեկ մանուկ, կանանչ արեւ, աղուոր պատկեր, արեւնման, ծովային ալի, հես թաւիս ու հես շուարիս, դու նոր կունորես, ողորմուկ=ողորմիկ, վաշ հազար բերան, և.ն.։ Կան և խօսքեր, որ թէև հին են, այժմ էլ նոյն կերպ են գործ դրւում, ինչպէս չման (բաներն ի լման, կայ ի լման) յերերմանի, շատոց (շատերին), շատոց (շատունց), սուտ ու փուտ և սուտ ու փուչ, անբան խօսքը անգործ է նշանակում. սիրում է նուազականը օրիկ մի, արտիկ. գործելի իրեն ածուխ, կարծեմ, հնագոյն գործածութիւնն է նաղաշի մօտ։

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՊՐՈՖ. ՄԱՐՐԻ ԿԱՐԾԻՔԸ

ՎՐԱՅԻՈՑ ԸՆԴԴԻՄ ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՒ, ՎԷՄԻ ՄԱՍԻՆ։

Հասկանալի պատճառով «Արարատ»ը այս վէմի մէջ մանակցել չէր կարող. բայց ի հարկէ նա ուրախ է, որ մի անկողմնակալ անձն, ինչպէս յարգելի պրոֆ. Մարրն է, լսելի է անում իւր կարող ձայնը (ս. „Новое Обозрѣніе“ № № 4841 և 4842-ի մէջ զետեղուած „Грузинскій поэтъ Акакій объ армянахъ“ յօդուածը)։

Ընթերցողին յիշեցնելով, որ ինքն անձամբ ծանօթանայ յօդուածի հրապարակական մասի հետ, մենք այստեղ առաջ կը բերենք միայն սոսկ ուսումնական մասը։

Վրացիք ասում են, թէ արդի հայերը ազգային անուն չունեն, ազգային պատմութիւն չեն ունեցել մինչև հայոց եկեղեցու բաժանութիւնը պրաւոսլաւնի եկեղեցուց, իսկ Հայաստանի հնագոյն ժամանակների մասին հայոց պատմագիրների հաղորդածները լոկ միայն առասպելներ են։—Նրևի այս խօսքերն առաւելապէս այն մտքով պէտք է հասկանալ, թէ ամենայն ազգի հին պատմագիրների պէս՝ հայոց առաջին քերթողներն ևս ազգային պատմութեան սկիզբը հրաշապատում նկարագրութիւններով են աւանդել։ Բայց այս հայեացքը ոչ նոր է և ոչ անծանօթ՝ հայերին։ Հայոց պատմութեան աղբիւրների բացատական քննադատութիւնը հսկայական քայլեր է արել եւրոպ. ուսումնականների աշխատութիւններով (Gutschmid, Baumgarten, Carrière), բայց աւելի ևս նոյն իսկ հայերի ձեռքով (Պատկանեան, Տաշեան, Գարագաշեան, Գալուստ միաբան, Յովսէփ Թեոնց)։ Բայց սոքա ամէնքը ոչ թէ ժխտում են հայոց ազգային պատմութիւնը, այլ ընդհակառակ նոր լոյս սփռելով՝ նպաստում են անոր հաստատութեան—աւելի հիմնաւոր ուսումնական ապացոյցներով։

Սակայն վրացիք ժխտելով հայոց ազգային պատմութիւնը, ուրեմն և քաղաքակրթութիւնը, կիսով չափ հետը ժխտում են և իբրեանց, վրացւոց, քաղաքակրթութիւնը։ Վասն զի յայտնի է թէ հին ժամանակներում և մինչև Ժ. դարը վրաց գրականութիւնը զգալի կերպով կրել է հայոց գրականութեան ազդեցութիւնը։ Հերիք է յիշեցնել, թէ վրաց ս. գրոց առաջին թարգմանութիւնները հայերէնից են կատարուել, իսկ այս իրողութիւնը հաստատում են ոչ թէ հայերը, այլ այն ուսումնականները, որոնք ոչինչ մասն ու բաժին չունին հայ-վրացի վէճերի մէջ։ Վրաց եկեղեցական գիրը, եթէ և Մեսրոպից հնարած չէ, գոնէ անշուշտ հայոց այբուբենի օրինակով է կազմուել, և ուրեմն, ըստ հնութեան, հայոց պատմագիրների հաղորդածները այս մասին՝ բնաւ չեն հակառակում իսկութեան։ Եթէ իրենց քրիստոնէական քաղաքակրթութեան այսպիսի հանգամանքները, ինչպէս որ են եկեղեցական գիրն ու ս. Գիրքը, վրացիք ստացել են հայերից, տեսէք թէ ինչ պէտք է լինէր հայոց կրթութեան ազդեցութիւնը հին վրացիների վերայ, և մանաւանդ հենց այն ժամանակ, երբ որ հայոց եկեղեցին ապրում էր ընդհանրական հետ միևնոյն կեանքով։ Եթէ ուրեմն այն ժամանակներում հայք ազգային քաղաքակրթութիւն չեն ունեցել, յայտ է թէ վրացիք ևս, որ հայերից են փոխ առել կրթութիւնը, աւելի ևս ոչինչ չպէտք է ունենային։ Իսկ այս բանը ոչ ոք երևի չի ուզենայ պնդել։

Թէ հայերը դիտակցաբար թշնամութիւն են անուցանում իւրեանց սրտի մէջ պէսպի վրացիք, այս բանի ապացոյց են համարում սոքա՝ 596 թ. սահմանած Դուինի ժողովի վճիռը, որով հայերին արգելուեցաւ որևէ հաղորդակցութիւն ունենալ վրացւոց հետ, բացի առևտրից։—Կարելի է առաջ բերել վրացւոց նոյն կարգի և աւելի ևս մոլեռանդ անեծքադամութեան գէպքեր գէպի հայերը, այլ պատճառ. և ոչ այսքան միայն, այլ թէ վրացւոց կրօնաւորները ինչպէս են սրբագրել քրիստոնէական սրբութիւնները։ Բաւական է յիշեցնել այն զզուելի տեսարանը, որ նկարագրուած է ժամանակագրութիւնների մէջ մի վէմի առթիւ, թէ ո՛ր հաւատը լաւ ապրն է,—

հայոց թէ վրաց հաւատաը։ Պրօֆ. Մարրը ամաչում է վրաց պատմագրի խօսքերը առաջ բերել, այլ միայն ցոյց է տալիս տեղը (Գիտ. ձեմարանի հրատարակութիւն վրաց բնագրի ա. մաս, երես 314—315 և Բրոսսէի Ֆր. թարգմանութեան ա. եր. 452—454)։ Ա՛յս էլ պէտք է աւելացնել, որ վերև ակնարկած արգելքը սահմանուել է ոչ թէ Դաւինի ժողովում այլ յիշուում է Աբրահամ կաթուղիկոսի ընդհանրական մէջ (ա. Մովսէս Ուտիացի, Մոսկ. 1860 եր. 215. Ուխտանէս, Էջմ. 1871, եր 130 և 136)։ Մրթէ ապացուցի կարօտ է, թէ «Դաւինի ժողովի» մասան-փաթթան արգելքը երկու ազգերի բոպէական գրգռման պատուղ է եղել և երբէք կարևորութիւն չի ստացել. այժմ լոկ միայն հնախօսութեան համար նշանակութիւն ունեցող նիւթ է այն։ Նոյն իսկ վրաց գրականութեան մէջ շատ լաւ յայտնի է այս ուղղափառ հայհոյքը (Ժորդանիա, Տարեգիրք վր. լեզուով, Տփղիս 1893 թ., եր. 313. Բաքրաձէ «Պրօֆ. Պատկանով և վրաց պատմութեան աղբիւրները», վր. լեզուով, Տփղիս, 1884 թ., եր. 6—7)։

Վրացիք գանգատւում են, թէ ըստ հայոց պատմութեան այնպէս է դուրս գալիս, իբր թէ վրացիք երբէք ինքնուրոյնութիւն չեն ունեցել։—Պրօֆ. Մարրն ասում է, թէ 13 տարի հայերէն է կարդում, 10 տարի ուսումնասիրում է հայոց հեղինակները, բայց ոչ մի հայոց պատմագրի, ոչ մի հայոց մատենագրի մօտ ոչ մի տեղ չի գտել, ուր վրաց ինքնուրոյնութիւնը այդչափ ծայրայեղութեամբ ժխտուած կամ ծաղրած լինի։ Իսկ ընդհակառակն, եթէ հայոց հեղինակներ չլինէին, վրաց անցեալի մեծագոյն մասը յաւիտեան ծածկուած պիտի մնար մութը խաւարով։ Վրաց թագաւորների արժանիքների մասին, վրաց իշխանների քաջագործութեանց մասին խօսում են ոչ միայն հայ պատմագիրները, այլ և հայ ձեռագիրների յիշատակարանները։ Եթէ այս բաները վրացիք չգիտեն, մեղքը իրանց անուսումնութեանն է, ուրիշ ոչ ոքի։ Վրացոց համար խրատական պիտի լինի վրացի Բաքրաձէի կարծիքը, թէ իրանք մասամբ հայերին են պարտական, որ M. Brosset-ն սկսեց ուսումնասիրել վրաց դրականութիւնը և եւրոպացիներին էլ շահագրգռեց։ Նա պատմում է. «Երբ որ 1822 թ. Փարիզում հիմնուեցաւ Ասիական ընկերութիւնը, անոր անդամներից մէկը, հռչակաւոր Ս. Մարտինը, հաւատացրեց նոյն ընկերութեան, թէ վրաստանը այնչափ էլ աղքատ չէ պատմական ազբիւրներով, որչափ որ կարծում են։ Ս. Մարտինը այս կարծիքը հիմնում էր եւրոպական գիտութեան հաստատուն ճանաչութիւնների վրայ, բայց առաւելապէս հայոց յիշատակարանների տեղեկութիւնների վերայ, որ ինքը կատարելապէս ուսումնասիրել էր։ Ս. Մարտինի առաջարկութեամբ ասիական ընկերութեան հինգ անդամները սկսեցին հետազօտել վրաստանի պատմութիւնը, բայց ափսոս որ նոցանից շատերը շուտով վախճանեցան. կենդանի մնաց միայն Մարի Բրոսսէն, որ մեր (վրաց) պատմագրութեան վերաբերեալ իւր գործունէութիւնը 1837-ին Փարիզից Պետերբուրգ փոխադրեց»։

Վրացիք երևակայում են, թէ հայոց պատմութեան մէջ ասուած է, իբր թէ հայերը վրացոց պարգևել են նոյն իսկ լեզուն։—Հայոց պատմագիրների մօտ այդպիսի բան բնաւ չենք զտնում։ Թերևս հայերից վրացիներին լեզու պարգևելը ասելով պէտք է հասկանալ այն տեղեկութիւնը, թէ վրացիք սկզբում հայերէն են խօսել, ինչպէս որ հաղորդում է մի տարեգրութիւն»։ Բայց այդ ծանուցումը հաղորդուած է միմիայն վրաց տարեգրութեան մէջ (Գիտ. ձեմարանի վրացերէն բնագիր, ա. մաս, եր. 25 և 26. Brosset-ի Ֆրանս. թարգմ. ա. մաս. եր. 31 և 32), և եթէ հայոց գրականութեան մէջ էլ պատահում է այդպիսի տեղեկութիւն, այն էլ միմիայն վրացերէնից թարգմանած յիշատակարանն է հաղորդում (պատմութիւն վրաց, հայերէն լեզ., Վենետիկ, 1884, եր. 17 և 18. Brosset-ի Ֆրանս. թարգմ. Additions et Eclaircissements, 1851, եր. 6)։

Վրացիք զժգոհ են, որ հայ ուսումնական Պատկանեանը ասացուցել է ուզեցել, թէ վրացիք պատմութիւն չեն ունեցել, թէ նոքա այն կարկատել են միայն ԺԴ. դարում, Վախտանգի ժամանակ, այն էլ հայոց առաստղներից։

Եթէ այս խօսքով ուզեցել են ասել, թէ Պետերբուրգի համալսարանի հանգուցեալ պրոֆեսորը, ռուսաց ուսումնականը, ծագմամբ

հայն, առաջինն է եղել, որ վրաց տարեգրութիւնները խիստ ուսումնական քննադատութեան է ենթարկել, այդ յիշատակարանի խոշոր վերամանակութիւնները բաց է արել, մի շարք իրողութիւնների անհնարաւորութիւն է հաստատել, որոնք անշուշտ յերիւրուել են մասամբ հին անուանագրութեանց անտեսի մեկնութիւններից (որոնց օրինակը իրան յայտնի էր հայոց աղբիւրներից ևս), մասամբ երևի թէ օտարազգի հերոսները «վրացացնելուց», — որով ակնյայտնի ապացուցել է, թէ եւրոպական գիտութեան յայտնաւած իւր ժամանակի վրաց տարեգրութիւնները մեծ հնութիւն չունին և անտարակոյս ժը. դարու հեղինակութիւն են, և թէ անոր առելի հնագոյն խմբագրութիւնը, որ առ այժմ յայտնի է միայն հայոց թարգմանութիւնից, հազիւ թէ ժ. դարից հին լինի. նթէ աստմնանք ուղենային հանդուցեալ հայապիտի այդ վաստակները մատնացոյց անել, ապա առարկելու բան չկայ. թերևս կարևոր է այս միայն յիշեցնել, թէ նոյն իսկ վրացի Բաքրատեան Պատմագիրից առաջ յայտնել է այն կարծիքը, թէ վրաց սկզբնական պատմութեան աղբիւրները մատնացոյց են (Кавказскій календарь на 1858 годъ, եր. 405): Բայց Պատմագիրն մեղադրում են, թէ «հայ ուսումնական» հայ գոլով դիտմամբ ժխտում և անարգում էր վրաց անցեալը: Իսկ այս ճշմարիտ չէ: Ինքնին հետևում է, որ եթէ Պատմագիրը կամեցել է վրացիներին ստորացնել լուսաւոր աշխարհի առաջ, նա ուրեմն հայոց յիշատակարանները քննադատելիս՝ պէտք է խուսափէր բացասական վերաբերութիւնից: Իսկ յայտնի է, որ գիտնական Պատմագիրը՝ թէ և հայ, հատատաք չափով անողոքութեամբ է քննադատել թէ՛ հայերի և թէ՛ վրացիների պատմական յիշատակարանները: Բաւական է միայն յիշեցնել, թէ «հայ ուսումնական» Պատմագիրը հայոց մատենագրութեան պարծանք Խորենացու դէմ առելի անգութ խոստութիւն է բանեցրել, քան վրաց տարեգրութիւնների դէմ:

Վրաց գրականութեան մէջ լսում է, թէ հայոց թելադրութեամբ Գրիգոր Հրապարակաւ յայտնել է, որ Թամար Թագուհին գահ է բարձրացել հայոց և օսէթների ծածուկ հնարագիտութիւններով, իսկ այն ժամանակ, (ԺԲ. դարում), վրացիք լոկ մի աննշան, անխօտհուրդ ամբոխ էին, զուրկ ամենայն նշանակութիւնից: — Ի՞նչ արժէք ունի Գրիգոր, որ եղել է հայոց թելադրութեամբ. մինէ հայոց համար փառք է, թէ իրանց նախահայրերը վրաց ոստանի մէջ գաւազրիչ են եղել. և ինչո՞ւ միայն հայերն են գտատպարտում և ոչ հետը նաև օսէթները: Այս հարցերին պատասխան տալը՝ գտատպարտողները պիտի դժուարանան:

«Մինէ հայոց մատնալը չի՛ ձգտում ապացուցանել իբր թէ վրաց լեզուն այնքան աղքատ է, որ բարդ մտքեր արտայայտելու կարողութիւն չունի, և իբր թէ վրացիք նոյն իսկ բառերը հայերէնից են փոխ առել, մինչդեռ եւրոպական ուսումնականները հակառակն են հաստատում» (?— այս հարցականը պ. Մարրին է): — Պ. Մարրը պնդում է, թէ այդպէս վարկեան ձևով արտայայտած մտքեր իրան չեն հանդիպել հայոց մատնալի մէջ: Իսկ թէ վրացիք հայերէնից բառեր են փոխ առել — այս մի իրողութիւն է, որոյ գիւտի պատիւը հայերին չի պատկանում: որովհետև հայոց բառերի գոյութիւնը վրացերէնի մէջ՝ խոստովանել և ցոյց են տուել այնպիսի վրացիք, ինչպէս որ են Ժ. դարու մատենագիր Սմբատ Սուլխան Օրբելեանն և ԺԹ. դարու բառագրող յօրինիչ Զուբիանով: Ամէն էլ չէ, եթէ մի լեզուս ուրիշից բառեր է փոխ առնում և իւրացնում. այդ մի նշան է, որ լեզուն կենսունակ է: Վրացերէնն էլ հայոց լեզուի վերայ ազդել է. իրանք հայերը այդ բանը չեն ծածկում: Մխիթարեանները ամենայն յօժարութեամբ այդպիսի բառեր նշանակում են իրանց մեծագործ բառարանի մէջ, եթէ միայն իրանց այդ բանը յայտնի է լինում: Պրոֆ. Մարրը յարակցում է, թէ ինքն անձամբ համոզուել է, որ վրացերէնը առաջնակարգ կարևորութիւն ունի հայոց լեզուի պատմութիւնը լուսաբանելու համար: Բայց այս խնդիրը սոսկ ուսումնական խնդիր է, որ հայերը վարժուել են որոշել ազգային խնդիրներից, և անկիրճ կը լսեն ճշմարտութիւնը, երբ որ գիտութիւնը հրապարակ հանէ:

«Հայերը վրաց տաճարներից և վանքերից քերել են վրացերէն արձանագրութիւնները և «Դաւթեների ու Բազրատաններին» տեղ գրել են

«Արշակներ և Մարշակներ»։—Այս խօսքերը պրօֆ. Մարրին առաւելապէս այն պատճառով են վրդովեցնում որ նկարագրած բարբարոսական վարմունքի մի անհաւատալի և չստուգած դէպք լուսամիտ վրացիք ընդհանրացնելով՝ բոլոր հայերին հռչակում են բարբարոս։ Սկզբնվով հայոց գռեհիկ ժողովրդից, նա վկայում է, թէ հայ գռեհիկը, հէնց որ մի տառ նկատէ քարի մէջ փորագրած, այն համարում է սրբութիւն, և ամենայն բարեպաշտութեամբ է վերաբերում այդպիսի սրբութեան, ինչ լեզուով որ գրած լինի։ Այս նա հաստատում է բազմիցս իւր աչքի տեսածներով։ Իսկ հայոց լուսամիտ դասակարգի մի համակրելի յատկութիւն է համարում այն հանգամանքը, որ նա հասարակութեան ամէնաչքառու դոլով, պատկառանօք է վերաբերվում դէպի ամենայն հնութիւն, լինի այն օտարինը թէ իւրը։ Նա յարգում է ամեն ազգի արձանագրութիւնները։ Վրաց արձանագրութիւնները հայ ուսումնական կրօնաւորները լանամով ժողովել և տպագրել են, և աւելի առաջ, քան իրանք վրացիք։ Հայոց այսպիսի սիրայօժարութիւնը ապացուցանում են Գիտ. ճեմ. հրատարակութիւնները, որ օր. Inscriptions georgiens etc. receuillies par le Père Nersès Sarguisian et expliquées par M. Brosset, St. Pétersbourg, 1864. Պրօֆ. Մարրը, իբրև ականատես, իւր ճանապարհորդութիւնից սրտաշարժ օրինակներ է բերում նոյն բանը կրկին և կրկին անգամ հաստատելու համար։ Հայոց ուսումնական շրջանում էլ՝ այդ ազգային ինքնագիտակցութեան զարգացման ասպիճանի լուսազգաց ներկայացուցչի մէջ էլ, նկատում է ոչ միայն նոյնչափ ներողամտութիւն, այլ և փոյթ, թէ յորում է երևացել վրաց ազդեցութիւնը հին հայոց կենաց վերայ։ Զօր օր. ոչ թէ վրացին, այլ հայ ուսումնական Տաշեանն է լուսաբանել իւրովանին, թէ ինչ նշանաւոր գեր է, կատարել հայոց գրականութեան մէջ մի վրաց բնագիր, որ վերաբերում է, յոյն մատենագիր Պրոկոպի փիլիսոփայական գրուածքին և որ միջին դարերում ահագին կարևորութիւն է ունեցել։—

Ի վերջոյ մնում է մեզ խորին շնորհակալութիւն յայտնել յարգելի պրօֆ. Մարրին, որ չի պղծել իւր ուսումնական հմտութիւններով լոյս և խաղաղութիւն սփռել պատրութեան մէջ։

Ս. Մ.

## ԲԱՐՁՐ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՀԻՒՍԱՒՈՐ ԱՐԵՒՄՈՒՏՔՈՒՄ, ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ։

Դեռ շատ ժամանակ չէ, անցել այն օրից, երբ Ամերիկայի հիւսւոր արևմուտքը նկարագրում էր կատաբելապէս մի վայրենի երկիր, որտեղ համարձակվում էին միայն շատ քիչ արկածախնդիր մարդիկ մնալ։ Այժմ Ամերիկացիք մեծ արագութեամբ այդ անապատները մարդաբնակ են դարձնում, քաղաքակիրթ աշխարհի կարգերն այնտեղ փոխադրելով։ Դուրգ չնորհիւ այն բանին, որ անմարդաբնակ տեղերում գոյութեան կռիւը դժուարութիւնը աւելի միացեալ ոյժեր էր պահանջում, թողլ չտալով սեպհական ոյժերի վերայ վատահանալու, այդ կարգերից շատերը Ամերիկական արևմուտքում աւելի բարգաւաճեցին քան թէ արևելքում։ Այդ կարելի է ասել օրինակ ժողովրդական կրթութեան գործի կազմակերպութեան համար։ Ամերիկական նահանգներում ոչ միայն ձրի է սկզբնական կրթութիւնը, այլ շատ անգամ և ամբողջ կրթութիւնը, սկսած մանկական պարտիզից մինչև համալսարանը։ Այստեղ ամեն կողմերում կարելի է դանել հաստատութիւններ միջնակարգ կրթութեան համար, որտեղ ընդունում են անվարձ՝ ըստ պատշաճին պատրաստած մանուկներին։ Չկայ նոյնպէս ոչ մէկը այդ նահանգներից, որ չունենայ իւր համալսարանը, որտեղ ուսանողներից կամ ուսման վարձ բոլորովին չէ պահանջուում և կամ պահանջուում է շատ քիչ։

Ժողովրդական կրթութեան գործի յարմար կազմակերպութեան և ամերիկական նահանգների այս խնդրում ցոյց տուած եռանդուն գործունէութեան մի կենդանի նկարագիր ընծայում է Կալօրադի ուսուցչապետ Ջ. Ռուսսելը՝ «Համալսարանը Կալօրադում» վերնագրի ներքոյ։

Սորանից 40 տարի առաջ նոյն իսկ քաղաքակրթուած Ամերիկան շատ քիչ բան գիտէր այն գաւառի մասին, որն այժմ Կալօրադո անունն է կրում։ Միայն այսքանը գիտէին, որ քաղաքակրթութեան արևմտեան սահմանից մինչև ապառաժոտ լեռները ձգուում է մի անհնահ, ընդարձակ գաւառ, որ քարտէզներում «Ամերիկայի մեծ անապատ» անունն է կրում։ Բայց 1859 թ. յետոյ գործը շատ շուտ փոխուում է, երբ Պայակ Պիկի մօտ ոսկու հարուստ մի հանք է գտնուում։ Այդ ժամանակից սկսած ոսկի փնտռողների մի մեծ հոսանք սկսուեց, որոնց մեծ մասը մնայ հէնց այնտեղ,

և 1861 թ. Միացեալ նահանգների ժողովը Կալիֆորնիայի սահմանները որոշեց (Կալիֆորնիան գտնուում է $37^0$ և $41^0$ լայնութեան և $102^0$ և $109^0$ երկարութեան տակ)։ Կալիֆորնիայի սահմանները որոշելու ժամանակ, ժողովուրդը բաղկացած էր 25,329 այր մարդկանցից և 4484 կանանցից։ Առաջին օրէնսդրական ժողովը, որ տեղի ունեցաւ Դիենվրում 1861 թ.-ի յունուարին, հրատարակեց ուսումնարաններին վերաբերեալ օրէնքներ, իսկ յետոյ ձեռնարկեցին եռանդուն ջանքերով ժողովրդական կրթութիւն կազմակերպելու գործը։ Սակայն երկար ժամանակ այդ ջանքերը խափանուում էին այն հանգամանքի շնորհիւ, որ Կալիֆորնիայի մանուկների թիւը շատ քիչ էր սկզբում (որովհետև այստեղ գալիս էին գլխաւորապէս անընտանիք, միայն բազդախնդիր մարդիկ)։ Գործի յաջողութեան առնապատ հանգամանքներ էին քաղաքական ապատամբութիւնները և անվերջ ընդհարումները Հնդիկների հետ։ Միայն 1870 թ.-ից յետոյ ժողովրդական կրթութիւնը այնքան ամուր կազմակերպութիւն ստացաւ, որ 1876 թ., երբ Կալիֆորնիան հանդէս գարձաւ, հրնարաւոր է գառնում սկսած շինութիւնն ի ծայր հանել։ Նոր նահանգի սահմանադրութիւնը որոշեց, հէնց առաջին օրէնսդրական ժողովով հիմնել համալսարան, ինչպէս տէրութեան հաստատութիւն և ինչպէս փառք ու պսակ նահանգի ուսումնարանական հաստատութիւններին։ Համալսարանը պէտք է լինէր երկու սեռի ուսանողների համար։ Այս համալսարանը, որ հիմնուեց 1877 թ. սեպտեմբեր ամսին Բուդլէր զիւղաքաղաքում, որը Դիենվրից 30 մղ. հեռու է գտնուում, ունենալով երկու ուսուցչապետ և 44 ուսանող՝ սկզբում զարգանում էր շատ դանդաղ, բայց այժմ կատարելապէս կազմակերպուել է և կարող է Ամերիկայի բարձրագոյն կրթական հաստատութիւններից մէկը համարուել։

Կալիֆորնիայի համալսարանն ունի հետևեալ բաժանմունքները. 1) ազատ արուեստների բաժին՝ դասական, փիլիսոփայական և գրական գիտութիւնների դասախօսութիւններով, որոնք ուսանողին տալիս են բակալաւրի աստիճան. 2) graduate courses մագիստրոսութեան և դոկտորութեան աստիճան ստանալու համար. 3) արուեստագիտական բաժին, 4) բժշկական և 5) իրաւաբանական բաժին։

Ազատ արուեստների բաժնում դասախօսում են լատին, յոյն և անգլիական լեզուները, համեմատական և անգլիական գրականութիւն, գերմանական լեզու և գրականութիւն, ֆրանսիական լեզու, հաշուեգիտութիւն, բնագիտութիւն, կենսաբանութիւն, քիմիա, փիլիսոփայութիւն, մանկավարժութիւն, պատմութիւն և պետական գիտութիւններ, սեմական լեզու, երաժշտութիւն։ Այս գիտութեանց դասընթացները այնպէս են յարմարեցրած, որ ըմբռնելի են թէ Կալիֆորնիայի և թէ ուրիշ համալսարանների իւրաքանչիւր միջակալաւրի համար։ Մագիստրոսութեան աստիճան ստանալու համար անհրաժեշտ է երկու տարի պարապել մի որ և է մասնագիտութեամբ, դոկտորութեան աստիճան ստանալու համար պիտի պարապել երեք տարի։ Բայց այս, պէտք է ներկայացնել գիտնական անկախ մի գրուածք՝ իրրև ուսումնական աշխատութիւն։

Արուեստագիտական բաժնում, ինչպէս և Ամերիկայի բնական գիտութեանց բոլոր ուսումնարաններում, միաեսակ ուշադրութիւն են գարձնում աւանդելի առարկայի թէ տեսական և թէ գործնական մասերի վերայ։ Բժշկական ուսումնարանը շատ լաւ կազմակերպուած է, իսկ իրաւաբանականը՝ հետզհետէ կազմակերպուում է։ Իրաւաբանական գիտութիւնները դասախօսում են այժմ 4 պաշտօնատար և 10 կիսապաշտօն ուսուցչապետներ։ Իրաւաբանական ֆակուլտէտի գոյութիւնը Կալիֆորնիայում մի բարկացնող երևոյթ է։ Իրաւունքներ ուսումնասիրելու առաջուայ եղանակը՝ գործնական վարժութիւններ անել գրասենեակներում և դիւանատներում այժմ գործածութիւնից ընկնում է։ Գիտութեամբ կրթուած իրաւաբանին Ամերիկայում ամեն տեղ սկսում են յարգանք մատուցանել, ինչպէս արևմտեան նոյնպէս և արևելեան մասում։

Կալիֆորնիայի համալսարանը, որ հիմնուել է և գոյութիւն ունի մի փոքրիկ ժողովրդի նուիրատուութեամբ, հետզհետէ միայն կարող է ծաղկել և զարգանալ։ Համալսարանի շինութիւնը 12 տարուայ ընթացքում աւարտուեց։ Այս շինութիւնը իւր մէջ բովանդակում է լսարաններ, գործանոցներ, մատենադարան և ուսուցչապետանոցի ու ուսանողների համար բնակութեան սենեակներ։ Գլխաւոր շինութեան մօտ այժմ կայ չորս յարկանի մի դիզեցիկ շինութիւն, որի մէջ առանձնապէս գիտնական նպատակ ունեցող անձինք կարող են պարապել։ Առանձին շինութեանց մէջ բովանդակում են քիմիական գործանոցը, բժշկական ճեմարանը, ճարտարապետական ուսումնարանը, նոր ննջարանն ուսանողների համար, սեղանատունն, ննջարան ուսանողուհիների և կացարան համալսարանի վերատեսչի համար։ Քիմի-

ական, բնագիտական և կենսաբանական գործանոցները շատ լաւ պատրաստուած են, սակայն աշխատողների համար այդ շինութիւնները գեռ ևս անբաւարար են: Ներկայումս շինուում են քնախօսական և հոգեբանական գործանոցներ:

Համալսարանի գանուելիք հանքերով հարստացած մի գաւառում հնարաւորութիւն տուեց պատրաստելու հանքաբանական և երկրաբանական իրեղէններով լի մի գեղեցիկ թանգարան. կայ և գեղարուեստական արտադրութեանց մի գեղեցիկ ժողովածու, որ արևմտեան կոպիտ բարքերի հակապիր երևոյթ է ներկայացնում և համալսարանը կազմակերպողների կենդանի, բարոյական շահերի հետամուտ համղմունքը ցոյց տալիս:

Մատենադարանը ունի ընդ ամէնը 15000 գիրք, բայց այս գրքերը այնպէս խնամքով ժողովուած են (Կօլօրադի համալսարանը գրքասիրութիւն չէ ունեցել նկատում է ուսուցչապետ Ռուսսէլը, հնացած գրքերի հազարներ ստանալ կամենալով), որ ուսուցչապետները հարկ չեն ունենում գուրսը գիրք փնտռել: Ընթերցարանը ստանում է Ամերիկական և արտասահմանեան 125 ամենահետաքրքիր պարբերական հրատարակութիւններ:

Դասաւանդութիւնը ներկայացնում է գործնական աշխատութեանց և դասախօսութեանց միութիւն: Առարկաների մեծաւորապէս երրորդ մասն ընդհանուր է այն բոլոր անձանց համար, որոնք ցանկութիւն են ունենում բակկալաւրի աստիճան ստանալ (հասարակութիւն, անգլիական, գերմանական, և ֆրանսիական լեզուներ, բնական գիտութիւն, հոգեբանութիւն, արտաքինութիւն): Յետոյ պէտք է ուսանողը անպատճառ մի խումբ առարկաներ որոշէ (որոնց որոշելը իւր կամքից է կախուած), իսկ մնացած առարկաները լսել կամ չլսել իւր ազատ կամքին է թողնուում: Դասախօսութիւն լսելու այսպիսի ընդարձակ ազատութիւնը ոչ մի վատ հետևանք չէ ունենում: Ուսանողների մեծ մասը, որոնց թիւը Կօլօրադի համալսարանում 500 ից անցնում է, աղքատ դասակարգի մարդիկ են, որոնք գիտեն գնահատել գիտութեանց կարևորութիւնը և առանդուն կերպով նպաստել նոցա ուսումնասիրութեան: Շորքա չեն փախչում և զուարճութիւններից. գնդակախաղը, ձիարշաւը և հեծանիւով մանդալը՝ սիրելի զարճած մարմնի վարժութիւններ են, որոնցով կարելի է պարապել տարուայ մէջ 315 օր Կօլօրադի հրաշալի կլիմայի տակ: Կօլօրադում կայ և երգեցիկ խումբ և նուագախումբ, զրականական հասարակութիւն, վիճաբանութեան ժողովարան, հրատարակուում է և մի թերթ, կայ նոյնպէս ամերիկական ուսանողների ընկերութեան առանձին բաժանմունք:

Կօլօրադի համալսարանի նախագահն է Ջ. Բէկէր, նշանաւոր «Տաճն անծանց յանձնաժողովի» ամենից աչքի ընկնող անդամներից մէկը, որի առաջ հաշիւը մեծ նշանակութիւն ունեցաւ Ամերիկայում միջնակարգ կրթութեան վերանորոգման համար: Կօլօրադի համալսարանը միայն անուամբ է ուսումնարանական գործի գլուխն անցել: Նահանգի իւրաքանչիւր մի քաղաք, որ հազարից աւելի ժողովուրդ ունի, ամենայն տարի պատիւ է ունենում ընդունելու համալսարանի ներկայացուցչին: Այս պատգամաւորը դիտում է ուսումնարանները, քննում է աշակերտներին, աշխատում է ուսուցիչների մէջ աւելի հետաքրքրութիւն զարթեցնել դէպի իրենց գործն, և վերջապէս քաղաքացիներին մանկավարժական խնդիրների վերաբերեալ դասախօսութիւններ է կարդում: Բացի այդ՝ Դենվէրում մանկավարժական ուսուցչապետի ջանքերով ուսուցիչների համար առանձին դասախօսութիւններ են պատրաստուում որոնց վերջին տարուայ ընթացքում ներկայ եղան 100 ուսուցիչներ: Ընթերցանութիւնը և վիճաբանութիւնները տեղի են ունենում ամբողջ տարին շաբաթական երկու անգամ. բացի այդ կազմակերպուած են և դասախօսութիւններ «գրութեանց միջոցով»: Թղթակիցներին ուղարկուում է զանազան հարցերի մի համառօտութիւն հարկաւոր բացատրութիւններով մանկավարժական հոգեբանութեան վերաբերեալ, որոնց պիտի պատասխան տան ընթերցողները: Հարցերի այս համառօտութիւնը միշտում է համալսարանի հոգեբանական մասը, նպատակ ունենալով ուսուցիչներին ծանօթացնել հոգեբանական հետազօտութեանց նոր խնդիրների հետ, կամենալով տեղեկանալ նաև, թէ ի՞նչպիսի հասկացողութիւն ունին նոքա մանկավարժութեան մասին, և այդպիսով անհատական մանկավարժութեան ընդհանուր մակերևոյթը բարձրացնել: Հէնց առաջին փորձնական տարին շատ մխիթարական արդիւնք տուեց. «Անհատապէս չէ, ասում է Ջ. Ռուսսէլ, որ մի քանի տարուայ ընթացքում ոչ միայն կարելի կլինի լաւ ուսումնարանների և համալսարանի մէջ ամուր կապ հաստատել, այլև ուսուցիչների և

*աշակերտների առաջնորդութիւնը կոյմնակի կերպով կանցնի Համալսարանի ձեռք»։ **

## ԿԵՂԾԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

### ԻՆՉ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ՀԱՑՈՑ ԿԵՂԾԻՆ.

*Այսպէս է այն երեք յօդուածներից մէկի վերնագիրը, որ, ինչպէս յիշում է Արարատի սոյն համարի մէջ, նուիրել է մի վերմնանացի մեր եկեղեցւոյ արդի վիճակին վերաբերեալ մի շարք խնդիրների։ Օտարները մեզանով հետաքրքրուում են, օտարներն են մեր փոխանակ հարցնում թէ ինչ կարիք ունինք մենք, եւ այդ կարիքներին դարմանն տանելու միջոցների վերայ մտածում։ Հարկաւոր չէ՞ որ զգանք նոցանից օրինակ առնենք՝ օտարներից սովորենք մեր ինչ եղածը եւ մեր կարիքներին դարմանն տանելու միջոցները։ Յիշեալ օտարականը մի շարք՝ ըստ մեծի մասին ուղիղ, խորհրդածութիւններից յետոյ գալիս է այն եզրակացութեան, թէ հայերի համար կենսական հարց է այժմ։ «Պէտք է յաջողի արդիօք, հակառակ այն մեծամեծ դժուարութեանց, որոնք կան ներկայում եւ սպասելի են մօտիկ ապագայում գործի համար անհրաժեշտ տզեւտը այժմը պատրաստել»։ Նորա կարծիքով Հայոց եկեղեցւոյ իսկական մեծ կարիքը ընդհանուր ժողովրդական կրթութեան պակասութիւնն է, իսկ դորա համար անհրաժեշտ պահանջ՝ տզեւտրական դասի կրթութեան մակերեւոյթը բարձրացնելը։ Որ այդ այդպէս է՝ անշուշտ մենք ամէնքս զգում ենք։ Մեզ պէտք է զբաղեցնէ աւելի այն հարցը, թէ ինչ դժուարութիւններ են արգելք լինում՝ այդ զգացումն ուղիղ եւ կենդանի կերպով արտայայտելու եւ գործ դարձնելու։*

*Մենք ուրիշ անգամ էլ ասել ենք, որ միակ իսկական դժուարութիւնն ու յանցանքը այն չէ, թէ Հայոց եկեղեցւոյ ներկայացուցիչները չեն աշխատում՝ կրթուած տզեւտրականների թիւը բազմացնել եւ նոցա միջոցով տզեւտը կրթութիւն զարգացնել ժողովրդի մէջ։ Ինդրի յաջող լուծման նորա մեծ ազդեցութիւն կարող են հարկաւ։ Հայ առաջնորդները կարող են աւելի մեծ չափով կրթուած քահանաներ ձեռնադրել իրենց թեմերում եւ տզետների թիւը պակասեցնել՝ քան այժմ անում են։ բայց մեծ անարդարութիւն է ամեն ինչ նոցանից կախուած համարել։ Այն հանգամանքը, որ ներկայում հայոց դպրանոցներից եւ ճեմարաններից եկած բազմաթիւ երիտասարդներ պարապ թափառում են մեծ քաղաքների փողոցներում, ամեն տեսակ հարբեցութիւն յանձն են առնում եւ պատրաստ են իրենց կրթութեան քոլորովին անհամապատասխան, նոյն իսկ ստորացուցիչ պաշտօններ կատարել, բայց քահանայ չեն լինում՝ պատահական երեւոյթ չէ, մի քանի անձանց քահանայ ձեռնադրելու արդիւնք։ Այդ երիտասարդների մեծ անհամեմատութեան կրթութիւնը տարաբաղդաբար այնպէս է մնացել, որ հոգեւորական կոչումի գրեթէ ոչ մի գրաւիչ կողմ չունի նոցա համար, եւ միայն նիւթական կարիքը կարող է ստիպել նոցա յանձն առնելու այն։ բայց արդէօք ինչպէս ապահովութիւն է ներկայացնում հայ հոգեւորականի նիւթական վիճակը։*

*Ինչ վերաբերում է կուսակրօն հոգեւորականութեան, յատկապէս ս. Էջմիածնի միաբանութեան՝ մենք նախորդ համարի մէջ ակնարկեցինք արդէն, որ շատ անհրաժեշտ են հասարակութեան մի քանի խաւերի մէջ նոցա մասին տարածուած կարծիքները։ Այնուամենայնիւ ուշ վերջին օրերս մի լրագրից պնդում էր, թէ ս. Էջմիածնի արեւդանները (ծրի բնակարան, ծրի կերակուր եւ 300 ր. ռոճիկ ամսականով) լորդերի կեանք են վարում։ Նակ մի ուրիշը մեղադրում էր Ցիխիսի քահանաներին, որ փոխանակ մի գաղթական քահանայի իրենց ծախքով թաղելու, հարուստ վաճառականի օգնութեան են դիմել։ Շոայլութիւն է համարում ուրեմն, որ ս. Էջմիածնի միաբանը (թէկուզ նա հինգ պաշտօն ունենայ եւ առաւօտից մինչեւ երեկոյ աշխատէ) ով գիտէ որ ընկերակցից ժառանգութիւն մնացած մի գորգ է փռել իր սենեակում եւ երկու տեսակ կերակուր է ուտում՝ ուրիշներին, տաք ապաստան պատերին։ մինչ գաղթականը չոր հացով պէտք է բաւականանայ։ Շոայլութիւն է համարում որ մի քանի քաղա-*

* Թարգմ. „Вѣстникъ Воспитанія“ ամսագրից։

քացի քահանաները իրենց բազմանդամ ընտանիքը մեուցանելու եւ որդւոց կրթութիւն տալու միջոց գտնում՛ են եւ այնպիսի պատառոտուտն հանդերձներով շրջող միւրացկաններ չեն, ինչպէս իրենց պաշտօնակիցներից շատ շատերը։ Իսկ հանգամանքներին աւելի մօտ ծանօթ երիտասարդին ոչ ս. Էջմիածնի ոսպաթանն է զրաւում եւ ոչ տէրտէրների կոպէկները միւրալով ծեռք ըերած ֆ—ա—ա—ոչ ապրուստը. նա իրաւ է այսօր հարքաշ կեանք է վարում՛, բայց կարող է յուսալ, որ վաղը հանգամանքները կփոխուեն, եւ ինքն էլ տարաստութեան տէր կդառնայ ու ապահով կեանք կունենայ. մինչ հոգեւորականի կեանքը միշտ նոյնն է, եւ որ իսկապէս անտանելին՝ ամէնքի աչքը վրան, իւրաքանչիւր պատառ հացը կարծես գողունի, ուրիշների ձեռքից խլած։

Սակայն հոգեւորական կոչումն անխանձելի դարձնող մի ուրիշ, գուցէ աւելի զօրեղ, պատճառ կայ՝ բարոյական պատճառ, թէ եւ սերտ կապ ունի կրկին նիւթական վիճակի հետ. այդ մեր ժողովրդի մէջ օրըստօրէ զարգացող արհամարհանքն է, հակակրութիւնը դէպի հոգեւորականութիւնը։ Մամուլի եւ գրականութեան մէջ մի քանի տասնեակ տարիների ընթացքում՛ եկեղեցւոյ դէմ իբրեւ թէ նորա այլ եւ այլ թերութիւնները բառնալու նպատակաւ, վարած անմիտ կռիւը արձագանգ է գտել ամբոխի զրեթէ բոլոր խաւերում՛ շոյելով շատ դէպքերում՛ նորա ստոր հակումները. եւ ահա այսօր մարդիկ եւ իրողութիւններ արհամարհելի եւ պախարակելի՛ են դառնում՛ մի շարք մարդոց աչքում՛ մի միայն նորա համար, որ եկեղեցական անուն են կրում։ Կրթուած, դիցուք համալսարանական, երիտասարդը՝ հոգեւորական լինելով, կկորցնէ կարծես իր վարկը, եւ աւելի այն դասակարգի մօտ, որի կողմից աւելի քաջալերութիւն եւ օգնութիւն ապասելու իրաւունք ունէր։ Նա կարծես այլ եւս իրաւունք չունի նախկին համարձակութեամբ մտնելու իր բարեկամների տները, կրթուած մարդոց շրջաններում՛ գտնուելու, հասարակական խնդիրների մէջ խառնուելու. չէ՞ որ կկասկածեն, թէ փողի համար է եկել, մի շահ ունի։—Ո՞ւր մեղաւոր է օր. քահանան, որ տնօրինէքը նորա համար մի զսպողիկ միջոց լինելով հանդերձ գոնէ տարին մի երկու անգամ՛ իր ծխականների տները մտնելու, միեւնոյն ժամանակ իր արդիւնքի գլխաւոր աղբիւրներից մէկն է։ Սակայն եկէք տեսէք, որ մեր փարթամ մեծատուններից շատերը, սովորաբար կրթուած, հասարակական դիրք ունեցող մարդիկ՝ քահանայի երես չտեսնելու համար, իրենց կոպէկները ծառային են տալիս, որ դռնից ճանապարհ դնէ տուն օրհնողներին։ Մենք զայրանում՛ ենք ի հարկէ, որ մի քահանայ այդ անպատուութիւնը տանել եւ իր երեսին շաղըտած կոպէկները վերցնել կարող է. մենք խոստովանում՛ ենք, որ քահանաներն իրենք են մեծ չափով նպաստել իրենց պատուին այդպէս ձգելուն եւ եթէ իրենց կոչման քարօրութեան վերայ կանգնած լինին, կատիպեն կրկին յարգել իրենց եւ այլապէս վարուիլ. բայց իրաւացի՞ է միթէ, որ այդպիսի վարմունքը միայն քահանաների վատութիւնից է յառաջ գալիս. մի՞թէ այն մարդիկ, որոնք դռնից են ճանապարհ դնում՛ նոցա՝ յաճախ աւելի ցած չեն թէ բարոյականութեամբ եւ թէ կրթութեամբ, շատ աւելի ցած մարդոց հետ չե՞ն նստում՛ եւ նում։

Ցիրուի սեւ երկայն վերարկուի մէջ փաթաթուած ցածութիւնն ու անբարոյականութիւնը աւելի են աչքի ընկնում՛ եւ աւելի աչք ծակում՛ բայց այդ զգալով պէտք է լաւ կշռադատել նաեւ այն հանգամանքը, թէ հոգեւորականի վերարկուին պատշաճ կեանք վարելու եւ դիրք պահպանելու համար որչափ շատ բան է պահանջուում՛ որչափ բարոյական եւ հոգեւոր կարողութիւն մանաւանդ արդի պայմաններում՛ եւ ըստ այնմ՛ ոչ մի ջանք եւ հոգացողութիւն չխնայել մարդիկ առապարէզ հրապուրելու համար, որոնք այդ պահանջներին բաւականութիւն տալու համարձակութիւն եւ ոյժ կունենան։ Մենք արդարացնել չենք կարող այն երիտասարդներին, որոնք մի որոշ չափով պատրաստութիւն ունին հոգեւոր կոչումն ընդունելու, բայց համարձակութիւն չունին մարքառմանն մէջ մտնելու այն խոչնդոտների դէմ, որ մեր հասարակական կեանքը նոցա առաջ դնում՛ է. կրկնում՛ ենք՝ տակաւն, անձնազոհ, բարոյական գործունէութեան կենդանի օրինակներով միայն կարելի է տիրող նախապա-

շարումները փարատել եւ հոգեւորականութիւնը իւր կոչման բարձրութեան վերայ դնել: Սակայն իրական կեանքը ներողներ՝ տոկուն եւ անձնազոհ մարդիկ շատ չէ ստեղծում. իսկ մենք շատ հոգեւորականների պէտք ունինք, որոնք գոնէ փոքր չափով իրենց կոչման համապատասխան լինէին, եւ այդպիսինները ասպարիզի վերայ չեն երեւայ, քանի հասարակութիւնը հալածում է նոցա իւր նախապաշարմունքով, իւր ղէպի հոգեւորականութիւնը ցոյց տուած արհամարհանքով ու հակակրութեամբ: Այո՛ հալածում է. զուցէ խիստ է այս դարձուածը, բայց ճշմարտութեան հակառակ չէ. վիտակցականն հալածանք չկայ հարկաւ. ժողովրդի մեծամասնութիւնը ցանկանում է լաւ հոգեւորականներ ունենալ. բայց նորա տրամադրութիւնն ու հակումները այնպէս չեն ուղղուած, այնպէս չէ նորա հոգեկան աշխարհի կազմակերպութիւնը, որ հոգեւորականութիւնը քաջալերութիւն գտնէ նորա կողմից:

Գերմանացի յօդուածագիրը ուղիղ է նկատում, որ հոգեւոր ասպարիզի վերայ մեզ սպասող գլխաւոր չարիքը ո՛չ թէ տգիտութիւնը, ո՛չ թէ ամեն տեսակ նախապաշարմունքներ եւ թերութիւնները իւր հետ բերող անցեալն է, այլ սխալ կրթութիւնը: Քաղաքակրթութիւնը արագ քայլերով յառաջ է գնում՝ վիտութիւն եւ նախապաշարմունքներ կամայ ակամայ տեղի կտան նորան. բայց փոխարէնը զարգանում է եւ կլանում ամեն ինչ նիւթական շահերի հետամուտ եղող մի հոգի, որին այլեւս ոչինչ չէ հետաքրքրում ինչ որ նիւթական շրջանից դուրս է. որ մի տեսակ ընազդմամբ խորշում է այն բոլորից, ինչ որ հոգեւորական անուն է կրում իւր վերայ: Ահա այդ մեծ թշնամու դէմ պէտք է կռիւ սկսել հոգեւոր զէնքով, իսկ որպէս զի հոգեւոր զէնքը գործածելու համար յօժարամիտ եւ ընդունակ անհոյակներ շատ գտնուին, հարկաւոր է նոցա առաջ ճանապարհ հարթել, հարկաւոր է նիւթապէս եւ բարոյապէս քաջալերել նոցա. եւ այդ պէտք է անի ո՛չ միայն եկեղեցական իշխանութիւնը, այլ առաւել այն հասարակութիւնը, որ ինքն իւր միջից հովիւներ է ընտրում եւ նոցա պահպանութեան համար հոգում. պէտք է անել այն բոլոր միջոցներ, որոնց մէջ ղեռ հոգեւոր նախանձախնդրութիւն մնացել է:

## ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Նորին Ս. Օծութիւն վեհափառ Հայրապետը՝ ի մեծ ուրախութիւն Մխիթարեան եւ իւր հօտի, Մայր Աթոռ ժամանեց ողջամբ ամսոյս 20-ին, ուրբաթ երեկոյ ժամը 5-ին: Երեկոեան ժամերգութիւնից յետոյ ամբողջ Մխիթարեան ընտանիքը դպեսատուրուած, շեմարանի ուսուցիչներն եւ աշակերտները, եւ ժողովրդի հոծ բազմութիւն սպասում էին վանքի արտաքին դարպասի մօտ, ուշ չտարձնելով դարնան առաւոտեր առաջին անձրեւի մանր սեղալուն, այլ լի միայն մի փափագով՝ ժամ առաջ տեսնել այնչափ պատկառելի դէմքն այն ծերունի անվեհեր Հովուապետի, որ մի անգամ եւս այսպէս արհամարհից ձեռնուայ խաղաղութիւնը եւ երկայն ճանապարհի նեղութիւնները՝ Տիրոջ ողորմութեամբն ու իւր երիտասարդական անսպառ եռանդի ուժով իւր հօտի կարիքներին հասնել կարողացաւ, եւ պիտի կարողանայ անշուշտ դեռ երկար տարիներ:—Հանդիսաւոր թափորով վեհափառ Հայրապետը դէպի Մայր Տաճար առաջնորդուեցաւ, ուր ինչման բաց սեղանի առաջ, ջերմագին մաղթանքներ վերառաքելով դէպի Լուսաւորչի գահի արժանն Պահապանը, միաբանութեան ուղեկցութեամբ վեհարան եկաւ հանգստանալու: Արդէն տարաժամ էր օրը: Յաջորդ օրն եւս փոքր ինչ ակարութիւն եւ յօդնածութիւն զգալով՝ Նորին Սրբութիւնը միայն ամենահրաժեշտ գործերով զբաղուել կարողացաւ. իսկ Մխիթարեանը, շեմարանի ուսուցչական խմբին եւ այլ այցելուների ընդունից յաջորդ կիւրակի, օրը Ս. պատարագից առաջ եւ յետոյ, օրհնից եւ պատմից մի քանի ճանապարհորդական տպաւորութիւններ, խոստանալով յառաջիկայ կիւրակիներից մէկին եկեղեցւոյ մէջ, ի լուր ժողովրդեան աւելի ընդարձակօրէն խօսել այս մասին: Ս. պատարագին վեհափառ Հայրապետը եկեղեցի էր իջել:

Ինչպես միշտ, նոյնպես և այս տարի Մայր Աթոռում հանդիսով տօնուեցաւ Սբբոց Ղևոնդեանց և Վարդանանց յիշատակը: Փետրուարի 12-ին ս. պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեց Մայր տաճարում ի յիշատակ Աւարայրի 1036 նահատակների:

Այդ օրը միաբանական սեղանին մասնակցեցին Ճեմարանի ուսուցիչները, Սինոդի ծառայողները և պատուաւոր հիւրեր: Օրուայ տօնի առթիւ սեղանատանը ճաշի ժամանակ խօսեցին Արժանապատիւ Կարապետ վարդապետը և Նորընծայ Բարեշնորհ Դարեգին աբեղան:

---

Թէ ս. Ղևոնդեանց և թէ ս. Վարդանանց տօնին Ճեմարանում գրականական երեկոյթներ տեղի ունեցան. վերջին երեկոյթին, որից յետոյ փոքրիկ աշակերտական ներկայացում ևս կար, ներկայ էր Մայր Աթոռի միաբանութիւնը: Ներկայացումներ տեղի ունեցան նաև բարեկենդանի յաջորդ օրերին, նոցա թուում երկու կատակերգութիւններ ռուսաց լեզուով. ներկայացումներն ընդհանրապէս շատ յաջող անցան և, գուարճութիւն պատճառելուց զատ, անշուշտ իւրեանց կրթիչ ազդեցութիւնն ունեցան, շնորհիւ ղեկավարող ուսուցչաց գործ դրած ջանքերին:

---

Բարեշնորհ Բարգէն աբեղայ Աղաւելեանը նշանակուած է Մայր Աթոռի դանձապահ Բարձր. Աշօտ վարդապետի փոխարէն, որ Տպարանական ժողովի նախագահութիւնը ստանձնելով՝ հրաժարուել է դանձապահութիւնից:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՏՓԽԻՍՈՒՄ

Յունուարի 19 ին Տփղիսի վանքի աւագ եկեղեցու բակում Վեհափառ Հայրապետի հրամանով չքաւորներին ու գաղթականներին բաժանուեցաւ 300 ռուբլի:

Յունուարի 25-ին, առաւօտեան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը այցելել է Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Ս. Գոլիցինին և մօտ 3 ժամ առանձին խօսակցութիւն է ունեցել իշխանի հետ:

Փետրուարի 2-ին Նորին Վեհափառութիւնը աչքի է անցրել Տփղիսի Թանգարանը, ինալով այնտեղ $1^1/_2$ ժամ: Նորին Ս. Օծութեան ուղեկցում էին Արժ. Գէորգ վ. Երիցեանը, Արժ. Կորիւն վարդապետը և Թարգման պ. Ա. Քիշմիշեանը: Պ. Ա. Երիցեանը տալիս էր Վեհափառին հարկաւոր բացատրութիւնները: Նորին Սրբութիւնը բարեհաճել է Թանգարանի վերաբերչի մօտ սուրճ ընդունել:

---

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

Փետրուարի 3-ին Վեհափառ Հայրապետին ներկայացել են Բագուից եկած պատգամաւորները և խնդրել են Նորին Սրբութեան այցելել Բագու: Վեհափառը փետրուարի 4-ին Տփղիսից գիշերուայ գնացքով հաձել է մեկնել Բագու: Նախ քան մեկնելը Ներսիսեան դպրոցի հոգաբարձուները և ուսուցիչները բազդ են ունեցել բարի—երթ մաղթելու և Նորին Սրբութեան օրհնութիւնը առնելու: Վեհ. Հայրապետին ճանապարհ դնելու համար առաջնորդարան են հաւաքուել Տփղիսի հայ հոգևորականները և պատուաւոր քաղաքացիներ: Նորին Ս. Օծութեանը երկաթուղու կայարանում դիմաւորել են Տփղիսի պ. նահանգապետը, պ. օստրիկանապետը և Բագուից եկած պատգամաւորները: Վեհափառ Հայրապետը ճանապարհ է ելել դէպի Բագու երեկոյեան մօտ ժամը 10—ին: Նորին ս Օծութեան ուղեկցել են Տփղիսի թեմ. առաջնորդ Դեր. Գէորգ արքեպիսկոպոսը, Արժ. Գէորգ Ծ. վ. Երիցեանը, Կորիւն վարդապետը և Բագուից եկած պատգամաւորները:

Գանձակի կայարանում Վեհափառ Հայրապետին դիմաւորել են գրեթէ Գանձակի բոլոր հայ հաստատութիւնը, նոյն տեղի փոխանորդ Բարձր. Բագրատ վ. Թաւաքալեանի առաջնորդութեամբ, Գանձակի քաղաքապետը իւր օգնականի հետ, զաւառապետը և ուրիշ շատերը, և արժանացել են Նորին Սրբութեան օրհնութեանը: Ճանապարհին դիմաւորել են նաև Արցախի թեմի Կոնսիստորիայի աւագ անդամ Բարձ. Տահակ վարդ. Բաղդասարեան, Շուշու թեմական դպրոցի Տեսուչ Արժ. Տիրայր վարդապետը և Շամախու Կոնսիստորիայի նախա-

անդամ Արժ. Սահակ վարդ., որոնք և միացել են շքախմբին:

Փետրուարի 5-ին Վեհափառ Հայրապետը ժամանել է Բագու. ընդունելութիւնը շատ հանդիսաւոր է եղել: Բագուի կայարանում Վեհափառ Հայրապետին դիմաւորել են քաղաքագլուխ պ. Բելեաւսկին բոլոր իրաւասու-ների հետ, առանց կրօնի և ազգութեան խտրութեան, մամուլի ներկայացուցիչները և անթիւ ժողովուրդ: Վեհափառ Հայրապետի ոգջամբ Բագու ժամանելը մի կարճ և ազդու ճառով շնորհաւորել է պ. քաղաքագլուխը, որի համար Նորին Սրբութիւնը իւր գոհունակութիւնն է յայտնել: Երկաթուղու կայարանից մինչև մայր եկեղեցին ամեն տեղ ժողովուրդը դիմաւորել է իւր Հայրապետին «կեցցէ Հայրիկ» ցնծագին աղաղակներով:

Նորին Ս. Օծութեան համար պատրաստած է եղել մարդասիրական ընկերութեան նոր շինութիւնը: Բագուում Վեհափառ Հայրապետին ներկայացել են պ. Նահանգապետը, և նորա օրհնութեանը արժանացել զանազան դասակարգի ներկայացուցիչներ: Փետրուարի 6-ին ներկայացան Շամախւոյ պատգամաւորները: Վեհափառը փոխ այցելութեան է գնացել այդ օրը պ. Նահանգապետին: Փետր. 7-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճել է դալ Սև քաղաքը. Նորել ընկերութիւնը խիստ պատուաւոր ընդունելութիւն է ցոյց տուել: Ընկերութեան կողմից Վեհափառ Հայրապետին մատուցել են մի արծաթեայ ոսկեզօծ փառահեղ ալբոմ: Անգլիական Վիշաւու ընկերութիւնը Վեհափառի բարեհաճ տրամադրութեան ներքոյ է դրել 15000ռ. և Նորին Սրբութեան շնորհաբեր այցելութեան առթիւ 5000ռ. նուիրել է Մարդասիրական ընկերութեան, և 5000 ռ. յանձնել պ. Նահանգապետին՝ յօգուտ դպրոցականների: Նորին Ս. Օծութեան Բալախանի այցելած ժամանակ հայ նաւթարդիւնաբերողները խոստացել են այդ օրուայ արդիւնքը նուէր բերել Վեհափառին, իսկ պ. Ա. Ծատուրեանը ամեն տարուայ փետրուարի 9—15-ի արդիւնքը նուիրել է Ս. Էջմիածնին և Երուսաղէմի հայոց վանքին:

Ս. Ղևոնդեանց ածի օրը ս. պատարագին Վեհափառ Հայրապետը եկեղեցի է իջել և նորին խոսքն բաղմութեան բացատրել նոյն օրուայ վսեմ յիշատակի նշանակութիւնը: Եկեղեցի է իջել Նորին Վեհափառութիւնը նաև ս. Վարդանանց ածին, երբ պատարագիչ է եղել և քարոզ խօսել Արժ. Գէորգ վ. Երիցեանը:

Նորին ս. Օծութիւնը Բագուից մեկնել է ուրբաթ ամսոյս 13-ին, երեկոյեան գնացքով, որ ճանապարհին փոթորկի հանդիպելով, միւս օրը ժամը 2-ին միայն (2 ժամ ուշ սովորականից) յանձակ է հասել: Կայարանում Վեհափառին դիմաւորել է հայ հասարակութեան սուսաւ բաղմութիւնը՝ փոխանորդ Արժ. Բագրատ վ. Թաւաքալեանի առաջնորդութեամբ, և մի խումբ քաղաքի ներկայացուցիչների՝ գլուխ ունենալով քաղագլխի պաշտօնակատարին, որ և ողջունել է Նորին Վեհափառութեան շնորհաբեր մուտքը մի համառօտ ճառով: Վեհափառը այդ սիրալիր ընդունելութեան համար իւր գոհունակութիւնը յայտնելուց և փոքր ինչ հանգստանալուց յետոյ՝ փակ կառքով ուղևորուել է քաղաք, ուր նախ հանդիսաւոր թափորով և խուռն բաղմութեան «կեցցէ» ներքո ուղեկցութեամբ ս. Յովհաննէս եկեղեցին է դիմել, տաղթել և օրհնել ժողովրդին, ապա իջևանել է պ. Նարաթեանների տանը: Քիչ յետոյ Նորին Վեհափառութիւնը ընդունել է դանձակի պ. Նահանգապետի այցելութիւնը, որին և հրաւիրել է մասնակցել Իւր համար պատրաստուած շքեղ ճաշին: Ճաշկրդ, բուն բարեկենդանի կիւրակէ օրը Վեհափառ Հայրապետը ս. պատարագին եկեղեցի է իջել և մի ազդու քարոզ խօսել, յորդորելով դանձակեցիներին չմոռանալ իրենց պարտքերը դէպի աղքատ և պանդուխտ ազգակիցները: Այնուհետև Նորին Սրբութիւնը այցելել է փոխադարձաբար պ. Նահանգապետին և ընդունել հասարակութեան կողմից պ. Ն. Ծէր Սերսխեանի տան իւր համար պատրաստած շքեղ հացկերոյթը: Մասնակցելու հրաւիրուած են եղել պ. Նահանգապետը, մի շարք պաշտօնական անձինք և պատուաւոր քաղաքացիներ:

Երկուշաբթի փետր. 16-ին Վեհափառ Հայրապետը մեկնելով դանձակից՝ գիշերից Ազատաճա կայարանում և յաջորդ օրը հասաւ Դիլիջան, ուր ընդառաջ էր գնացել Ն-

բևանի Թեմ. փոխանորդ Գեր. Ներսէս Արքեպիսկոպոսը. իսկ Գեր. Դէորդ արքեպիսկոպոսը՝ բաժանուելով այդտեղ Վեհափառի շքախմբից, վերադարձաւ Ցփխիս: 18-ին Նորին Սրբութիւնը գիշերեց Ելենովկա կայարանում, ուր դիմաւորելու էին գնացել Արժ. Դարեգին և Աշոտ վարդապետները. իսկ 19-ին հասաւ Երևան, ուր մի իջևան ընդառաջելով, Մայր Աթոռի միաբանութեան կողմից ողջունեցին Վեհափառի ողջամբ վերադարձը Գեր. Սուքիաս արքեպիսկոպոս և Գեր. Արիստակես Եպիսկոպոս: Նորին Վեհափառութեան դիմաւորելու համար Երևան էին գնացել նաև Շեմախանի կողմից Պ. Ցեսուչն ու Բարեշն. Դարեգին արեղայն: Վեհափառը մի օր միայն մնաց Երևանում, ուր ընդունեց և վերադարձրեց պ. նահանգապետի այցելութիւնը: Ի միջի այլոց այցելութեան եկաւ այստեղ և սերտիլը ընդունելութիւն գտաւ Երևանում հիւր եղող Մակուայ խանը:

## ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

*Մայր Աթոռիս մատենադարանի համար շնորհակալութեամբ ստացել ենք հետեւեալ գրքերը.*

1. Մի բոլորագիր, պատկերազարդ, մագաղաթեայ արծաթապատ աւետարան, որ Նորին Վեհափառութեան աջահամբոյր է տուել տիրուհի Հիւրիպաղ Դաւեան իւր ամուսնի Տէր Գրիգոր քահանայի յիշատակին.
2. Մի բոլորագիր, թղթեայ, արծաթապատ աւետարան, չորս աւետարանիչների պատկերներով և լուսանցքների վերայ հասարակ ծաղկեններով. Գրիչն է Յակոբ, գրուած ՌՃԴ (1655) թ.. Նուէր պ. պ. Պետրոս եւ Մարտիրոս Տէր-Մարտիրոսեաններից:
3. Մի նօտրագիր բառարան, որին կցուած է և Ներսէս Շնորհալու «Գիր խոստովանութեան» թուղթը.
4. Նարեկացու աղօթքներից մի քանիսը հասարակ գրութեամբ, քրքրուած և անկազմ.
5. Ցայսմաւուրք, բոլորագիր, թղթեայ. բոլորովին քրքրուած սկզբից և վերջից թերի.
6. Փոքրագիր աղօթամատոյց, բոլորագիր, մագաղաթեայ, մի պատկերով և ծաղկեններով զարդարուած. Գրուած Կաֆայում Նիկողոս գրչի ձեռքով, ՈՂ. (1241) թ. Նուէր Շնորհունակ դպիր Պաղտաս եւ Տ. Միխիթար վարդապետ Տ. Մկրտչեանցից:
7. Քերականութիւն և տրամաբանութիւն Սիմէօն վարդապետի Ջուղայեցւոյ, նօտրագիր, թըղթեայ, վերջը թերի. Նուէր Շնորհ. դպիր Գալուստ Տ. Մկրտչեանցից.
8. Օրհնք Հայոց—Դատաստանական սահմանադրութեան, բարեպաշտ կայսերն Յուստինիանոսի. ի Նախիջևան Տօն գետոյ, 1863. (Ցարմարեցրած Աստրախանի Հայոց ինքնավարութեան գործադրութեան համար, ինչպէս երևում է յառաջաբանից). Նուէր պ. Երուանդ Շահազիզ—Կամսարականից:

### ՏՊԱՒՈՐԱԾ ԳՐՔԵՐ.

*Վեհափառ Հայրապետի մատենադարանից ստացել ենք.*

1 Die Bibel in Bildern, von Julius Schnorr von Carolsfeld. Leipzig.

2. The Family national Bible, by the Rev. Matthew Henry.

3. Братская Помощь пострадавшимъ въ Турціи Армянамъ, Москва, 1887. *փառակազմ, երկու հատորում ամփոփած. Նուէր Վեհափառ Հայրապետին պ. Գրիգոր Զանիշեանից.*

4. Պ. Յովհաննէ Զարպպաշեանից—Ցուցակ Հայերէն Ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա. Հ. Յ. Տաշեանի. Վիեննա. 1895.

5. Պերճ Պռօշեան. Կռուածաղիկ. Վէպ. Երկր. տպագրութիւն. Տփխիս. 1897., *հեղինակից:* Հասցէ՝ Въ Монастырскую Библіотеку Эчміадзинъ.

Մատենադարան՝

ԳԱՐԵԳԻՆ ԱՐԵՂԱՅ.

ՏԱՃԿԱՀԱՅՔ·

# ՎԵՀԱՓԱՌ և ՎԵՀԱՁՆՈՐՀ ՍՐԲՈՅ ՕԾՈՒԹԵԱՆ

## ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ՀՈԳԵԽՈՐԻ

## ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԿՐՏՉԻ,

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԳԱՀԱԿԱԼԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ,

## ԱՌԱՔԵԼԱՀԱՄՈՂ ՅԱՋՈՐԴԻ

ԹԱԴԷՈՍԻ և ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ և ԳՐԻԳՈՐԻ ԵՐԱՆԵԼԵԱՅ,

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

*ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ և ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ,*

ՀԱՆՈՒԽՑ ՀԱՅ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԵԱՅ ՀՕՏԱՊԵՏԻ,

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ԿԱԹՈՒԼԻԿՈՍԻ.

ՀՈԳԻՈՎՆ ՀԱՅՐ, ՍՐՏԻՆ ՀԱՅՐԻԿ, ԿՈՉՄԱՄԲՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ,

*ՅԱՒՈՒՐ ՏՕՆԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ,*

Ի ՅԻՇԱՏԱԿԻ ԾՆՆԴԵԱՆ ՕՐՀՆԵԼ ԱՄԼՈՐԴԻՈՅՆ՝

*ԱՌ ԲԱՐՁՐԵԱԼՆ ԷՆ ՏԻՐՆ ԱՄԵՆԻՆ*

*Իղձ անկեղծաւոր մաղթանաց ի վեր առաքի,*
*զի ընդ Մկրտչին ի լուացումն ցաւոցն փարատման*
*ընդ Կարապետին ի յառաջընթացութիւն բարեաց օրհնութեան*
*ընդ Մարգարէին յածումն յուսոյ ակնկալութեան*
*ընդ Առաքելին ի քարոզչութիւն Խանից սրբութեան*
*ընդ Մարտիրոսին յերկայնմտութիւն աստեաց փորձութեան*
*ընդ Աւետիսին ի լուր խոստացեալ իրաց խնդութեան*
*և ընդ Յովհաննու ի տես Փրկողին յերկնից առաքման*
*ընդ եօթնանուն փառաւորելոյն անուանակիրն Նորին*
*ամաց յոլովման անպարփակ շրջանաւ*
*կեցեալ երանի*
*իւրոցն միջի երջանիկ հովանի*
*Նկեղեցւոյ և ազգի*
*բազմաշխատ կենաց և բազմարդիւն ձրիւք*
*պետ և դէտ:*

*Ներկայ վերտառութիւնը առարկուած է մեզ Կ. Պոլսից, իբրև մի արձագանգ այն ջերմագին իղձերի և բարեմաղթութիւնների, որ վերհափառ Հայրապետի հեռաւոր զաւակները Նորին Սրբութեան անուանակոչութեան առթիւ արտայայտել կցանկանային: Առաքողի ներքագրածից աւելի ուշ հասաւ այն մեր ձեռքը, ուստի ստիպուած եղանք այս համարի մէջ յառաջ բերել:*

Մինչ մայրաքաղաքի տարբեր գաւառներէն պատկանող քրիստոնեաները սահմանադրական ինդիրների վերաքննութեամբ են զբաղուած, հեռաւոր հայկական նահանգների բոլոր գաւառներից սոսկ ղարհուրելի ձայներ են լսւում. մինչ սուլթանը առատաբաշխ խոստումներով կեանքի, գոյքի ապահովութիւն և պատակների մարդկային իրաւանց պաշտպանութիւն է քարոզում իւր մայրաքաղաքի մէջ, գաւառական քաղաքներում Թշուառ հայ գեղջուկին ղրկում են մի կտոր հացից և վռնտում հայրենի գիւղերից, որոնք արդէն բուերի և վայրի գազանների բնակարան են դարձած։

— Կ. Պոլսի Հայոց լրագիրների ասելով՝ սուլթանը հայ կաթոլիկներին հրամայել է գործադրել վաղուց նոցա խոստացուած սահմանադրութիւնը. ասում են որ արդէն երեսփոխանական ժողովը կազմակերպուել է 56 անձինքներից, որոնցից 8-ը հոգևորական, 48-ը աշխարհական են։ Աշխարհականներից մկայն 14-ը գաւառացի են, իսկ մնացեալները մայրաքաղաքից։ Ընտրուածների մէջ կան հայ կաթոլիկ համայնքի յայտնի ներկայացուցիչներ, ինչպէս օր. Սագդ, որ այժմ ֆինանսների մինիստր է, Զարեհ Շիշմանեան և այլք։

—Ձմեռնային սաստիկ ցրտերի ժամանակ կառավարութիւնը Վանից և այլ քաղաքներից դուրս վանեց բազմաթիւ հայ գաղթականների, իրենց գիւղերն ուղարկելու պատրուակով։ Թշուառ աղքատների թիւն այնքան շատ է, որ եղած նպաստները նոյն իսկ անհրաժեշտ պիտոյքներին բաւականութիւն չեն տալիս։

— Վանից, Կարինից, Բաղէշից, Մարաշից և այլ տեղերից Կ. Պոլսոյ թերթերին ուղղուած տեղեկութիւնները ցոյց են տալիս, թէ գոնէ այս ձմեռ այդ խեղճերի կեանքը պաշտպանելու համար հարկաւոր էր առնուազն 1,000,000 ֆրանք։ Արդեօք ինչպէ՞ս անցրին նորա գաժան ձմեռը, առանց այդպիսի պաշտպանութեան։

—Բաղէշից գրում են, որ տեղական կառավարութիւնը ոչ մի աղգու միջոցի չի դիմում տների կողոպտման և անասունների յափշտակութեան առաջն առնելու համար։

— Յունիս և Յուլիս ամիսներում Սասունի վիճակը զոհացուցիչ էր, իսկ դրանից յետոյ քրդերը սկսեցին իրենց սովորական աւարառութիւնները և բոլոր հունձն այրեցին։

— Միմիայն Մշոյ դաշտում հայոց նպաստամատոյց յանձնաժողովի հաշուով ձմեռս 4,000 հոգի օրական հացի կարօտ են եղել. Տիգրանակերտում և շրջակայքում 12,000, այնպէս որ տեղական աղքատախնամ յանձնաժողովը խնդրում է 55,000 ֆր. իւր տրամադրութեան տակ դնել։ Կարինում ևս հունձերը բաւարար չեն։

— Երզնկայի եպիսկոպոսարանը, որ ահա բոլորում է իւր գոյութեան հնգամեակը, նիւթական վերջին ճգնաժամին հասած՝ փակուելու էր անշուշտ, եթէ առաջնորդական տեղապահ Դանիէլ վարդ. Յակոբեան օրինակելի նախանձախնդրութիւն չ'ցոյց տար ի պաշտպանութիւն դպրոցի։ Բարձր. Հայրը ժողովելով քաղաքական ժողովի և ս. Նշան եկեղեցու թաղական խորհուրդի անդամներին, և ուրիշ ձեռնհաս անձանց՝ նոցա խորհրդակցութեամբ կազմում է մի հոգաբարձութիւն, որի նպատակն է ջքաւոր աշակերտաց համար որդեգրողներ գտնել, 2 ոսկի տարեկան թոշակով։ Հայր սուրբը ներկայ եղողներին օրինակ տալու համար յանձն է առնում 2 որդեգրի փող լինքը վճարել։ Նորակազմ հոգաբարձութիւնը թաղային վարժարանը միացնում է եղնիկեան դպրոցի հետ՝ այնպէս որ աշակերտների թիւը այժմ հասնում է 240-ի, որոնցից 160-ը թոշակաւոր են և 18-ը ձրի։

—Կ. Պոլսոյ Սրբազան Պատրիարքի ձգտումները Հայ ժողովուրդի շահերի և Բարձրագոյն դրան պահանջների մէջ ներդաշնակութիւն յառաջացնելու նկատմամբ՝ ամէն գովասանքի արժանի են։ Եթէ ներկայ յարաբերութիւնների արդիւնքը գոհացուցիչ չէ ըստ ամենայնի՝ անիրաւացի կլինէր դրա պատասխանատուութիւնը Պատրիարքի վերայ ձգել, նա աշխատում է խաղաղ ճանապարհով ստանալ այն, ինչ որ Հայերն իբրև հաւատարիմ պատակներ, պահանջելու իրաւունք ունին։ Ցամենայն դէպս, առանց ի նկատի առնելու այն ծանր դրութիւնը, որի մէջ նա գտնուում է՝ կասկածի ներքոյ պէտք է նոր բարեկարգութիւնը կարօտելոց համար նորան ուղարկուած փողերի նկատմամբ, ինչպէս անում են ոմանք վերջերս, բարոյական նրբազգացութեան ծայրայեղ պահասութիւն միայն կարող է համարուել։

— Սուլթանի ծննդեան տօնի օրը Ս. Պատրիարքը Մայր եկեղեցի իջաւ, շրջապատուած եպիսկոպոսներով և վարդապետներով. սովորական մաղթանքից յետոյ «Ցուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ» ընթերցուով մի քարոզ խօսեց, իրեն յատուկ պերճախօսութեամբ, և ներկայացնելով նոյն օրը սուլթանին, մի ուղերձով յիշեցրեց Հայոց գլխաւոր ծառայութիւնները Օսմանեան գահին և մի շարք առաջարկներ արաւ, իւր ժողովրդի վիճակը բարւոքելու համար։ Սուլթանը գոհ մնաց Ն. Բ. Սրբազնութիւնից և խոստացաւ իւր շնորհներն անպակաս անել Հայ հպատակների վրայից։

— Եւրոպական թերթերի ասելով Սուլթանը ստորագրել է մի Իրադէ, որով բաւականութիւն է տալիս Ս. Պատրիարքի առաջարկած 16 կէտերից հնգին. 1) Երթևեկութեան ազատութիւն Տաճկական կայսրութեան սահմաններում. 2) Երկու տարով ղինուորական հարկերից ազատութիւն. 3) Թոյլատրել Պատրիարքին հոգալ արտաքսուած Հայերի մասին. 4) Հանգանակութիւն սկսել յօգուտ Հայ կարօտեալների. 5) Նոր դպրոցներ բանալ։ Առաջին 4 կէտերը գլխաւորներն էին։ Այս իրադէն Հայերի կողմից յաջողութեան մեծ նշան է համարուում։

# ՊԱՐՍԿԱՀԱՅՔ.

## ՉԱՒԱՐՉԱՆ—ԱՐՏԱՋ ԳԱՒԱՌԻ ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԸ.

(Շարունակութիւն.)*

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՀԻՆ ՏԱՃԱՐԻ.

1-« Ա՛յս տաճար լուսակիր եւ երկնանման առ-
կայացեալ Հաստատ
2-« ագոյն հիմամբք ի վերայ աստուածաբնակ
շիրմի սուրբ առաքելոյս
3-« Թադէոսի որ ըստ բազմահնչակ յանցանաց
մեր զկործանուժն Հառ
4-« ի շարժէ. Իսկ ես նուաստ սպասաւոր մին
Ջաքարիայ ևս. որդի պ
5-« արոն Մանվէլայ կարողութեամբն Աստու-
ծոյ սկիզբն արարի կրկին նորոգ-
6-« ութեան առաւել քան զառաջինն ի ժամա-
նակի սատ
7-« իկ նեղութեան եւ հալածանաց Քրիստոնէից
որ եւ բազ
8-« ում եկեղեցիք քակտին վասն որոյ արձա-
նագրեցաք զ
9-« յիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ
առաջի
10-« մեծին Աստուծոյ եւ անարիւն զննման գա-
ոիւնն Աստուծոյ Հանգ
11-« երձ ծնողաց եւ զարմից եւ զաղօրդն մեր
աղբ
12-« աւր որպէս զհիր Տիրացուն այլ եւ զՀարազա
13-« տ եղբարս մեր զՊետրոս եւ զԱարպիս որք
ըստ կարու
14-« թեան նպաստաւորք եղեն ընչիւք կատա-
րումն
15-« Թվ. ՉՀԸ.» (=1329)։

Տեղեկութիւնք. Արձանագրութիւնս դամնուում է հիւսիսային որմի վերայ, լուսամուտի տակ. բազկացած է տասն եւ հինգ տողից՝ խոշոր երկաթագիր, տեղ տեղ փակագիր, կրճատ պատուագիր. Բռնած տարածութիւնն է՝ 2 արշ. 13 վերշ.×2 արշ. 8 վերշ. Տողերի երկարութիւնը՝ 2 արշ. 13 վերշ. տառեր 5×10 սմ.

« Ընորհիւն Աստուծոյ եւ կարողութեամբ նորին
« կանգնեցաւ գեղեցկայարմար եւ գ
« եղեցկափայլ խաչակալս ի յաջորդու
« թեան ժամանակի Գէորգ վարդապետին արդ
որք նուն
« որք հանգիպիք տուք զողորմին եղև
« կատար շինար նորին ի մերս թուոջ
« ՌՄԽԲ ին (=1793)։

Տեղեկութիւնք. դամնուում է սեղանի քարեայ խաչկալի վերայ, խորհրդանոցի մուտքի ճակատին. խաչկալի պատուճաղել քանդակները սքանչելի են. Սպիտակ խաս մարմարիոնի նման քարից շինուած կաթուղիկէն երկու մուտք ունի, կողքերի սիւնակները քանդակներով զարդարուն. Բեմ—քարի գլխի կաթողիկէն փլած է եւ միայն նեցուկ սիւներն են կանգուն։

Սեղանի խաչկալի մուտքի դռնները ներկայացնում են՝ կոտւոի վերայ նկարած, աջ կողմում՝ Սուրբ Թադէոս Առաքեալ կենդանագիրը. մի երկտասարդ. Գեղարդը ձախ եւ գաշոյնը աջ ձեռին. գաստառակն էլ մատների ծայրով բռնած. իսկ ձախ կողմում՝ Սուրբ Բարդուղիմէոս՝ ալէխառն Աստուածամօր պատկերը ձեռքին.

Գրութիւնն է՝

Սուրբ Թադեոսի «Յիշատակ է Սիմէոնի արքեպիսկո-
պոսի եւ յաջորդ.

Սուրբ Բարդուղիմէոսի «Սրբոյ տաճարիս սրբազան Ա-
ռաքելոյն Թադէոսի.

Թվ. ՌՄԿԸ. (=1816)։

Պատկերի քարձրութիւնը՝ 1 սահժեղն 2 վերշ. լայնութիւնը 1 արշ. 5 վերշ.

Բեմ—քարի վերայի պատկերը ներկայացնում է Աստուածածինը ցիստուս գրկած, թագաւորական մի զոյգ հրեշտակներ թագը բռնած գլխին, թագի վերան էլ Հօր Աստուծոյ պատկերը. Աստուածածինն աթոռի վերայ նստած է՝ աջակողմը Ս. Թադէոս. Գեղարդը եւ Գաստառակը ձեռին, իսկ ձախ կողմում Ս. Բարդուղիմէոսը՝ Աստուածամօր պատկերը բռնած եւ կանդնած. բաւականին մաքուր եւ գեղեցիկ, եւ իր ժամանակի համար գեղարուեստական մի գործ կարելի է համարել այս պատկերը։

Մեծութիւնը՝ բարձրութեան 2 արշ. 6 վերշ. լայնութեան 1 արշ. 13 վերշ.

Պատկերի վերայի գրութիւնն է.

« Թուին Փրկչի ՌՊԺԱ (1811) և առաջնոր-
« դութեամբ Սուրբ ուխտիս տեառն Սիմէոն արքե-
« պիսկոպոսին տէր Բրգն. Խչ. Տր. Նկէ. Ա՛յս
« սուրբ պատկերս ի վանս սրբոյ առաքելոյն Թա-
« դէոսի մաքուր շիրմի Կարնեցի Քօսեանց մահ-
« տեսի Յարութիւնէ յիշատակ վասն իւր վասն
« կենակցոյն մահտեսի Խանումին և որդւոյն մահ-
« տեսի Յակոբին մահտեսի Սիմէոնին և տիրացու
« Գէորգին և այլ ամենայն կենդան. »

Նօտրադիր եւ բոլորը մի տողի մէջ։

Սեղանում պահուած խաչվառը, ինչպէս արձանագրութիւնից երեւում է. վանքի նոր տաճարի շինող ոմն Երջանկայիշատակ Սիմէոն արքեպիսկոպոսն է նկարել իւր ձեռքով եւ յիշատակել տանս։

Խաչվառի առաջին երեսի գիրն է՝

« Ի Նորոգման սրբոյ Աթոռոյս Նկարեցաւ խաչ-
« վառս ձեռամբ Սիմէոն Սրբազան արքեպիսկոպոսի
« ետ յիշատակ նորակերտ սրբոյ տաճարիս »։

Երկրորդ երեսի գրութիւնը.

« Յիշատակ է Սրբազան Առաքելոյն Թադէոսի
« Աթոռոյն առաջնորդ Սիմէոն Արքեպիսկոպոսիս
ծնողացս, քերցս ... եղծ...

Մեծութիւն խաչվառս 1 արշ. 8 վերշ.× 1 արշ. 2 վ.

* Տես Արարատ 1898 յունուար:—Նոյն վաթիի մի հատուած ներկայիր յատաջ է բերել պրոֆեսոր Ֆիշեր Der Christliche Orient բերբի 1897թ. նոյեմբեր հ.-ում: Խմբ.

Հարաւային խորանի միջի մարմարեայ տապանաքարերի արձանագրութիւնը.

Առաջին՝

« Այս է տապան տեառն մեծի
« Զաքարիաս վարդապետի
« Սուրբ Աթոռոյս սա բա.....րի
« Որ յաջորդեց Թ տարի
« Էր սա երկրաւ Վաւհանեցի
« Հայր էր սա անարժանիս
ՌՃՂԲ. (=1743),

երկրորդ՝

« Տապանս սայ է եղկելի
« Մինաս անուն վարդապետի
« Որ յաջորդեց տանս մեծի
« Ներզըզաղմանց ժամանակի
« Ծառայ էր սա տեառն մեծի
« Զաքարիաս վարդապետի:
ՌՄ: (=1751),

Մարմարիոնի մեծութիւնն է՝ երկարութիւն. 1 արշ. 9 վերշ. լայնութիւն 11 վերշ. հաստ. 3 վերշ.

Հին կաթուղիկէի հիւսիս արեւմտեան կամարասեան որմի ծեփի վրայի գրութիւնը.

Ես Վանեցի
Ջրպաշ Թու
մենց լուսա
հոգի մահտեսի
Գասպարի որդի
Փիրիջանս եկի, »

Կից սորան.

« Ես Վանեցի Ջրպաշ Թումենց
լուսահոգի մահտեսի Գաս
պարի որդի մահտեսի
Փիրիջանս եկի սուրբ
առաքելոյդ Թաթէոսի
գերեզմանն համրու
րեցի ով որ հանդ
պի զայս գիրս կարդայ
հայր մեղայիւ յիշեսցէ, »

Կից սորան.

« Ես Վանեցի Գասպարի
որդի Ախիճանս
յեկի սուրբ ուխտս
տվի. ՌՄԻՆ ապրելի
ԻԸ. 1255. » (=1776),

Նոյն որմի վերայ վերոյիշեալ գրութեանց տակ բոլորագրով.

« Ես Արապկերցի մեղա
պարտ գրիչ Ղուկաս
գըպիրըս գրեցի հայ
թվին ՌՄԼԴ ին (=1785):

Կից սորան.

« Ի ուխտ եւ յերկրպա՛
գութիւն սրբոյ աթոռ
ոյս եկի ես Վանցի
մահտեսի, Գասպարի որդի
Մահտեսի Փիրիջանս
Ի ՌՄԾԵ 1255
մայիս ԺԵ, » (=1806),

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՐ ՏԱՃԱՐԻ.

« Ցիշատակէ սունս վերանրգիչ սրբոյ
Աթոռոյս առաջնորդ Սիմէօն
Արքեպիսկոպոսի Էջմիածնեցոյ
եւ ծնողաց նորին Մու
րատին եւ Գայեանին.
Թվին ՌՄԾԹ » (=1810),

Տիգրկոնքին. Արձանագրութիւնս քանդակուած է հիւսիս-արեւելք. որմեն կից սիւնի արեւմտեան ճակատին, սպիտակ քարի վերայ, եւ հազիւրաճ կապոյտ քարերի մէջ. Մեծութիւն 8×12 վերշ. 6 տողից, կէս երկաթագիր եւ պատուագիր.

« Ցիշատակէ սունս սրբոյ
Աթոռոյս առաջնորդ Սիմէօն
Արքեպիսկոպոսի Էջմիածնեցոյ
եղբօր Խաչատրին եւ քեռն
.....րին եւ ամենայն զարմից
Թվ. ՌՄԾԹ-ին (=1810),

Հար. արեւել. որմասեան արեւելեան ճակատին. Մեծութիւնը 13×9 վերշ. 6 տող.

« Այլ և յիշատակ է Բայազեդցի մահ-
տեսի Ափրիկի որդի
մահտեսի Բարսեղին եւ Պետրոսինն եւ
ծնողացն Շահզատին մահտեսի Ալէքի
որդի Աւետիսին եւ մահտեսի Բարսեղի
կողակցի Մարթային.
ՌՄԿԳ. (=1814),

Աւազանի զարդերի ներքեւ. տողի երկարութիւնն է 1 արշ. 2 վերշ. գրութիւնը 4 տողից.

« Ցիշատակ է սուրբ աւազանս Բայազեդցի
մահտեսի Գօրօի
որդի մահտեսի Մ՚ընացականին ՌՄԿԴ-ին
յուլիս Ե. (=1815),

Աւազանի քարի վերայ. երկու տող. 1 արշ. 5 վերշ. երկարութեամբ.

« Սուրբ խաչս բա
րեխօս Էլօին
եւ կնոջն Շամա
մին եւ որդուն
Պետրոսին » :

Աւազանից բարձր. որմի մէջ՝ դէպի արեւելք. իսկ դէպի արեւմուտք՝

« Ցիշատակ է աւազանս Սեպու
կեցի Հանգուցեալ մահտեսի
Գերոմի որդիին մահտեսի » :
Յիսուս Քրիստոս.

«Ղորղանէցի Դաւիթ
կաթուղիկոսի եղբայր Մէլի
քեան Բարսեղին Երէվան
ցո. եւ կողակցոյն Յիւրոյ եւ
«որդոցն Զօհրաբին Ռուստամ
«ին եւ Մկռտըչին եւ տըստերա
«ցն եւ հանգուցեալ Ծըղող
«ացն եւ համայն կենդանեաց
եւ նընջեցելոցն ամէն»
Թվին ՌՄԿԲ. (=1813).

Տեղեկութիւն. գտնուում է Հիւս. արեւել. սեան արեւմտեան երեսին. քանդակազարդ. մատուցարանաձեւ. եղերքը նկարէն. քանդակները ներկած կարմիր գոյնով. մեծութիւն. 1 արշ. 2 վերշ.×1 արշ. անկիւններում գրած է.

Տր. Ած. Ցս. Քս.

«Ցիշատակ է Սիւնս մէլիք Ներ
«սեսի որդի մէլիք Նավասարդ մէլիք
«Մօսէս մէլիք Բալասան մէլիք Սահ
»փան եւ մէլիք Աղաջան երեքին
«եղբարք նորոգեցաք վասն հոգոց
«նախնեաց մերոց արծերու
«նի Սեւնէքերիմ Դաւիթ Բե
«կեան. Թվին ՌԿին ?(=1611)? (թերևս ՌՄԿ=1811).

Տեղեկութիւն. գտնուում է հար. արեւել. սեան արեւմտեան երեսին մեծութիւնն է 9×11 վերշ. 8 տողից գրուածքեան.

Սոյն սեան տակի պատուանդանի կոտրած հանգըստարանի խոշոր երկաթագիր գիրն է.

«Կ. դամբար. անանուն կոչի»

Ինչպէս երեւումէ խորանի մարմարեայ եւ սեան տակերի շրիմի քարերից, հանդուցեալ Սիմէօն արքեպիսկոպոսը բաւականին տապանաքարեր է անհետացրել. նոր տաճարի շինութեան ժամանակ որմոն հիմերի եւ սեան տակերի շինութեանց մէջ.

«Հոգածութեամբ յառաջնորդ Սիմէօն արքեպիսկոպոսի
«եւ պատրիարգութեան սուրբ Սաղիմայ Թէոդորոս եպիսկոպոսին
«յիշատակ է Սիւնս սուրբ Սաղիմայ իմգագչի
«եւ նվիրակ տեառն Ստեփան վրդպին եւ ծնո-
«ղացն մահտեսի Մելքոնին Հռիփսիմին
»եւ եղբրցն մահտեսի Սարգսին եւ տիրացու
«Ցարութիւնին եւ յակոբին եւ ամեն
«այն զարմից նորին թվ. ՌՄԿԳ (=1815)»

Տեղեկութիւն. գտնուում է հիւսիս-արեւմտեան սեան արեւմտեան ճակատին. մեծութիւնը 9 ×15 վերշ. 8 տող.

Սոյն արձանագրութիւնը ցարդ փորագրած չէ այլ միայն մատիտով գրած է փորագրութեան համար.

«Ոգածութեամբ յաջորդ Սի
«մէօն բաղմաշխատ եպիսկոպոսին
«յիշատակ է սիւնս Մարղեցի
«տէր Խաչատուրին եւ կողկ

«ցուն. նա եւ Ղարաքահեցի
«տէր Պետրոսին եւ կողկցուն նա
«եւ Զլաղառ Պարոն Աստուածատուր
«ին եւ կողակցուն ՌՄ.....ղծ.

Տեղեկութիւն. գտնուում է հար. արեւմտեան սեան արեւմտեան երեսին մեծութիւն 10½×9⅓ վերշ. 8 տող գրուածքեամբ.

Սոյն սեան պատուանդանի տապանաքարի գիրը.

«Թվ. 2Խ[illegible] այս է հանգիստ ....

Մնացեալը կտրած է եւ սեան տակ մնացած.

(Շարունակելի)

Յ. վ.

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

### ՔԸՂՈՒՀԱԾՔ Ի ԿԱՆԴՈՒԿԱՑ ՎԵՀՃԱՓԱՌ ՀՈՅՐԱՊԵՏԻ.

*Կոնդակ յանուն Տ. Աշոտ վարդապետի Շահեանի, որով կարգի նախագահ Տպարանական Ժողովոյ Մ. Աթոռոյ, Թ. 14։*

*—Ցանուն Սինօդի Ս. Էջմիածնի ինոյն միտս, Թ. 15։*

*—Ցանուն Յովհաննէս քահանայի Մարտիրոսեանց, միաբանի Քամոյեանց եկեղեցւոյ, որով շնորհի նմա կամիլաւկա, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Թեմականին Տփղեաց, Թ. 22։*

*—Ցանուն Գրիգորիս քահանայի Մատինեանց, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան նորին Թեմականի. Թ. 23։*

*—Ցանուն Գէորգ քահանայի Մկրտուճեան, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Թեմականի վիճ. Աստրախանի, Թ. 25։*

*—Ցանուն կարապետ քահանայի Վլասեան, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան նորին Թեմականի։*

*—Ցանուն վիճ. Կոնսիստորիայի Շամախւոյ, որով կարգի Տ. Սահակ վարդապետեան Տ. Մինաչէլեան անդամ նոյն Կոնսիստորիայի, Թ. 73։*

*—Ցանուն Ամեն. պատրիարքին Կ. Պոլսոյ Տ. Մաղաքիայ Արքեպիսկոպոսի, որով լուծեալ ճանաչի պատկ Նինայի Պուպլի Զմիւռնիացւոյ ընդ այլ իւր՝ բժիշկ Մանուկ Արա-*

մեան վան ամբարիշտ բարուց վերջնոյն, թ. 97։

—Յանուն Հոգաբարձութեան Ներսիսեան Հոգևոր դպրանոցի Տփղեաց, որով թույլատրի գնել զառնն Շատինովի և կառուցանել նոր շինութիւնս ի վերայ դպրոցապատկան գետնոյն, թ. 101։

—Օրհնութեան յանուն Հոգաբարձութեան Ս. Փրկիչ Հիւանդանոցին Կ. Պոլսոյ, թ. 115։

—Յանուն Գործակալին Քութայիսու Տ. Դաւիթ ա. քահանայի Նալչեան, վասն պահանջելոյ ի կառավարատաց Ազահվերտիի Ալահվերտեանց գնտակեալն յանուն Վեհ. Հայրապետի գումար 500 րուբլւոյ, թ. 150։

—Յանուն Սարգիս քահանայի Շիրյեան Տփղիս քաղաքի, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Թեմակալին Տփղեաց, թ. 151։

—Յանուն Մարտիրոս քահանայի Ամիրխանեան, որով շնորհի նմա պատիւ ա. քահանայութեան, ըստ միջնորդութեան նորին Թեմակալի, թ. 152։

—Յանուն Գէորգ քահանայի Մոյինեան, միաբանի Ս. Աստուածածնին եկեղեցւոյ Բեթ. ղեհէմի Տփղեաց, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան նորին Թեմակալի, թ. 153։

—Յանուն Սիմէոն քահանայի Ջիվկեան, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ կամիլաւկա, ըստ միջնորդութեան նորին Թեմակալի. թ. 154։

—Յանուն Ժողովրդեան Բաթում քաղաքի, որով կարգին ի քահանայութիւն նոցա Տ. Մեսրովբ Մելեան և Տ. Կարապետ Մալխասեան, թ. 161։

—Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Եկատերինայ Նագիրեանց, վասն նուիրելոյ նորա մի հազար (1000) րուբլի ի տարամատուցութիւն Վեհ. Հայրապետի. թ. 162։

—Յանուն Շմաւոն քահանայի Տ. Բարսեղեան Տփղեաց, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Թեմակալին Տփղեաց. թ. 167։

## ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

21 յունուար. Երևանի Կոնսիստորիան 1896 թ. Հ. 4086 գրութեամբ յայտնում է Սինօդին, որ Տաշտան գիւղի Յովհաննէս ք. Տէր-Յովհաննիսեան 1891—1892 թ. կատարել է երիք չհաս պսակ, որ քննութեամբ ապացուցած է։ Սինօդը վճռեց պսակները անվաւեր ճանաչել, իսկ պսակադիր Յովհաննէս քահանայ Տէր—Յովհաննիսեանին ենթարկել գտոի ըստ զօրութեան պատժական օրինաց 1575 յօդ-ի։

21 յուն. Երևանի Կոնսիստորիան թ. 2059 յայտարարութեամբ միջնորդում է լուծել Կարսեցի Մկրտիչ Յարութիւնեանի և նորա կին Գայիանեի պսակը, որովհետև նոքա վաղուց իրարից բաժանուել են և ապրում են ապօրինի կենակցութեամբ։ Սինօդը վճռեց մերժել Կոնսիստորիայի միջնորդութիւնը և Մկրտիչ Յարութիւնեանին ու իւր կին Գայիանէ Յարութիւնեանին ապօրինի կենակցութեան համար ենթարկել միամեայ եկեղեցական ապաշխարանքի՝ նոցա ամուսնական կապը անխզելի թողնելով, մինչև ամուսիններից մէկի մահը։

23 յուն. Գանձակի նահանգի Ելենենդորֆի աւանի հայ գաղութի յանուն Վեհափառ Հայրապետի տուած խնդրի համեմատ Սինօդը վճռեց հրամայել Գանձակի հոգևոր կառավարութեանը՝ օրինական ճանապարհով պայման կապել Ելենենդորֆի հայ գաղութի հետ, տալով նոցա ս. Յովհաննէս եկեղեցու «Արարչու» կալուածքից երեսուն դեսեատին հող, 25 տարի ժամանակաւ՝ տարին 300 ռ. վարձով։ Պայմանը պէտք է լինի, որ Ելենենդորֆի հայերը բնակութիւն հաստատեն այդ հողի վերայ և 25 տարին լրանալուց յետոյ, եթէ կամենան նորից 25 տարի ժամանակով վարձել այդ կտոր հողն, աւելացնեն 100 ռուբլի նախկին 300 ռ. վերայ։

26 յուն. Ս. Սինօդը Ռուսական «Պարմիր խաչի» ընկերութեան թ. 4896 գրութեան համաձայն վճռել էր ս. Յարութեան տօնին հայոց եկեղեցիներում զանձանակ ժողովել ի նպաստ նոյն ընկերութեան։ Այժմ տեսնելով Շամախւոյ և Բեսսարաբիոյ թեմերում

ժողոված 229 ռ. 94 կ., վճռեց պատուիրել գանձապահին՝ յիշեալ գումարը գրել աւանդադրամոյ տումարի մէջ և ներկայացնել Աստուածպաշտութեան վարչութեանը. իսկ վրացական և Իմերէթի, Երևանայ, Ղարաբաղի Կոնսիստորիաներին պատուիրել փութով ներկայացնել Սինոդին «Կարմիր խաչի» ընկերութեան համար ժողոված գանձանակագրամը:

26 յուն. Սինոդը վճռեց աւանդադրամոյ տումարի մէջ մուծանել Ալաշկերտի գաղթականների անունով հանգանակած փողի մնացորդը՝ այն է 10,250 ռ. ոսկի փողով, որ հաւասար է 15,375 թղթադրամի:

28 յուն. Սինոդը վճռեց պատուիրել Շամախու Կոնսիստորիային մահմեդական Մահմեդ Մահարրամ օղլուն իւր խնդրի համաձայն ազատութեամբ ընդունել Հայոց եկեղեցու ծոցը:

28 յուն. Աստուածածնոյ գիւղի բնակչուհի Սօնա Կարապետ—բէգեան Բաղդասարեան վերափառ Հայրապետին խնդիր էր մատուցել՝ իւր ամուսին Միրզա Մովսիսեանի երկար ժամանակեայ առանց համբաւի տարակայութեան պատճառաւ, թոյլ տալ իրեն մնալ ի նոր ամուսնութիւն: Վերափառ Հայրապետի հրամանի համեմատ՝ Սինոդը անօրինեց պատուիրել Ղարաբաղի Կոնսիստորիային՝ Շուշեցի Միրզա Մովսիսեանի տարակայութեան մասին յայտարարել «Սինոդական Հրատարակութեան» մէջ, և հաշիւ խնդրատու Սօնա Բաղդասարեանին, և եթէ մինչև վեց ամիսը չհմացուի Միրզա Մովսիսեանի ուր լինելը, թոյլ տալ նորա կնոջը մնալ ի նոր ամուսնութիւն:

30 յուն. Ղարաբաղի Կոնսիստորիայի Թ. 2230 յայտարարութիւնը լսելով՝ Սինոդը վճռեց թոյլ տալ յիշեալ Կոնսիստորիային, օրինաւոր պայմանով Գանձասարի վանքի կալուածքում երևացող պղնձահանքը տալ հանքարան Էլիզվերովին շահագործելու համար:

30 յուն. Սինոդը վճռեց հրամայել Երևանի Կոնսիստորիային մահմեդական Իսրպօ Օսման օղլուն, իւր խնդրի համաձայն, ազատութեամբ ընդունել Հայոց եկեղեցու ծոցը:

4 փետր. Սինոդը լսելով Օշական գիւղի բնակիչների խնդիրը և Երևանի Կոնսիստորիայի Թ. 1741 յայտարարութիւնը այդ մասին, հրամայեց Օշականի Նիկիշ քահանայ Դէօրգեան—Դաբրիճեանին անորոշ ժամանակով ուզարկել Սևանի անապատը ապաշխարելու, որովհետև նա մինչև հիմա չի կրել Սինոդի որոշած պատիժը:

## ՅԱՌԱՋԻԿԱՆ ԸՐԱԲՈՒՏԻ 1898 Թ. ՓԵՏՐՈՒԻՐ.

### ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՍԱՆԴՈՒԽՏ,

ՆՐԱ ՆՈՐ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԸ:

Աշակունեաց բարեսէրիկ սերնդից ընձեռած այս մի հասիկ կոյսի համար կարդում ենք իրեն նուիրած մի կտոր շարականի մէջ. «Քեզ պարծի այսօր Սուրբ եկեղեցի, ով վկայուհի սուրբ Սանդուխտ, որ զաւիկնութեանն քո Թողեր զփառս, որ զՀայրականն քո Թողեր զպաշտօն». արդ՝ ինչ պաշտօն և փառքեր էին սոքա, որ Թողեց վկայուհիս, և ո՛ւմ համար: Թէ ու՞մ համար Թողեց նա այդ ամենը, այս ցոյց է տալիս մեզ նոյն գողտրիկ շարականը՝ բացատրելով. «Վասն Քրիստոսի». իսկ Թէ ի՛նչ բարեդրութիւն Փրկչի նրա Թողածները՝ որպիսի պաշտօններ և փառքեր էին, որոնցից սուրբ վկայուհուս կամաւորապէս հրաժարուելու պատճառաւ՝ ըստ շարականիս, մեր սուրբ Եկեղեցին ևս պարծանքով առաւ ու փնջից նրան իւր սրբոց հետ՝ տեսաւսիկ:

Ինչպէս շատ աշխարհներ, այսպէս ևս Հայաստան այն ինչ ծանրապէս խորդուբորդ էր կռապաշտութեան մէջ, նոյն այն միջոցին Թովմաս առաքեալի հրամանաւ սուրբն Թադէոս անցնելով Եդեսիա՝ աւետարանական խօսքերով «Զայնէր զամենեսեան յերկնաւոր ընթերան» (Սոփ. Ը. 11): Այս երկնաւոր ընթերցիքին դեռ ևս Փրկչի ժամանակից Եդեսիայի մէջ անձկով լսին սպասող մեր քաջն Աբգար, իմանալով առաքեալի գալուստը, այլև իմանալով որ նա անդիզ անդարմանի հիւանդներ է բժշկում՝ որովհետև այս ժամանակ անբուժելի չարով հիւանդ էր և ինքը, հրաւիրեաց ասում է իւր մօտ. «Նա է, վասն որոյ գրեցան Յիսուս», և անմիջապէս կանչում է իւր մօտ (Յոր. ԼԹ.): Սուրբն Թադէոս մանելով Աբգարի մօտ, ոչ միայն ողջի է հանում տակաւ ապրեալին՝ փարատելով նորա

դժնդակ ցաւերը, այլև իւր լուսաթաթախ աչքը վերացնելով այնտեղ՝ արքունիքում, արքայի և իւր թևի տակ ծուլարած արքայազուններին՝ իսկ դուրսը նրա բարեկնամ ձեռքի տակ գտնուած ժողովրդեան վերայ՝ օրհնում, ապա միրտում է բոլորին. և միրտութեան սուրբ Հոգին ամէնքի վրայից դեռ չցամաքած «Զուրս տաճարաց կոոյն փակեցին. և որ ի վերայ բադնին և սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամբ» (անդ):

Եւ այսպէս սուրբն Թադէոս այս դեռահասաց ժողովրդեան երեսի դէմ փակելով հեթանոսութեան տաճարների դռները, և իւր տեղ իբրև պահապան ձեռնադրելով ու դնելով Նգեսիայում մեռաքսադործ Ապդէին, ապա Աբգարի թղթով գալիս է Հայաստան նրա քեռորդի Սանատրուկի մօտ, ուր, թէպէտ Սանատրուկ և իւր ժողովրդից շատերը հաւատում և միրտում են առաքեալի ձեռքով, սակայն նոցա այս գործը երկար չէ տևում, այլ նորից կանթեղում է Հայաստանի մէջ կռապաշտութեան աղօտ լապտերը՝ Նգեսիայից զօրացնում է նրա լոյսը Աբգարի որդի անարժանն Անանէ, որ «յետ մահուան հօրն երաց զտաճարս կոոյն և կալաւ զպաշտօն հեթանոսութեանն» (Անդ. ԼԴ.), իսկ Հայաստանում՝ Սանատրուկ:

Թէ Սանատրուկի մօտ ո՛րչափ և պատուի էին հեթանոսութեան այդ անարգ պաշտամունքները, այդ երևում է, պատմութիւնից: Երբ նա՝ Աբգարի մահից յետոյ թագաւորում է Հայաստանում, նրա որդիքը կոտորելու ծարաւով այն ինչ հազարաւոնից և Արծրունեաց քաջերի հետ իջնում է Նգեսիա «Ծալ պատերազմ ընդ որդիսն Աբգարու, զի բոլորին աներեսցէ թագաւորութեան» (անդ. ԼԵ.), այդ ժամանակ Նգեսիայի ամբողջ ժողովուրդը՝ ի նկատի ունենալով անողոք արքայի քրիստոնէից դէմ յարուցած խիստ հալածանքները, ահաբեկուած սրտով պատրամ է ուզարկում և յայտնում, որ կապ նորա ձեռքը քաղաքը և իրենց թագաւորի դանձերը՝ որ և առին, միայն թէ «Զի մի՛ վրդովեսցէ զնոսա ի քրիստոնէութեան հաւատոց» (Անդ.):

Ահա այսչափ ահարկու և ջերմ կառմոլ էր Սանատրուկ. և նա այն ինչ՝ մի կողմից իւր անոսի պաշտամունքների եռանդից ընկած, իւր ահեղ սրով ամէն տեղ բորբոքում էր հեթանոսութեան հուրը, իսկ միւս կողմից իւր իշխանութեան ահով և սաստով գանձ և քաղաք կողոպտելով մեծացնում իւր թագաւորութեան շուքը, ահա ճիշդ այս չարաշուք ժամանակներն էր, որ նրա դուստր կոյսն Սանդուխտ իւր հօր ունեցածների ոչ մէկի և ոչ միւսի վերայ աչք չկիթեցնելով, «Թողեց իւր հայրական պաշտօնը, Թողեց իւր տիկնութեան փառքերը», և աշակերտելով սրբազան Թադէոս առաքեալին, այլ իմն անձկով և փափագով մօտեցաւ ու սիրեց՝ անվախճան և անկապտելի փառքեր խոստացող նրա աւետարանած Քրիստին: Բայց տարաճ Սանատրուկ իւր կամաց և խելքի ընդդէմ իւր աղջկայ այս համարձակ արարքը, արարք՝ որ «Քրիստմաժողով դիւցակատար պաշտօնէիցն պատմեցին» իրեն, և նա առ ամօթոյ հալւում մաշւում էր. ոչ բնաւ (Սոփ. Ը. 14): Ընդհակառակըն՝ թափելով իւր սրտից ամէնայն ծնօղական գութ և սէր, առաքեալի գլխի հետ գտաւ գլուխը անողորմ դահիճների մահաբեր սրին բաժին հանեց:

Այժմ անցնենք վկայուհւոյս հին և նոր շարականներին:

Մ՛այր Աթոռոյս Մ՛ատենադարանի 1588 համար կրող ոմն Սարգիս երէցի Շարականը, որի մասին շատ անգամ առիթ ենք ունեցել խօսելու,[1] ունի մի Ծօնացոյց, ուր հին շարականների յիշատակութեան հետ յիշատակւում են և նորերը, և մի Յանկ կամ Յուցակ, որի մէջ յիշատակւում են թէ հին ու նոր շարականները և թէ նոցա հեղինակները:[2]

Արդ՝ բանալով նրա Ծօնացոյցի 224ᵇ երեսը, կարդում ենք. «Գշ. Սանդըխտո կուսին. հց. ք՚. Աւրհնեմք զքեզ Ծէր. մ՛. ե՚. Քև պարծի. և թէ զիտես զնորերն ասա»:

Իսկ բանալով նրա 223ᵇ երեսի վերայ դրած Յանկը, կարդում ենք ի միջի այլոց. «ԶՅովակիմա և Աննաին. Որ նախիմայ իմաս-

1. Տես «Արարած» 1894. Մարս եւ 1897. Մարս.

2. Այս Յանկից զատ, ունիմ ձեռագիր Յանկեր, որոց միջոցաւ ներածին չափ կաշխատեմ տալ ընթերցողներին իւրաքանչիւր հեղինակի գործը:

աութեամբն, զՀրաշագեղ ծաղիկ մեծացուսցէն. զվերնական բարեաց բաշխմանն գործ. զԱւազ շաբաթին մեծացուսցէքն. և զհամբարձմանն. Յաչի Թագաւորդ մեր Քրիստոս. և զգեղարդեանն իսկ գու պարծանքդ պարծ. զՍուրբ Սանդխտո նորն. զառաքելոցն ի յանսահման ծովէն. զսրբոյն Սարգսի Ամենասուրբ Երրորդութեանն աղնիւ ծ., և զՀզօր ազքաւին զաւրեղ վինա. և այլ բազում՝. սուրբ վարդապետին Վարդանա է ասացեալ »:

Մենք կարգաւ յառաջ կրերենք նոյն և այլ ձեռագիր Շարականներից բազմարիւն վարդապետի այդ աշխատութիւնները, գնե. լով այստեղ բոլորի ճակատին սուրբ կոյսիս անուամբ ոգեզրածները:

---

«Շարական սրբոյն Սանդխտո. Աւրհնութիւն».

Թղ. 167ե.

Ա. **Անդրանիկ** կամայն հաւր կամակատար սուրբդ Սանդուխտ, հա(յ)աստանեաց մայր հաւատոյ, սանդուղք եղիր յերկրէ յերկինս. բարեխաւս լեր առ Քրիստոս, մայր կուսութեան ազգաց բազմաց:

Աւրիորդ հա(յ)ոց մեծաց, հարսն երկնաւոր անմահ բանին, զոր փեսաւէրն հրաւիրեաց՝ սուրբ առաքեալն Թաթէոս. բարեխաւս լեր":

Ծերանածին ճաղիկ երկրի, թագ Թորգոմեան Թագաւորաց. մարտիրոսական և կուսական պսակ առեր ի կոյս որդւոյն. բարեխաւս լեր":

Գ. **Անճառելի** սուրբ Ճառագայթ փառացն հաւր, ի խնդիր մոլորելոցս առաքեցեր զսուրբ զառաքեալն Թաթէոս. որով զքեզ միշտ աւրհնեմք Աստուած հարցն (մերոց):

Բանդ անեղ փեսայդ խաչեալ, որ ի մահու առագաստէ մեծարեցեր զսուրբն Սանդուխտ. որով զքեզ միշտ աւրհ":

Թագաւոր յաւիտենից Քրիստոս, թագդադարդ հարսն ընկալար ի Թորգոմեան տանէ յերկինս. որով զքեզ միշտ աւրհ":

Դ. **Բարձր** արարէք զնայ յաւիտեան:

Զհայրն փառաց բարեբանեալ՝ որ ընկալաւ հարսն իւր որդ[ւ]ոյն զերանելին սուրբ Սանդուխտ, աւրհնեցէք և բարձր արարէք զնայ յաւիտեան:

Զկուսածին բանն բարձրեալ՝ որ ի քոյրութիւն իւր հրաւիրեաց զկուսան սուրբն Սանդուխտ, բարձր արարէք զնայ յաւիտեան:

Ե. **Ի** լերանցն հիւսիսո[յ] վեմ հաւատո[յ] հաստեալ ձեռամբ Թադէոսի՝ եդեալ ի հիմն եկեղեցո[յ] սուրբդ Սանդուխտ. աղաւթիւք սորա Քրիստոս ողորմեա մեզ:

Ի հովիւս տրամութեան բուսեալ շուշան չնորհաց սուրբն Սանդուխտ. աղաւթիւք սորա Քրիստոս ողորմեա մեզ:

Ի խնկաբեր սուրբ արմատոյն Աբրահամու տունկ վերկաւեալ յուսոյ, սանդուղք հոգւոց հա[յ]աստանեայցս. աղաւթիւք սորա Քրիս":

Զ. **Արարչագործ** աստուած և հայր, որ զթացար յազգս հա[յ]ոց. և հայրական մեծ զթութեամբ զսուրբն Սանդուխտ եառուր մեզ. աղաւթիւք՝ սորա խնա[յ]եա ի մե[ղ]:

Միածին որդի և լոյս, որ կուսութեամբ եկեր յաշխարհս և նստեալոցս ի խաւարի զսուրբն Սանդուխտ եառուր մեզ. աղաւթիւք սորա":

Ճառագայթ հաւր և որդւոյ և Աշմարիտ Աստուած Հոգի, որ ծնար զուսար խմաստուն զերանելին սուրբն Սանդուխտ՝ զկուսութեամբ ծնօղն մեր. աղաւթիւք սորա":

Է. Զ. **Քև** պարծի այսաւր սուրբ եկեղեցի...[1]

1. Մանկտուիմն իրեր ևին շարական, գրուած է իրաս ձեռով. արդեն ծանօթ լինելու պատճառաւ չորիմ ամբողջը:

*Циркулярно.*

Съ Высочайшаго соизволенія Ея Величества Государыни Императрицы Александры Оеодоровны Комитетомъ Попечительства о Домахъ Трудолюбія и Работныхъ Домахъ предпринято съ Ноября мѣсяца 1897 г. изданіе ежемѣсячнаго журнала „Трудовая Помощь“ подъ редакціею Профессора В. Ф. Дерюжинскаго. Въ программу этого журнала входитъ обсужденіе вопросовъ, касающихся вообще благотворительности, разработка коихъ имѣетъ несомнѣнно огромное общественное значеніе.

Въ виду сего Главное Управленіе по дѣламъ печати, по порученію Г. Министра Внутреннихъ Дѣлъ, покорнѣйше проситъ редакторовъ періодическихъ изданій не отказать въ посильномъ содѣйствіи для возможно широкаго распространенія въ публикѣ свѣдѣній о названномъ журналѣ черезъ посредство редактируемыхъ ими изданій.

Подписалъ: Временно исполняющій обязанности Начальника Главнаго Управленія по дѣламъ печати
*М. Соловьевъ.*

---

ОТКРЫТА ПОДПИСКА

НА

# БОГОСЛОВСКІЙ ВѢСТНИКЪ

(СЕДЬМОЙ ГОДЪ ИЗДАНІЯ).

Въ 1898 году Московская Духовная Академія будетъ продолжать изданіе Богословскаго Вѣстника ежемѣсячно книжками отъ двѣнадцати до пятнадцати и болѣе листовъ, по прежней программѣ.

Въ журналѣ будутъ помѣщаться переводы святоотеческихъ твореній, изслѣдованія и статьи по наукамъ богословскимъ, философскимъ и историческимъ, обозрѣнія современныхъ событій изъ церковной жизни Россіи, православнаго Востока, странъ славянскихъ и западно европейскихъ, критика и библіографія. Въ приложеніяхъ къ журналу будутъ продолжаться печатаніемъ автобіографическія записки Высокопреосвященнаго Саввы, Архіеп. Тверскаго (періодъ его общественной и служебной дѣятельности по окончаніи академическаго курса) и протоколы засѣданій Совѣта Академіи.

Подписная цѣна на Богословскій Вѣстникъ за годъ: безъ пересылки *шесть рублей* съ пересылкою *семь рублей*, за границу *восемь рублей*.

Продолжается подписка на текущій *1897* годъ. Адресъ: Сергіевъ посадъ, Московской губерніи, редакція Богословскаго Вѣстника.

*Մեծապատիւ Տէր,*

*Քաջածանօթ է Ձեզ պէտքն որ կայ ապրիս մէջ Տեարց Ծորայրի և Նուպարի Փրանսահայ բառարաններէն վերջ մի ուրիշ աւելի ընդարձակ բառարանի՝ որ բացի լեզուին սովորական բառերէն, պարունակէ նաև գիտական բառերն, անծանօթ բոյսերու և կենդանեաց պատկերներ եւն. եւն.:*

*Այսպիսի ընդարձակ և փափուկ երկ մի բացի երկար տարիներու անխոնջ և ահագին աշխատութենէ և ընդարձակ համառօտենէ, կը պահանջէ նաև գրամական մեծամեծ զոհողութիւններ: Այս պատճառաւ և այսպիսի աշխատութեան մի ցայսօր ոչ ոք ձեռնարկած է:*

*Ապրիս սոյն պէտքն լրացնելու համար իւր համառօտեամբն և իւր երկասիրութիւններովը հանրածանօթ Բարձր· Ղեւոնդ Գուրեան Լուսինեան երկար ժամանակէ ի վեր ձեռնարկած է այսպիսի աշխատութեան մի· Պոլսէն յատուկ գրաշարներ բերուած են և աշխատութիւնն յառաջ կը տարուի աշխուժով: Ու այժմ պատիւ և ուրախութիւն ունիմ յայտնելու Ձեր Մեծապատուութեան թէ A. B. C. տառերն աւարտած են և մօտերս պիտի հրատարակուի սոյն առաջին հատորն՝ աւելի քան 650 նաստիւն մեծադիր էջերէ բաղկացեալ:*

*Ծորին Բարձր· Ղեւոնդ Գուրեան Լուսինեան, տպագրութիւնն վերջնականապէս աւարտելէ և աշխատութիւնն հրատարակ հանելէ առաջ փափաք յայտնեց ներկայացնել զոյն ազգիս համագոյն և արժանաւորագոյն անձնաւորութենանց՝ լսելու համար նոցա կարծիքն:*

*Ուստի ներեցէք ինձ, Մեծապատիւ Տէր, ներկայ նամակիս հետ ուղարկել Ձեզ մի քանի թերթ սոյն աշխատութենէն իրրև նմոյշ և խնդրել Ձեզմէ՝ Ծորին Բարձրութեան կողմանէ՝ որ համձիք երկտողիւ յայտնել Ձեր դիտողութիւններն:*

Ի Դիմաց Ծորին Բարձրութեան
*Քարտուղար*
Հ. ԱՃԱՌԵԱՆ

28 Դեկ. 1897
108, Avenue de Neuilly, 108
France Neuilly (Seine)

---

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.—Եր. 76 պէտք է կարդալ Մովսէս Կաղանկատացի, թէպէտ ուսերէն բնագրում՝ անշուշտ սխալմամբ, տպագրուած է Ուտիացի· Ս. Մ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՔ.

*(Շունուած ամիս)*

## ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ


ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ.

Ակնարկ մը հայ հնագիտութեան վրայ, 1։ Փաւստոս Բիւզանդացի և իւր պատմութեան խարդախողը, 5։ Ծօղուած և գիրք գրելու արուեստը, 10։ Բժիշկ Տոքթ. Սեներքերիմ Տէր Մինասեան, 15։ Եղնկայ «Եղծ ընդդէմ աղանդոց» գործոյն յօրինման ժամանակն ու վաւերականութիւնը, 22։

ԱՅԼԵՒԱՅԼՔ.

Նոր հրատարակութիւնք, 25։ 1. Պարսիկք իվիեննա։—2. «Եղբայրական օգնութիւն»։—3. Դր. Սերվիչեանի յիշատակին։—4. «Տիգրիս» շաբաթաթերթը։—5. Գրական մրցանակներ։—6. Պարսկական ազգեցութիւնը հին հայոց հեթանոսական կրօնի վրայ։—7. Վրացի—կաթոլիկների հարցը։ —8. «Բիւզանդիոնի» լուման։—9. «Շաւիղ» լրագիրը դադրած։—10. «Վիննայաբնակ մի հայ պարոնի» առ «Նոր-Դար» գրած թղթակցութեան պատասխանը, 29։

ՔՆՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 32։


## ԲԱԶՄԱՎԷՊ.


Կենդանաբան Աբրահամ քահ. Կ. Պոլսեցի 1։ Եղիշէի պատմ. շարադրութեան թուականը 9։ Ցիշատակ Մխիթարէ Փորթուգալ Փաշայի. 10։ Ալվազեան Յովհաննէս ծովանկարիչ 17։ Մտքի մշակ. նուէր մեծ հրապարակախօս Գրիգոր Արծրունուն 23։ Վանայ ծովակի կղզիները.—Աղթամար 29։ Քննութիւն Ասլանբէգի բարբառին 31։ Նմոյշ մի Սոկրատայ հին թարգմանութեան (հանուած երուսաղեմեան ընտիր օրինակէն) 35։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ԲԱԶՄԱՎԻՊԻ

1. Դարձեալ Մ. Խորենացի 42։ 2. Աշխարհարար լեզուի բարդ բառերը 52։

ՊԱՏԱՍԽԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ

2 Գրաբարի և աշխարհաբարի խնդիր (շար.) 42։ Ազգ Յորելինի 48։ Պատերազմ Ոսկարայ և Դերմիդայ (բնստղծ) 49։ Ակնարկ մի քաղաքական դիպաց վերայ 1897 տարւոյն 51։ Պարունակութիւն ազգային պարբերական թերթից 55։


## ՄՈՒՐՃ


1. Քաղաքացիութեան զգացմունքը, 5.—ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ԱՒԵՏԻՔ. 2. Վերժին (վէպ — վերջ), 9.—ՇԱՆԹ. 3. Գետի ափին (բանաստեղծութիւն), 51.—ՎԻԿՏՈՐ ՀՒԻԳՕԻՑ, ԾԱՏՈՒՐԵԱՆ. 4. Բանաստեղծութիւններ, 53.—ՀԱՑՆԷԻՑ ԱՏՈՄ ՇԱՀԷՆ. 5. Պատկերի առաջ (պատմուճաչք), 66.—ԱՐԱՄ-ՉԱՐԸԳ. 6. Երկու կրակի մէջ (պատմուճաչք), 67.—ԱՊԵԼԵԱՆ Ա. 7. Օտար գարուն։—Նա էլ...։—Անառիկ սրտերի պատմութիւն (բան.), 83.—ԴԵՄԻՐՃԵԱՆ Դ. 8. Էտղիւցիայի գաղափարը (շար.), 87.—ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՄԻՔԱՅԵԼ. 9. Ռուբէնիկիս (բանաստեղծ.), 97.—ՅԱԿՈԲԵԱՆ ՅԱԿՈԲ. 10. Գիւղական յաւեր (շար.), 99.—ԽՈՉԱՔԵՑՆԱԹԵԱՆՑ ՅՈՎՀԱՆ. 11. Տրամադրութ. ստրուկ (Լ. Տոլստոյ.) 107.—ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ՎԱՍԻԼ. 12. Ց. Տէր-Միրաքեանցի «Ծողովրդի ընթերցանութիւնը», 124.—ԱՂԲԱԼԵԱՆՑ Ն. 13. «Շառաւ», «Նապաստակ», «Անտառապահը» (քնն.), 129—ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ Ց. 14. Վեսելովսկոյ՝ „Стихотворные переводы", 131.—ԱՂԲԱԼԵԱՆ, Ն.. 15. Բալասանեանի՝ «Ուոստոմ և Սալման», 135.—ՍԵՊՈՒՀ. 16. Այբբենարանիս քննադատներին, 141.—ՏԷՐ ՄԻՐԱՔԵԱՆ Ց.. 17. Ժամանակ. Տեսութիւն։—Զոլայի դատի առիթով, 148. — ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ Ա.։ 18. Թատրոնի շուրջը, XVI, 153.—ՍԵԻԵԱՆ Հ.. 19. Ալ ու ձախ, 158.—ՄՈՏԱ. 20. Զանազան լուրեր, 164.—ԽՄԲ. Յայտարարութիւններ։


## ԼՈՒՄԱՅ


Պետրոս Ճանշեանց. (կենս.).—Մելքիսեդեկ եպս. Մուրատեան 1։ Անդրէաս երէց, (պատմ. վիպակ.) Մուրացան 60։ Յաստիկ (բանաստ.).—Ա. Կայծունի 145։ Մշոյ աշխարհ (տեղագր.) 147. Զփողը (պատկեր.).—Ստեփան Աւետիքեան Բանանցեցի 161։ Վրէժ.—Փօն-Վիլդենբուրխի, Թարգ. Մուշէ վարդապետ. 191։ Վարակիչ հիւանդութիւններ, գերմ. Թրգմ. բժշկ. Ս. Մայսուրեանց 237. Հրահանգ հայ քահանաներին.—Դիտ ա. իճ. Աղաւնեանց 252.

ՊԱՏՄԱԿԱՆ

Մեծամեծ կայսերաց թուղթ 261։ Բերդի մեծ եկեղեցի 265։ Նիւթեր գպրոցական պատմութեան 267։ Ս. Նազարեանի նամակներ 268։ Մի գաշն 271։

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Խ. Աբովեանի երկերը, Խ. Յարութիւնեան 273։

ԹՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Վարագայ այգեպանի այծը 321։ Սիրերգ 324։ Գաւառաբառեր 325։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Կանո՞նաւորկերիչ արհեստաւորաց.—Գ. ա. ք. Ա. 321։ Իբս ճառագայթների նոր գործադրութիւն, Ա. Ս. 334։ Երեք քարող, 335։ Ստացուած գրքեր, 337։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Մօրէի իշխան, Թարգմ. Վահան Ծ. վ. Բաստամեան 1—48։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

# 1898 ԱՐԱՐԱՏ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ԱՄՍԱԹԵՐԹ

*Բաժանորդագին է՝* {*Ռուսաստանում* 4 *ր.*
{*Արտասահմանում* 5 *ր.*

*Հասցէն* Св. Эчміадзинъ. Типографическому Комитету, по части журнала „Араратъ".
*Արտասահմանի համար.* Rédaction du Journal „Ararat". Etchmiadzine (Caucase)

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՔԱՀԱՆԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ
*Մ. ԳՒՅՕԻ*
(M. GUYAU)
ԹԱՐԳՄԱՆԵՑ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ
Ս. Մ.
*Էջ ԺԶ+388. 8⁰.*
*Գինն է* 60 *կոպ.*

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ
*ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՎԱՐՈՒՅՑ*
ՅՈՎՍԵՓԻ ՈՐԴՒՈՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀՆԴԿԱՑ·
ԳՐԵԱԼ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿՐԻՆԱՒՈՐԻ
ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ—ՄՈՎՍԷՍԵԱՆ
ՄԻԱԲԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.
*Էջ ՀԹ+176. 8⁰.*
*Գինն է* 70 *կոպ.*

*Հասցէն* Св. Эчміадзинъ, Типографическому Комитету.